ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ

ԻՋԵՎԱՆ – 2017

Խմբագրական խորհուրդ՝

Ս.Ա. Առաքելյան - «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնօրեն

Ա. Հ. Մակարյան - տնօրենի խորհրդական

Մ. Ա. Ճաղարյան -Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի վարիչ

Հ.Ս.Վանյան - Հասարակայնության հետ կապերի և մամուլի պատասխանատու

ԵՊՀ ԻՄ-ի գործունեությունը 2015-2016 ուստարում

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տպարան,

Իջևան, 2017, 110 էջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ....4

1. Մասնագիտությունների կրթական ծրագրեր....6

2. Որակի ապահովում....8

3. Ուսումնական գործընթաց....12

ա) Ընդունելություն....12

բ) Ուսումնական գործընթացի կազմակերպում....18

գ) Ուսանողական համակազմ և շրջանավարտներ....24

դ) Դասախոսական կազմ....29

ե) Գիտական գործունեություն, որակավորման բարձրացում և մասնագիտական վերապատրաստում....36

զ) Ուսումնառություն....43

է) Քննաշրջաններ....56

4. Համագործակցություն....63

5. Տեղեկատվական համակարգեր, տեղեկատվական ռեսուրսների զարգացում....71

6. Հասարակայնության հետ կապ....76

7. Ուսանողական կառույցներ, աշխատանք ուսանողների և շրջանավարտների հետ....78

ա) Ուսանողական խորհուրդ, Ուսանողական գիտական ընկերություն....78

բ) «Տավուշ» ռազմահայրենասիրական ակումբ....86

գ) Ուսանողական կյանք....90

8. Գիտական խորհուրդ....96

Վերջաբան....101

Հավելված 1. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի՝ 2011-2015թթ. զարգացման ռազմավարական ծրագրի կատարողականը....104

Հավելված 2. ԵՊՀ ԻՄ-ում նոր մասնագիտության և/կամ մասնագիտացման անհրաժեշտություն....105

ՆԱԽԱԲԱՆ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը Մայր բուհի անմիջական աջակցությամբ և հովանավորությամբ գրեթե քսանհինգ տարի պատվով ծավալում է իր գործունեությունը ՀՀ հյուսիսարևելյան տարածաշրջանում՝ նպաստելով հասարակության մտավոր, կրթական, տնտեսական, գիտական և մշակութային առաջընթացին, մատուցելով խորհրդատվական, փորձագիտական ծառայություններ, իր կազմակերպած գիտաժողովներում, ինտելեկտուալ խաղերում, բանավեճերում, ցուցահանդեսներում, գրական-գեղարվեստական նախաձեռնություններում, վերապատրաստման դասընթացներում ընդգրկելով ոչ միայն համալսարանականներին, այլև Տավուշի մարզի հասարակական-քաղաքական, հոգևոր-մշակութային, ռազմական ոլորտների ներկայացուցիչներին, մարզի բնակիչներին:

Լինելով մշտապես ռազմական իրավիճակում գտնվող մարզի միակ բարձրագույն կրթօջախը՝ նա հաջողությամբ իրականացնում է առաջին հերթին հայրենասեր, ապա բարձր որակավորում ունեցող մասնագետ ու պատասխանատու քաղաքացի պատրաստելու իր առաքելությունը: Գիտելիքների հետ ուսանողներին փոխանցվում են ազգային, բարոյական և համամարդկային արժեքներ՝ ազնիվ հայրենասիրություն ու մարդասիրություն, բարեկիրթ վարվեցողություն, դժվարությունները հաղթահարելու կամք ու լավատեսություն, սահմանամերձ գոտու վաղվա պաշտպանին՝ թշնամուն հերոսաբար դիմադրելու զորություն, խաղաղասեր զինվորին՝ ներողամտություն, հանդուրժողություն, քաղաքացիական ակտիվ դիրքորոշում, սկզբունքայնություն: Ըստ այդմ՝ մասնաճյուղի շրջանավարտներից շատերն այսօր հաջողությամբ աշխատում են հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, պետական և հանրային կառույցներում:

Մասնաճյուղը, կարևորելով իր դերը մարզի զարգացման գործում, մշտապես գնահատում է իր հնարավորությունները, կադրային ներուժը և կազմակերպում արդարացված ու նպատակային ուսումնառություն: Իր ուսումնագիտական և ազգանվեր աշխատանքի շնորհիվ մասնաճյուղն ունի բարձր հեղինակություն, ինչի շնորհիվ երիտասարդ տավուշցին իր տանն է՝ կապված իր հող ու ջրին, կատարում է իր ազգապաշտպան գործն ու դառնում որակյալ մասնագետ:

Մասնաճյուղն իր գործունեությունն իրականացնում է կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում՝ ղեկավարվելով ԵՊՀ գիտական խորհրդի և ռեկտորատի որոշումներով ու հանձնարարականներով, առաջնորդվելով բուհի զարգացման իր ռազմավարական պլանով: Դրանք մասնավորապես նպատակաուղղված են մասնաճյուղում բարձրորակ կրթության տրամադրմանը, կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխմանը, հանրային ներգրավմանն ու ծառայությունների զարգացմանը, կադրային ներուժի կատարելագործմանը և այլն:

2016թ. դեկտեմբերի 20-ին ԵՊՀ-ի Գիտխորհրդի տարեվերջյան ամփոփիչ նիստում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը ներկայացրեց մասնաճյուղի 2015-16 ուստարվա գործունեության և ԵՊՀ ԻՄ-ի՝ 2016-20թթ. ռազմավարական ծրագրի՝ 2016թ. կատարողականի մասին տարեվերջյան հաշվետվությունը:

Հաշվետու ուստարին **<u>առանձնանում է</u>** մասնաճյուղի զարգացման՝ **2011-15թթ. ռազմավարական ծրագրի իրականացման ավարտով** և նոր՝ **2016-20թթ. զարգացման ռազմավարական ծրագրի հաստատումով**, որը կազմվել է ԵՊՀ-ի ծրագրի հիման վրա: Իսկ 2011-15թթ. ռազմավարական ծրագրի իրականացման վերլուծությունը ցույց է տվել, որ ռազմավարական գործունեության հնգամյա ժամանակահատվածում մասնաճյուղը արդյունավետ իրականացրել է իր առջև դրված խնդիրները. այդ խնդիրների 67%-ն իրականացվել է ամբողջությամբ, 13%-ը՝ մասնակի, և կան խնդիրներ (20%), որոնց իրականացումը հաշվետու ժամանակահատվածում ներքին և արտաքին մի շարք գործոնների պատճառով հնարավոր չի եղել իրականացնել **/Հավելված 1/:** Չիրականացված գործողությունները կամ նրանց ավելի արդիական պահանջները ներառվել են նոր՝ 2016-20թթ. ռազմավարական ծրագրի մեջ:

ԵՊՀ ԻՄ-ի զարգացման՝ **2016-20թթ. ռազմավարական ծրագրի** 8 նպատակների իրականացման համար նախատեսված 124 գործողություններից **16-ը պետք է լիովին իրականացվեր 2016թ.-ին,** իսկ 84 գործողություններ պարունակում են շարունակական գործընթացներ, որոնք, ըստ իրենց իրականացման ժամկետների, ներառված են մասնաճյուղի, նրա ստորաբաժանումների միջնաժամկետ և երկարաժամկետ պլաններում:

Սույն հաշվետվությունը գրվել է վերոնշյալ (մասնաճյուղի՝ 2015-16 ուստարվա գործունեության) հաշվետվության հիման վրա և առավել հանգամանորեն ներկայացնում է մասնաճյուղի գործունեության հիմնական ուղղությունները 2015 -16 ուստարում:

1. Մասնագիտությունների կրթական ծրագրեր

Որպես սահմանամերձ ու մշտապես ռազմական իրավիճակում գտնվող մարզում բարձրագույն կրթություն իրականացնող ուսումնական հաստատություն՝ մասնաճյուղը կարևորում է իր դերը տարածաշրջանում և իրականացնում խիստ նպատակային ուսումնառություն: Դինամիկ կերպով հետևելով տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջարկին, վերլուծելով ընդունելության համակազմը, բավարարելով դիմորդների նախասիրությունները և մասնագիտությունների նկատմամբ նրանց ցուցաբերած հետաքրքրությունները՝ մասնաճյուղը պարբերաբար իրականացնում է մասնագիտությունների ճշգրտում, վերանայում, նոր մասնագիտություններով ընդունելության կազմակերպում՝ առկա և հեռակա ուսուցման համակարգերում: Մասնավորապես հեռակա ուսուցմամբ մասնաճյուղը մարզի սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցներն ապահովում է բարձրագույն կրթությամբ մանկավարժական կադրերով:

Մասնաճյուղն իր ռազմավարությամբ և գործունեությամբ կարևորում է աշխատաշուկայի պահանջներին համահունչ մասնագիտություններով ուսումնառության կազմակերպումը: Նրա գերակա նպատակն է տրամադրել աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան բարձրորակ կրթական ծրագրեր՝ միտված շրջանավարտների աշխատանքային գործունակության բարելավմանը և մասնաճյուղում ստացած կրթությունից շրջանավարտների բավարվածության մակարդակի բարձրացմանը: ԵՊՀ ԻՄ-ի մասնագիտությունների հիմնական ուղղվածությունը մանկավարժական է. այն մարզի սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցներն ապահովում է բարձրագույն կրթությամբ մանկավարժական կադրերով: Արձագանքելով աշխատաշուկայի պահանջներին՝ մասնաճյուղը պարբերաբար համալրում է մասնագիտությունների ցանկն ավելի ժամանակակից մասնագիտություններով: Այժմ մասնաճյուղում ներդրված են <u>**կրթական վերջնարդյունքներով ձևակերպված**</u> 15 կրթական ծրագրեր: Արդարացված ներդրում եղավ առկա և հեռակա ուսուցմամբ **«Քարտեզագրություն և կադաստրային գործ», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա»** կրթական ծրագրերով ուսումնառության կազմակերպումը:

2015թ. սեպտեմբերի 24-ին կայացած ԵՊՀ գիտխորհրդի՝ 2015-16 ուստարվա առաջին նիստում քննարկվել է մասնաճյուղի՝ 2016-2017 ուստարվա ընդունելության մասնագիտությունների ցանկը: Տարածաշրջանում մասնագետների պահանջարկով պայմանավորված՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ընդունելության մասնագիտությունների ցանկում կատարվել են որոշ փոփոխություններ: Մասնավորապես՝ ցանկից հանվել են «Հոգեբանություն» և «Կիրառական արվեստ» մասնագիտությունները, առաջարկվել են նոր մասնագիտություններ: Հաշվի առնելով մարզում տարրական դասարանների ուսուցիչների, սոցիալական աշխատողների և դիզայներների մեծ պահանջարկը **/Հավելված 2/**՝ առաջարկվել է ընդունելություն կազմակերպել «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Սոցիալական աշխատանք», «Համակարգչային գրաֆիկա» կրթական ծրագրերով, իսկ «Սերվիս» մասնագիտությունը փոխարինվել է «Զբոսաշրջության կառավարում»-ով:

Նշենք, որ մասնաճյուղը 2016թ. իրականացրել է ընդունելություն **«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»** և **«Համակարգչային գրաֆիկա»** կրթական ծրագրերով **/Աղյուսակ 1/**, իսկ 2017-18 ուստարում կիրականացվի ընդունելություն նաև **«Սոցիալական աշխատանք», «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն»** կրթական ծրագրերով՝ ընդլայնելով դիմորդների մասնագիտական կողմնորոշման հնարավորությունները:

Աղյուսակ 1. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի առկա ուսուցման 2016թ. ընդունելության մասնագիտությունների և քննությունների ցանկ

Ծածկագիր	Մասնագիտություն	Կրթական ծրագիր	Ընդունելության քննություններ					Անվճար		Վճարովի (ԱՏ)	Ուսման վարձը (հզ. դրամ)
			մրցութային			ոչ մրցութային		Ընդամենը	այդ թվում ԲՀ		
1		2	3	4	5	6	7	8	9	10	11
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**										
011301.01.6		Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	ՀԼԳ(գ)	Մ(գ)**				4	1	35	320000
021201.00.6	**Դիզայն**										
021201.01.6		Դիզայն	ԳՃն	Գն	Կոմպ.	ՀԼԳ(գ)*		3	–	25	300000
021201.04.6		Համակարգչային գրաֆիկա	ԳՃն	Գն	Կոմպ.	ՀԼԳ(գ)*		2	–	30	300000
022201.00.6	**Պատմություն**										
022201.01.6		Պատմություն	ՀԺՊ(գ)	ԸՊ(գ) *կամ* ՕտԼ(գ)	ՀԼԳ(գ)			4	1	40	320000
023101.00.6	**Հայոց լեզու և գրականություն**										
023101.01.6		Հայոց լեզու և գրականություն	ՀԼԳ(բ)	ՀԼԳ(գ)		ՀԺՊ(գ)* *կամ* ՕտԼ(գ)*		3	–	30	300000
023102.00.6	**Օտար լեզու և գրականություն**										
023102.02.6		Անգլերեն լեզու և գրականություն	ԱնգԼ(բ)	ԱնգԼ(գ)	ՀԼԳ(գ)			5	1	30	380000
023102.04.6		Ֆրանսերեն լեզու և գրականություն	ՖրԼ(բ)	ՖրԼ(գ)	ՀԼԳ(գ)			3	–	15	350000
031101.00.6	**Տնտեսագիտություն**										
031101.01.6		Տնտեսագիտություն	Մ(գ)	ՀԼԳ(գ)	ՕտԼ(գ)			5	1	45	400000
031301.00.6	**Հոգեբանություն**										
031301.01.6		Հոգեբանություն	ՀԼԳ(գ)	ՕտԼ(գ)	Կ(գ)**			2	–	31	350000
054201.00.6	**Աշխարհագրություն**										
054201.02.6		Քարտեզագրություն և կադաստրային գործ	Ա(գ) *կամ* Մ(գ)	Մ(գ)** *կամ* Ա(գ)**		ՀԼԳ(գ)*		3	–	30	320000
061101.00.6	**Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)**										
061101.02.6		Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	Մ(գ)	ԱնգԼ(գ)** *կամ* Ֆ(գ)**		ՀԼԳ(գ)*		4	1	26	350000
101801.00.6	**Սերվիս**										
101801.01.6		Սերվիս	ՀԼԳ(գ)	ՕտԼ(գ)	Ա(գ)** *կամ* ՀԺՊ(գ)**			3	–	27	320000

ՇԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

*Փոխանցվում է միջնակարգ կրթության ատեստատից կամ համապատասխան ավարտական փաստաթղթից:

** Նշված առարկաների համար որպես մրցութային գնահատական, կարող են դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների ավարտական քննությունների կամ տարեկան գնահատականը:

Իր կրթական ծրագրերով մասնաճյուղը տարածաշրջանի մի շարք ոլորտներ (հասարակական և բնական գիտություններ, կրթություն և մանկավարժություն, մշակույթ և արվեստ) ապահովում է համապատասխան որակավորում ունեցող, գիտելիքներով ու անհրաժեշտ կարողություններով օժտված, մասնագիտական խնդիրներ լուծող և համալիր կոմպետենցիաների տիրապետող մրցունակ մասնագետներով:

2. Որակի ապահովում

Որակյալ ուսումնառության ապահովման ռազմավարական խնդրի իրականացման գրավականը մասնաճյուղում դեռևս 2009թ.-ից կայուն ներդրված **որակի ներքին ապահովման համակարգն է:** ԵՊՀ ԻՄ-ի որակի ներքին ապահովման կազմակերպական կառուցվածքին համապատասխան՝ այդ գործընթացները կանոնակարգվում և իրականացվում են Մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժնի կողմից՝ Որակի կառավարման հանձնաժողովի մշտական աջակցությամբ և խորհրդատվությամբ:



Հանձնաժողովի լիազոր ներկայացուցիչներն ակտիվ համագործակցում են կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների, աշխատակիցների, ուսանողական կառույցների հետ, աջակցում են ստորաբաժանումներում որակի ներքին գործընթացների արդյունավետ ներդրմանն ու իրականացմանը: Այդ համակարգի գործառույթների շրջանակներում իրականացվում է որակի շարունակական բարելավմանը միտված փաստաթղթային հիմքերի համալրում, վերանայում և ներդնում: Միայն վերջին 3 տարիների ընթացքում ներդրվել են **5 քաղաքականություններ, 13 կանոնակարգեր, մի շարք ուղեցույցներ ու ձևաչափեր** և այլն:

2015-16 ուստարում որակի ներքին ապահովման գործընթացների շրջանակներում մասնաճյուղում կատարվել է որակի շարունակական բարելավմանը միտված մի շարք փաստաթղթերի համալրում, վերանայում և ներդնում, իրականացվել են խորհրդատվական մեծածավալ աշխատանքներ, անց են կացվել մի շարք հարցումներ, կատարվել են համալիր վերլուծություններ:

Գերակա նպատակ ունենալով բարձրորակ կրթության տրամադրումը և ապագա մրցունակ մասնագետների պատրաստումը՝ մասնաճյուղում իրականացվում է կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային համապատասխանեցում ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի և բարձրագույն կրթության եվրոպական տարածքի պահանջներին: Այդ նպատակի լավագույնս իրականացման ճանապարհին հաշվետու ուստարվա կարևոր ձեռքբերումներից է բակալավրի **կրթական ծրագրի ղեկավարի «ինստիտուտ»-ի**՝ որպես մասնագիտական կրթության կառավարման յուրահատուկ մոդելի ստեղծումն ու նրա կայուն ներդնումը, որի միջոցով մասնաճյուղն ակնկալում է ստեղծել ինքնազարգացող մանկավարժական միջավայր:

2016թ. մարտին մշակվել են կրթական ծրագրի պատասխանատուների գործառույթները, **ապրիլին** տնօրենի հրամանով նշանակվել են ծրագրերի պատասխանատուներ: Նրանց խնդիրն է իրականացնել մասնագիտության պահանջվածության, նրա իրականացման անհրաժեշտ նախադրյալների և դիմորդների անհրաժեշտ քանակի առկայության հիմնավորում, մասնագիտության կրթական ծրագրի արդյունավետ ու որակյալ իրականացման ապահովում, կրթական ծրագրով ձեռք բերված արդյունքների վերլուծում ու գնահատում և իր շրջանավարտների ապագա կարիերայի նկատմամբ հոգածություն: Գործող կրթական ծրագրերի պատասխանատուների ղեկավարությամբ կազմվել են մասնագիտական աշխատանքային խմբեր, որոնցում

ներգրավված են մասնագիտության ուղղությամբ բազային կրթություն ունեցող բարձրակարգ և փորձառու մասնագետներ, գործատուներ, շրջանավարտներ և բարձր կուրսերի ուսանողներ:

Ուրախությամբ պետք է նշել, որ այդ գործընթացն արդեն տվել է իր առաջին պտուղները: Կրթական ծրագրերի վերանայման շրջանակներում, համաձայն 2016թ. ռազմավարական պլանավորման, բոլոր ծրագրերի պատասխանատուների կողմից ուսումնասիրվել են ՈԱՇ-ի պահանջները, ծրագրերի կրթական վերջնարդյունքները, կազմակերպվել են դրանց քննարկումներ դասախոսների և չորրորդ կուրսի ուսանողների հետ: Պլանավորել են իրականացնել ծրագրի և նրա բաղկացուցիչ մասը կազմող դասընթացների կրթական վերջնարդյունքների համապատասխանեցման, կրթական վերջնարդյունքների ձևավորման համար ընտրված դասավանդման և ուսումնառության մեթոդների, դրանց գնահատման ժամանակակից և արժանահավատ մեթոդների վերանայման ու լավագույն փորձի ներդրման գործընթացներ:

Ըստ ռազմավարական պլանավորման՝ 2017թ. ապրիլին կունենանք որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական հենանիշերին համապատասխան վերամշակված կրթական ծրագրեր: Չորս նոր մասնագիտությունների (**«Սոցիալական աշխատանք», «Ֆինանսներ», «Զբոսաշրջություն» և «Դիզայն»**) համար կազմված աշխատանքային խմբերը 2017թ. մայիսին հաստատման կներկայացնեն դրանց կրթական ծրագրերը:

Հավատարմագրման պետական չափանիշներին համապատասխան՝ 2011թ.-ից մասնաճյուղը պարբերաբար իրականացնում է իր կրթական գործունեության ինքնագնահատում, և **2015թ.-ին՝ 3-րդ անգամ,** ՄԿՈԱ բաժինն ըստ չափանիշների կազմված աշխատանքային խմբերի հետ իրականացրել է **մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծություն**, կազմել մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնագնահատման նոր զեկույցը: Բոլոր գործընթացներում ներգրավված են եղել ինչպես ուսանողներ, այնպես էլ արտաքին շահակիցներ, պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ և այլ շահագրգիռ անձինք:



2015թ. սեպտեմբերի 17-ին Երևանում ներկայացվել են ուսանողների տեղեկացվածության աստիճանն ու վերաբերմունքը Հայաստանում իրականացվող կրթական բարեփոխումների վերաբերյալ ԵԱՀԿ աջակցությամբ իրականացված ուսումնասիրության արդյունքներն ու առաջարկությունները: Հետազոտությունն իրականացվել է 1723 ուսանողների շրջանում՝ Երևանի և մարզերի 37 պետական (այդ թվում՝ **ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի**), մասնավոր և միջկառավարական բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնակցությամբ: Ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել է, որ Բոլոնիայի բարեփոխումները Հայաստանում իրականացվում են բավարար մակարդակի վրա: Ուսանողների 57%-ը կարծում է, որ կրթական համակարգում իրականացվել են խորը և

էական փոփոխություններ: Սակայն ուսանողների մեծ մասը չի կարող հստակ բացատրել, թե ինչ են բոլոնյան բարեփոխումները և դրանք կապում են գնահատման նոր համակարգի, բարձրագույն կրթության որակի ապահովման կամ ուսանողակենտրոն ուսուցման հետ: Ըստ այդ ուսումնասիրությունների՝ **մարզերի ուսանողներն** ավելի գոհ են բարեփոխումների արդյունավետությունից, քան մայրաքաղաքի ուսանողները, ինչը կարող է պայմանավորված լինել որակյալ կրթություն ստանալու պահանջների տարբերությամբ: Ուսանողությունը՝ որպես հասարակության ամենաակտիվ խավ, պետք է մասնակցի իր կրթության որակի գնահատմանը և ներկայացնի իր տեսակետը՝ գալիք սերունդների համար առավել որակյալ կրթություն ապահովելու համար: Հետևաբար պետք է ակտիվացնել նրանց մասնակցությունը իրականացվող բարեփոխումների գործընթացներում:

Ուսանողներին որակի գործընթացներում ակտիվ ներգրավելու և նրանց միջոցով կրթական խնդիրներն ուղիղ ճանապարհով ու ավելի հստակ վերհանելու համար **2016թ. մարտից** ՄԿՈԱ բաժնի կողմից ստեղծվել է բանավեճի ակումբ, իսկ **հոկտեմբերից**՝ կրթական ծրագրերի ուսանողական **11 հանձնաժողովներ**: Ակումբի և հանձնաժողովների նպատակն է ազատ և անկաշկանդ մթնոլորտում քննարկել ուսանողներին հուզող տարբեր հիմնահարցեր, հետամուտ լինել ուսանողական հարցումների արդյունքներին, ապահովել կրթական ծրագրերի որակի վերաբերյալ հետադարձ կապը: Պարբերաբար իրականացվում են հանդիպում-քննարկումներ ֆոկուս-խմբերի հետ և այլն: Հանդիպումների ժամանակ Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի մասնագետները ներկայացնում են ընթացիկ խնդիրները: Հիմնական շեշտը դրվում է կրթական ծրագրերի բովանդակության արդիականության, կրթական վերջնարդյունքների հասանելիության, ուսումնառության ավարտին ապագա մասնագետի մրցունակության խնդիրների վրա: Ակնհայտ է, որ նման քննարկումներից ձեռք բերվող էական, արժեքավոր առաջարկություններն ու լուծումներն իրենց արձագանքը կգտնեն համապատասխան կրթական ծրագրերում և այլ ուսումնական գործընթացներում:

Մասնաճյուղը մշտապես ակտիվ մասնակցում է մասնագիտական կրթության որակի ապահովման ուղղությամբ հանրապետությունում տեղի ունեցող գործընթացներին՝ դասընթացների, գիտաժողովների, և այլն՝ նպատակ ունենալով իրազեկված լինել մասնագիտական կրթության որակի ապահովման ներկայիս զարգացումներին ու ձեռքբերումներին Հայաստանում և արտերկրում, ձեռք բերել լավագույն փորձ և նպաստել դրա ներդրմանը մասնաճյուղում:

2016թ. հունվարի 21-22-ին <u>մասնաճյուղի երկու աշխատակիցներ մասնակցել են</u> Հայաստանի ամերիկյան համալսարանում տեղի ունեցած՝ «Մասնագիտական կրթության որակի ապահովում. որքանով է ուսուցումն արդյունավետ» թեմայով որակի ապահովման երրորդ ֆորումին, որը կազմակերպվել էր Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի կողմից: Խորհրդաժողովի ընթացքում զեկուցումներով ու քննարկումներով հանդես են եկել հեղինակավոր

դասախոսներ և կրթության կառավարման մասնագետներ Հայաստանից, Վրաստանից և եվրոպական երկրներից: Շահակիցների հետ տեղի են ունեցել «Ուսուցումն արդյունավետ է, եթե…», «Ինչպե՞ս են շահակիցները ներգրավված կրթական ծրագրերի մշակմանը» և «Ուսուցման արդյունավետության բարձրացման ուղիները որակի ներքին և արտաքին ապահովման տեսակետից. պրակտիկ փորձ» թեմաներով ընդհանուր քննարկումներ: Նշված գործընթացներում ձեռք բերված փորձը կիրառվում է մասնաճյուղում կազմակերպված համապատասխան դասընթացների և թեմատիկ քննարկումների ժամանակ:



Արդեն հինգ տարի է, ինչ մասնաճյուղը գնահատում է իր ձեռքբերումները՝ հանրությանն ի ցույց դնելով իր **գործունեության գնահատման առանցքային ցուցանիշները (ԳԱՑ)** և դրանց վերլուծությունը: Հաշվետու ուստարում նույնպես համալրվել և վերլուծվել են այդ ցուցանիշները, **2011-16թթ. համար** (ԳԱՑ 2011-16) կազմվել է համապատասխան հաշվետվություն և հրապարակվել: Այս վերլուծության նպատակը ԵՊՀ ԻՄ-ի գործունեության արդյունավետության և կատարողականի գնահատումն է՝ գործունեության առանցքային ցուցանիշների սահմանված լրակազմի օգնությամբ: Ներկայացված են նրա գործունեության հիմնական ոլորտների առանցքային ցուցանիշները վերջին հինգ տարիների համար, վեր է հանված մասնաճյուղի ձեռքբերումներն ու թույլ կողմերը՝ նրա հետագա զարգացումն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով: Վերլուծությունը նպաստում է ԵՊՀ ԻՄ-ի որակի ինքնագնահատման կարողությունների հզորացմանը: Այն հասցեագրվում է բոլոր այն կառույցներին, որոնց գործունեությունն առնչվում է ԵՊՀ ԻՄ-ի կառավարման և պլանավորման գործընթացներին:

Որակի ներքին ապահովման կարևորագույն գործընթացներից են ՄԿՈԱ բաժնի կողմից պարբերաբար իրականացվող բազմաբնույթ խորհրդատվական աշխատանքները, մասնաճյուղում ուսումնառության կազմակերպման, կրթական ծրագրերի գնահատման և կրթության որակի վերաբերյալ **ներքին և արտաքին շահակիցների կարծիքների ուսումնասիրությունները:** Հաշվետու ուստարում իրականացվել են պլանավորված **6 հարցումներ**, կատարվել են դրանց արդյունքների համալիր վերլուծություններ, կազմվել են հաշվետվություններ, արտաքին ու ներքին շահակիցների առաջարկությունների և կարծիքների փաթեթ, կատարվել է դրանց վերլուծություն, իրականացվել է **2011-15թթ.** ժամանակահատվածում ԵՊՀ ԻՄ-ում պրոֆեսորադասախոսական կազմի գիտական գործունեության վերլուծություն, ապահովվել է դրանց հասանելիությունն ու հրապարակայնությունը:

2016-20թթ. ռազմավարական պլանավորման ժամանակացույցին ընդառաջ՝ ՄԿՈԱ բաժինը վերանայում է գործող հարցաշարերը, մշակում դրանց **<u>առցանց իրականացման սխեման</u>:** Պլանավորվել է **2017թ. հունվարից** սկսել դրանց կիրակումը: ԵՊՀ ԻՄ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների, ինչպես նաև ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցումների **<u>առցանց եղանակով իրականացման համար</u>** ակնկալում ենք ԵՊՀ-ի աջակցությունը՝ նույն հարցումների իրականացման նրանց հնարավորություններից օգտվելու համար:

3. Ուսումնական գործընթաց

ա) Ընդունելություն

Կրթական ծրագրի անհրաժեշտ պայմանը նրա **դիմորդների առկայությունն է**, հետևաբար մասնաճյուղն իր ռազմավարական պլանավորմամբ նպատակ ունի ընդլայնել ընդունելության պրոֆիլը և նրանց չափաքանակները համապատասխանեցնել աշխատաշուկայի ու դիմորդների համադրված կարիքներին:

Հարկ է փաստել, որ տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթական ծրագրեր իրականացնելու հետ մեկտեղ ապագա դիմորդներին հատկապես գրավում է ուսման համեմատաբար մատչելի վարձաչափերի առկայությունը մասնաճյուղում, իսկ ընդունելության մարքեթինգային գործընթացների արդյունավետ իրականացումը պայմանավորված է մասնաճյուղի՝ պարբերաբար ընդլայնվող ակտիվ գովազդարշավով:

Քանի որ մասնաճյուղի **դիմորդների 90%-ից** ավելին կազմում են **Տավուշի մարզի** դպրոցների շրջանավարտները, ապա ընդունելության համակազմի պահպանման և ընդլայնման համար մասնաճյուղը շարունակաբար ակտիվացնում է համագործակցությունը մարզի միջնակարգ և ավագ դպրոցների հետ:

Ցուցանիշ 1.1 (ԳԱՑ)	2015/16
Դիմորդների թիվը	405
Բակալավրիատ (առկա)	**208**
Հումանիտար գիտություններ	93
Բնական գիտություններ	49
Տնտեսագիտության	45
Կիրառական արվեստ	21
Բակալավրիատ (հեռակա)	**197**



Ցուցանիշ 1.3 (ԳԱՑ)	2015-16 ուստարի	
Երևան	5	1,2%
Կոտայք	3	0,7%
Արմավիր	0	0,0%
Գեղարքունիք	5	1,2%
Շիրակ	0	0,0%
Արարատ	2	0,5%
Լոռի	4	1,0%
Արագածոտն	0	0,0%
Սյունիք	1	0,2%
Տավուշ	**375**	**92,6%**
Վայոց ձոր	0	0,0%
Այլ երկրներից	10	2,5%
Ընդամենը	**405**	**100,0%**

Մասնաճյուղն ունի պայմանագրեր մարզի ավագ դպրոցների ու միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների՝ քոլեջների հետ և հստակ կազմված ժամանակացույցով **մարզի 4 ավագ և 50 հիմնական դպրոցներում**, ինչպես նաև **Իջևանի և Բերդի** վարժարաններում հաշվետու ուստարում կազմակերպել է հանդիպումներ շուրջ **1000** աշակերտների հետ: Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներն այցելել են մարզի դպրոցներ, ակնարկային դասախոսություններ են կարդացել աշակերտների համար, տվել են անհրաժեշտ խորհրդատվություն, իսկ ուսումնական տարվա **հոկտեմբեր և մարտ ամիսներին** կազմակերպվել են բաց դռների օրեր:

Աշակերտների մասնագիտական կողմնորոշման գործընթացն արդյունավետ կազմակերպում է ԵՊՀ ԻՄ-ի ուսումնամեթոդական վարչության մինչհամալսարանական կրթության և պրակտիկայի կազմակերպման (ՄԿՊԿ) բաժինը, որն ամբողջ ուստարվա

ընթացքում կազմակերպում է նպատակային այցեր և դասեր, հանդիպումներ մասնաճյուղի տնօրենության, պրոֆեսորադասախոսական կազմի հետ: Այդ հանդիպումները նպատակ ունեն մասնագիտական կողմնորոշման հարցում աջակցել աշակերտներին, տալ տեղեկատվություն մասնաճյուղի ֆակուլտետների, ամբիոնների, բուհում գործող մասնագիտությունների վերաբերյալ, մասնաճյուղում նախատեսվող նոր կրթական ծրագրերի, միասնական քննությունների առանձնահատկությունների մասին, ամրապնդել դպրոց-համալսարան կապը:

Այդ հանդիպումների ժամանակ քննարկվել են մասնաճյուղում գործող յուրաքանչյուր մասնագիտության համար ընդունելության քննությունների, շտեմարանների, օլիմպիադաների անցկացման և բաց դռների օրերի հետ կապված մի շարք հարցեր: Աշակերտները լիարժեք պատասխաններ են ստացել իրենց հետաքրքրող բոլոր հարցերի՝ կրթական գործընթացի կազմակերպման, ուսման վարձաչափերի, հատկապես սահմանամերձ բնակավայրերի ուսանողների համար նախատեսված զեղչերի ու արտոնությունների, ընդունելության քննությունների՝ մեկ և երկու աստղանիշով առարկաների ընտրության վերաբերյալ: Մասնավորապես նրանց ներկայացվել է, որ 2016-2017 ուստարվա համար ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կկատարվեն օտար լեզուների հետ կապված փոփոխություններ («Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության ուսանողները հավասար ժամաքանակով կանցնեն ֆրանսերեն և հակառակը), ինչի արդյունքում մասնաճյուղը կտա **2 օտար լեզվի համահավասար իմացությամբ շրջանավարտներ**: Նշվել է, որ 2016թ. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը, գործող մասնագիտություններից բացի, ընդունելություն է իրականացնելու 2 նոր՝ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Համակարգչային գրաֆիկա» մասնագիտություններով:

2015թ. սեպտեմբերի 25-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում տեղի է ունեցել մասնաճյուղի տնօրենի, աշխատակիցների, ուսանողների **<u>հանդիպումը Իջևանի ավագ դպրոցի</u>** մի խումբ աշակերտների, դպրոցի տնօրենի և ուսուցիչների հետ:

2015թ. հոկտեմբերի 21-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կայացել է **<u>հանդիպում Դիլիջանի միջազգային դպրոցի (Dilijan International School) սաների հետ</u>**: Հանդիպումը կազմակերպվել էր Դիլիջանի միջազգային դպրոցի նախաձեռնությամբ և նպատակ ուներ աշխարհի 12 երկրներից դպրոցում ուսանող աշակերտներին մոտիկից, տեղում

ծանոթացնելու երկրի մշակույթին, պատմությանն ու մարդկանց: Աշակերտներին ընդհանուր գծերով ներկայացվել են ՀՀ հյուսիսարևելյան տարածաշրջանում կրթական և գիտամշակութային գործունեություն իրականացնող ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի առաքելությունը, հիմնարար արժեքներն ու ռազմավարական նպատակները: Մասնաճյուղում գործող ֆակուլտետների ու մասնագիտությունների, ընդունելության կարգի, այլ երկրներից մասնաճյուղում ուսանելու հնարավորության վերաբերյալ աշակերտների հարցերին տրվել են սպառիչ պատասխաններ, դպրոց-համալսարան կապը սերտացնելու նպատակով առաջարկվել է հետագայում անգլերեն լեզվով կազմակերպել կլոր սեղան-քննարկում՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի և Դիլիջանի միջազգային դպրոցի սաների մասնակցությամբ:

2015թ. սեպտեմբերի 20-ից հոկտեմբերի 7-ը հանդիպումներ են կազմակերպվել **Տավուշի մարզի մի շարք դպրոցներում** (Իջևանի և Դիլիջանի ավագ դպրոցներ, Իջևանի վարժարան, Վազաշենի, Այգեհովտի, Կայանի, Ազատամուտի, Խաշթառակի, Աչաջրի, Սարիգյուղի, Սևքարի, Ն.Ծաղկավանի, Գանձաքարի, Գետահովտի, Գոշի, Հաղարծնի, Թեղուտի միջնակարգ դպրոցներ):

2015թ. դեկտեմբերի 9-19-ը հանդիպումներ են տեղի ունեցել մարզի՝ շուրջ երեք տասնյակ միջնակարգ և ավագ դպրոցներում:

2016թ. մարտ ամսվա ընթացքում հանդիպումներ են կազմակերպվել **Բերդի տարածաշրջանի մի շարք ուսումնական հաստատություններում** (Բերդի ավագ դպրոց, Բերդի վարժարան, Բերդի պետական քոլեջ, Վերին Ծաղկավան, Պառավաքար, Ներքին և Վերին Կարմիրաղբյուր, Տավուշ, Չինչին, Չորաթան, Մովսեսգեղ, Վարագավան գյուղերի միջնակարգ դպրոցներ): Բերդի պետական քոլեջի շրջանավարտների հետ քննարկվել են շարունակական կրթության հնարավորություններն ու առանձնահատկությունները: Ընդգծվել է, որ բարձր առաջադիմությամբ քոլեջն ավարտած շրջանավարտները կարող են մասնաճյուղում հեռակա ուսուցմամբ կրթությունը շարունակել 2-րդ կուրսից:

2016թ. ապրիլի 21-ին մասնաճյուղի «Տավուշ» ռազմահայրենասիրական ակումբը հանդիպում է կազմակերպել **Իջևանի ավագ դպրոցի աշակերտների հետ**: Հանդիպման

նպատակն էր աշակերտների հետ հայրենասիրության թեմայով քննարկում իրականացնելը և կապը բուհի հետ ամրապնդելը: Քննարկվել են երիտասարդների մեջ հայրենասիրական ոգու բարձրացմանը, Հայոց ցեղասպանությանը, 20-ական թվականներին ծավալված «Նեմեսիս» գործողությանը, «Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ» (անգլ.՝ Armenian Secret Army for the Liberation of Armenia /ASALA/) կազմակերպության հիմնադրմանը և գործունեությանը վերաբերող մի շարք հարցեր: Ակումբականները ոչ միայն ներկայացրել են պատմական փաստեր, այլև իրենց ասելիքը համեմել են մեջբերումներով՝ քաղված գրական ստեղծագործություններից, գերմանացի դիվանագետ Լ.Էյնշտեյնի, գերմանացի գիտնական Յ.Մարկվարտի, ֆրանսիացի գրողներ Ա.Ֆրանսի և Ժ.Մորգանի խոսքերից: Այս հանդիպումն աշակերտների համար ուսանողական հետաքրքիր նախաձեռնության օրինակ է և իր դրական ազդեցությունը կունենա աշակերտների կողմնորոշման գործում:

2016թ. մայիսի 17-ին մարզի **Կայանի Հինդլյանի անվան դպրոցի** բարձր դասարանի աշակերտները **ճանաչողական այցով** հյուրընկալվել են մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետում: Աշակերտները ծանոթացել են համակարգչից օգտվելու հմտությունների ծրագրերին, տեղում գրվել են համակարգչային ծրագրեր՝ աշակերտների ալգորիթմական մտածողությունը զարգացնելու, ծրագրավորման հիմունքներին ծանոթացնելու նպատակով և այլն: Դպրոցի սաները ոգևորությամբ և ակնհայտ անմիջականությամբ ցանկություն են հայտնել իրենց գիտելիքները խորացնել հենց ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտում:

Հաշվետու ուստարում **քոլեջներից** կրթությունը մասնաճյուղում շարունակելու համար **7 մասնագիտությունների գծով շուրջ 20 հայտ է ներկայացվել՝** ելնելով ՀՀ կառավարության 2002թ. մայիսի 20-ի №589 որոշումից, ըստ որի՝ ՄՄՈՒՀ-երի բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտները կարող են ուսումնառությունը շարունակել համապատասխան բուհում:

Դիմորդների հավաքագրման և ընտրության արդյունավետությունն ու թափանցիկությունն ապահովելու նպատակով մասնաճյուղը **համագործակցում է քոլեջների հետ**, փոխհամաձայնեցվում և վերամշակվում են նրանց ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը: Քոլեջների ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով մասնաճյուղը ցույց է տալիս համապատասխան մեթոդական և մասնագիտական օգնություն. իրականացնում է դասախոսություններ և դասալսումներ, համապատասխան մասնագետները մասնակցում են կիսամյակային քննություններին և ընդգրկված են քոլեջների պետական որակավորման հանձնաժողովների կազմում: Մասնաճյուղի գրադարանի ռեսուրսները հասանելի են նաև նրանց համար:

Դիմորդների հավաքագրման, բուհ-դպրոց համագործակցության ընդլայնման և ակտիվացման գործընթացում կարևոր նշանակություն ունեն հանրակրթական տարբեր առարկաների գծով **ԵՊՀ-ի հետ համատեղ կազմակերպվող օլիմպիադաները**: 2015-16 ուստարում դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար կազմակերպված օլիմպիադաներին մասնակցել են մարզի 4 ավագ, 30 միջնակարգ դպրոցների և 2 վարժարանների շուրջ **300 աշակերտներ**, որոնցից **60 աշակերտներ հաղթահարել են** 1-ին փուլը և մասնակցել ԵՊՀ-ում կազմակերպված օլիմպիադայի 2-րդ փուլին: Տարբեր պարգևատրումներ են ստացել 20 աշակերտներ, որոնցից **4-ը՝ 2-րդ, 3-ը՝ 3-րդ կարգի դիպլոմներ**, 13 աշակերտներ պարգևատրվել են պատվոգրերով: Բոլոր այն դպրոցներում,

որոնցում սովորող դպրոցականները հաջողությամբ էին մասնակցել օլիմպիադային և ցուցաբերել բարձր արդյունքներ, մասնաճյուղի ՄԿՊԿ բաժնի կողմից կազմակերպվել են հանդիպումներ: Այդ հանդիպումների ընթացքում պատվոգրեր են հանձնվել օլիմպիադայի ընթացքում բարձր միավորներ ստացած աշակերտներին: Լավագույն մասնակցության և բարձր առաջադիմության համար ԵՊՀ-ի ռեկտորի կողմից հատուկ շնորհակալագրով պարգևատրվել է Դիլիջանի ավագ դպրոցը: Հանդիպումների ընթացքում ներկայացվել է ԵՊՀ գիտխորհրդի նոր որոշումը, ըստ որի՝ ԵՊՀ-ի ամենամյա օլիմպիադայում 1-3-րդ տեղերը զբաղեցրած աշակերտները վճարովի ուսուցման համակարգով ԵՊՀ ընդունվելու դեպքում առաջին կուրսում կստանան ուսման վարձի զեղչ՝ համապատասխանաբար 50, 40 և 30%-ով:

2016թ. ապրիլի 28-ին տնօրենը և ՄԿՊԿ բաժնի վարիչը հանդիպում են ունեցել **Գետահովտի միջնակարգ դպրոցի** 12-րդ դասարանի աշակերտների հետ: Հանդիպման նպատակն էր բուհի անունից շնորհակալություն հայտնել ուսուցչական կազմին և աշակերտներին՝ հանրակրթական տարբեր առարկաներից մասնաճյուղում կայացած օլիմպիադային ակտիվորեն մասնակցելու, գերազանց արդյունքներ ցուցաբերելու, մրցանակային տեղեր գրավելու կապակցությամբ: Աշակերտներին կոչ արվեց հետևողական լինել մասնագիտությունների ընտրության հարցում, քանի որ դրանով են պայմանավորված հետագայում նրանց մասնագիտական ձեռքբերումները:

Մասնաճյուղի գովազդարշավին և **դիմորդների մասնագիտական կողմնորոշմանը** նպաստում են նաև մասնաճյուղի **կայքէջը** և հեռակա ուսուցման իրականացումը՝ աշխատանքից չկտրված ուսումնառություն ապահովելու իմաստով: Կայքում տեղադրվում է տարաբնույթ տեղեկատվություն՝ մասնագիտությունների, ուսումնական գործընթացի և ուսանողական միջավայրի, դասավանդողների և նրանց գիտական ու մանկավարժական գործունեության, մասնաճյուղի տեխնիկական ապահովվածության վերաբերյալ:



Մասնաճյուղի կայքէջում դեռևս 2011թ.-ից ստեղծվել է **«Դիմորդ»** բաժինը՝ «Առկա ուսուցում» և «Հեռակա ուսուցում» ենթաբաժիններով: Յուրաքանչյուր ենթաբաժնում տեղադրվում է դիմորդներին վերաբերող համապատասխան արդիական ինֆորմացիան՝ մասնագիտությունների, ընդունելության կարգի, պահանջվող փաստաթղթերի, ընդունելության քննությունների, տեղերի, ուսման վարձաչափերի և այլնի վերաբերյալ:

Մասնաճյուղի գովազդման գործընթացում իր ուրույն տեղն ունի նաև Հեռակա ուսուցման բաժինը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դիմորդների զգալի մասը Հեռակա ուսուցման բաժին է դիմում նույն բաժնի շրջանավարտների խորհրդով: Սա առաջին հերթին հստակ վկայում է այն մասին, որ հեռակա ուսուցման շրջանավարտները գոհ են ուսումնառության որակից, կարողացել են իրենց տեղը գտնել աշխատաշուկայում:

Գործող մասնագիտությունների վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունն ապահովելու նպատակով տպագրվել և դպրոցներին, հիմնական գործատուներին ու շահագրգիռ այլ կազմակերպությունների **են տրամադրվել** ԵՊՀ-ի հրատարակած **«Դիմորդի**

ուղեցույց»-ը, ԵՊՀ ԻՄ-ի, Կիրառական արվեստի ֆակուլտետի և Հեռակա ուսուցման բաժնի



գովազդային բուկլետները (նաև վրացերեն և պարսկերեն լեզուներով՝ հաշվի առնելով մասնավորապես Վրաստանից, Իրանից դիմորդների առկայությունը և նրանց թվի հնարավոր աճը):

Մասնավորապես, ընթացիկ ուստարվա ընդունելության ժամանակացույցին համապատասխան, **հոկտեմբերի 30-31-ը** ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կայացել է 2015թ. հեռակա ուսուցման համակարգի ընդունելության՝ **<u>օտարերկրյա դիմորդների համար նախատեսված մրցույթը</u>**, որին մասնակցել են Վրաստանի Հանրապետության յոթ քաղաքացիներ: Նրանք մասնաճյուղ էին դիմել՝ սովորելու «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտությամբ: Հեռակա ուսուցման համակարգի ընդունելության մրցույթն անց է կացվել «Մաթեմատիկա», «Ռուսաց լեզու» և «Անգլերեն» առարկաներից: Մրցույթի նվազագույն շեմը հաղթահարել են բոլոր դիմորդները:

2015-16 ուստարում մասնաճյուղի բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցմամբ 11 մասնագիտությունների գծով մասնաճյուղն ունեցել է **208 դիմորդ**, որոնցից ընդունվել է 161-ը (38-ը՝ անվճար, 123-ը՝ վճարովի), իսկ հեռակա ուսուցմամբ 7 մասնագիտությունների գծով՝ **197 դիմորդ**, որոնցից ընդունվել է 192-ը: Դիմորդների թիվը նվազելու միտում ունի, որը պայմանավորված է դպրոցների շրջանավարտների թվի նվազմամբ, նաև տարածաշրջանի սոցիալ-տնտեսական վիճակով և ժողովրդագրական պատկերով: Էապես նվազել է հումանիտար և տնտեսագիտական ուղղվածությամբ դիմորդների թիվը, իսկ աճ է գրանցվել բնական գիտությունների ուղղությամբ, որը պայմանավորված է նոր մասնագիտությունների ներդրմամբ:





Դիմորդների հավաքագրման գործընթացին նպաստում են մատչելի վարձավճարը և ուսման վարձի մասնակի փոխհատուցման, ներբուհական կրթաթոշակների հատկացման մասնաճյուղի վարած քաղաքականությունը:

2015թ. նոյեմբերի 3-ին ԵՊՀ ԻՄ-ի տնօրենը հեռակա ուսուցման դասերի մեկնարկի կապակցությամբ հանդիպել է Հեռակա ուսուցման համակարգի ուսանողների հետ: 2015-2016 ուսումնական տարում մասնաճյուղն ընդունել է հեռակա ուսուցմամբ 199 առաջին կուրսեցիների: Հանդիպման ժամանակ տնօրենը փաստել է, որ մասնաճյուղն իր 20-ամյա գործունեության ընթացքում տվել է շուրջ 4000 շրջանավարտ, որոնց մեծամասնությունը հաջողությամբ աշխատում է հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, պետական և հանրային կառույցներում, բանկային համակարգում և այլն: Շուրջ մեկ տասնյակ շրջանավարտներ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն և աշխատում են մասնաճյուղում: Նա ուսանողներին կոչ է արել ակտիվորեն մասնակցել ուսանողական նախաձեռնություններին, դառնալ համալսարանական միջավայրի լիարժեք ներկայացուցիչներ, հպարտությամբ կրել ԵՊՀ ԻՄ-ի ուսանող լինելու պատիվն ու պատասխանատվությունը:

բ) Ուսումնական գործընթացի կազմակերպում

Ուսումնագիտական գործընթացի բարելավման և արդյունավետ կազմակերպման համար մասնաճյուղում պարբերաբար **գնահատվում է** լսարանային ֆոնդի և ուսումնագիտական լաբորատորիաների վիճակի համապատասխանությունը կրթական ծրագրերի իրականացման պահանջներին: Հաշվետու ուստարում, նաև նոր՝ 2016-20 ռազմավարական ծրագրի 5-րդ նպատակի խնդիրների իրականացման շրջանակներում, կատարվել են լսարանների, արվեստանոցների, լաբորատորիաների և այլ ուսումնական տարածքների **վերանորոգման շուրջ 1172 ք.մ.** աշխատանքներ, որոնցից.

- ***Վերանորոգվել է՝***
  - 7 աշխատասենյակ (504մ²),
  - հյուրանոցային համալիրի 4 սենյակ (253ք.մ.),
  - 4 սանհանգույց (425մ²):
- ***Վերանորոգվել և տեխնիկապես վերազինվել է՝***
  - 12 լսարան և լաբորատորիա,
  - 1 համակարգչային սրահ (95մ²):
- ***Հիմնորոգվել է՝***
  - քանդակի արվեստանոցը (30մ²),
  - 3 ամբիոն (124մ²),
  - տանիքի ավելի քան 120մ² մակերեսով հատված:
- Կատարվել է ուսումնական տարածքների տեխնիկական վերազինում, մեկ լսարան հարմարեցվել է հենաշարժողական խնդիր ունեցող ուսանողների համար:
- Վերակառուցվել և ընդլայնվել է ջեռուցման համակարգը. տեղադրվել է մեկ ջեռուցման կաթսա, 10 պանելային մարտկոց, մոնտաժվել է ջեռուցման կենտրոնական համակարգի 66գծ/մ խողովակաշար, 11 ջեռուցման մարտկոց:
- Բարեկարգվել է բակը, բակի շուրջ 120մ² մակերեսով ց/բ ծածկույթը վերանորոգվել է, բակի տարածքի ավելի քան 180մ² մակերես սալիկապատվել է:

- Ընթերցասրահն առանձնացվել է գրապահոցից, գրապահոցի և գրադարանի աշխատակիցների համար բացվել է նոր առանձին մուտք, Բնական գիտությունների ֆակուլտետի տարածքում բացվել է 2-րդ գրադարանը՝ հարմարավետ ընթերցասրահով:
- Ստեղծվել է օպերատիվ տպագրական աշխատանքներ իրականացնող ենթակառուցվածք:
- Վերակառուցվել և արդիականացվել է մասնաճյուղի ուսումնագիտական տարաբնույթ միջոցառումների համար գործող նիստերի դահլիճը:

2016թ. հունվար ամսվա ընթացքում մասնաճյուղում ուսումնա-կան և աշխատանքային պայմանները բարելավելու նպատակով իրականացվել են մի շարք ընթացիկ շինվերանորոգման աշխատանքներ, և ձեռք է բերվել նոր գույք: Մասնավորապես՝ հիմնովին վերանորոգվել է Հումանիտար գիտությունների ֆակուլտետի օտար լեզուների ամբիոնը: Նույն ֆակուլտետի համակարգչային սրահն ավելի հարմարավետ, լուսավոր և ընդարձակ

դարձնելու նպատակով տեղափոխվել է №28 լսարան: Սրահը համալրվել է նոր համակարգիչներով ու համակարգչային սեղաններով: Նախկին 19-ի փոխարեն այն արդեն սպասարկում է 22 ուսանողի՝ ապահովելով մեկ լաբորատոր կամ գործնական դասընթացի արդյունավետ և լիարժեք իրականացումը: Վերանորոգվել են Հումանիտար գիտությունների ֆակուլտետի մանկավարժության և հոգեբանության ամբիոնը, Տնտեսագիտության ֆակուլտետի №45 և 46 լսարանները: Իրականացվել են ոչ միայն արտաքին հարդարման, այլ նաև հիմնանորոգման աշխատանքներ:

Մասնաճյուղն իր գործընթացների արդյունավետ կազմակերպման համար ուսանողներին, դասախոսներին և ուսումնաօժանդակ անձնակազմին **ապահովել է բավարար տեխնիկական միջոցներով:** Հաշվետու ուստարում մասնաճյուղն ունեցել է տեսասարքով համալրված համակարգչային 5 սրահ և 3 լսարան, որոնցից 2 համակարգչային սրահը և 2 լսարանը բացվել են հաշվետու ուստարում, ինտերակտիվ ուսուցման (On-line) 1 լսարան, 4 մասնագիտական լաբորատորիա, 9 արվեստանոց: Համապատասխան լսարանները և աշխատատեղերը հագեցված են եղել 50 տպող սարքերով (28 բազմաֆունկցիոնալ, 22 տպիչ):

Մասնաճյուղում գործում է ներքին համակարգչային ցանց, որը միավորում է շուրջ 140 համակարգիչ, 2 Wi-Fi անկյուն և նույն հնարավորությամբ նիստերի դահլիճ: Մաասնաճյուղն իր բոլոր ստորաբաժանումներին ապահովում է գերարագ և անվճար ինտերնետային կապով:

Մասնաճյուղն ունի լեզուների ուսուցման **2 մասնագիտական լսարան**: Մասնաճյուղի և Խաղաղության կորպուսի համատեղ ջանքերով ստեղծվել է անգլերեն լեզվի ուսուցման ռեսուրս կենտրոն՝ հագեցած մասնագիտական գրականությամբ և անհրաժեշտ տեխնիկական սարքավորումներով, որը նպատակուղղված է «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության ուսանողների գիտելիքների և հաղորդակցական կարողությունների զարգացմանը: Խաղաղության կորպուսի ջանքերով կենտրոնը շարունակաբար համալրվում է գեղարվեստական գրականությամբ, ուսումնամեթոդական ձեռնարկներով, ամսագրերով, ֆիլմերով և լեզվի ուսուցման համար նախատեսված խաղերով: Կենտրոնի ռեսուրսներից օգտվում են ոչ միայն մասնաճյուղի ուսանողները և դասախոսները, այլև Իջևան քաղաքի դպրոցականները, որոնք ընդգրկված են կենտրոնում գործող «Անգլերեն լեզվի ակումբ»-ի և «Կինո ակումբ»-ի կազմերում: Կենտրոնը դասընթացներ է կազմակերպում նաև մասնաճյուղի ոչ մասնագիտական բաժինների ուսանողների համար:

Ֆրանսիայի Լիոն քաղաքի «AYO» կազմակերպության հովանավորությամբ մասնաճյուղում ստեղծվել է ֆրանսերեն լեզվի կենտրոն՝ հագեցած ժամանակակից տեխնիկական միջոցներով, շուրջ 800 կտոր մասնագիտական գրականությամբ (մեթոդական և գեղարվեստական), որը հնարավորություն է տալիս ֆրանսերեն լեզվի դասերը վարելու ժամանակակից տեսաձայնային մեթոդներով:

Բնական գիտությունների և Կիրառական արվեստի ֆակուլտետների ուսանողների և գիտամանկավարժական անձնակազմի համար մասնաճյուղի թիվ 2 մասնաշենքում գործում է երկրորդ գրադարանը՝ հարմարավետ ընթերցասրահով:

2015-16 ուստարվա 2-րդ կիսամյակում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում **«Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ»** դասընթացը «Պատմություն», «Հոգեբանություն» ու «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտությունների առաջին կուրսերում **կազմակերպվել է առցանց**: Առցանց դասերն իրականացվել են հաջորդաբար՝ ըստ դասընթացի ժամանակացույցի: Դասընթացը բաղկացած է առանձին դասերից, որոնք իրենց հերթին կազմված են համառոտ նկարագրից, ուսուցանող նյութից և վարժություններից: Ուսուցանվող նյութն ունի ձայնային աջակցություն, պարունակում է պատկերներ, անիմացիոն նյութեր, հղումներ էլեկտրոնային ռեսուրսներին: Դասի նյութն ուսումնասիրելուց հետո ուսանողները պատասխանում են նյութին կից բերված հարցերին՝ հնարավորություն ունենալով նաև տեսնել ճիշտ պատասխանը և դրա բացատրությունը:

Ամսական ոչ պակաս, քան մեկ անգամ դասախոսը կազմակերպում է լսարանային հանդիպումներ ուսանողների հետ, որոնց ընթացքում պատասխանում է ընթացիկ հարցերին, լուծում կազմակերպչական խնդիրներ: Ուսանողները հնարավորություն ունեն նաև դասախոսին դիմելու տեքստային հաղորդակցությունների միջոցով:

Դասընթացն ամփոփվել է առցանց թեստավորման եղանակով կազմակերպված ստուգարքով: Թեստային հարցերն ընտրվել են մշտապես նորացվող հարցերի բազայից, որում մասնավորապես ընդգրկվել են դասերի ընթացքում իրականացված վարժությունները:

Նախատեսվել է **01.02.2017-ից** ԵՊՀ-ի հետ համատեղ **առցանց եղանակով իրագործել ևս մեկ դասընթաց**: Պլանավորվել է պարբերաբար ավելացնել առցանց իրականացվող դասընթացների քանակը, և մասնաճյուղն այդ գործընթացի իրականացման համար ակնկալում է ԵՊՀ-ի աջակցությունը: Սակայն հարկ է նշել, որ մասնաճյուղի դասախոսների հիմնական մասն իրենց դասընթացները կազմակերպում են համապատասխան

շնորհանդեսների, առցանց իրականացվող թեստային գնահատումների միջոցով, Բնական գիտությունների ֆակուլտետի ամբիոններում սկսված է նաև Case-փաթեթների ձևավորման գործընթացը:

Մինչև **2017թ.-ը** պլանավորվում է ստեղծել «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտության լաբորատորիա, այդ գործընթացի հիմքը արդեն դրվել է. Մայր բուհի կողմից **2016թ. նոյեմբերին** «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտության ուսանողները **էլեկտրոնային տախեոմետր են ստացել նվեր,** այն շատ կարևոր է կադաստրի վարման համար և կծառայի մասնագիտական ավելի խորը կարողությունների ձեռքբերմանը:

Պայմանավորված համակարգչային և այլ լաբորատորիաների ստեղծմամբ, արդիականացմամբ և վերազինմամբ՝ աճել են մեկ ուսանողին ընկնող տարեկան ձեռքբերված սարքավորումների ծախսերը:

Գիտատեխնիկական դինամիկ առաջընթացն իր պահանջներն է ներկայացնում նաև կրթության ոլորտում: Իր գործունեությամբ մասնաճյուղն ապահովում է վերջինիս արագ և նպատակային մուտքը իր առկա և հեռակա ուսուցման համակարգ: Մասնաճյուղի առանձնահատուկ ուշադրության կենտրոնում է հեռակա ուսուցման բաժինը: Այդ առումով հեռակա ուսուցման համակարգում արդեն հաջողված ձեռնարկ կարելի է համարել **բաժնի առանձին կայքէջը,** ուր պարբերաբար ներբեռնվում են դասախոսություններ, շարունակաբար այն թարմացվում է բոլոր մասնագիտությունների գծով գիտական նորույթներ պարունակող տեղեկատվությամբ: Դասախոսների, ուսանողների և բաժնի աշխատակազմի միջև կապն արդյունավետ իրականացվում է էլեկտրոնային փոստերի միջոցով, ինչի շնորհիվ օպերատիվ կերպով լուծվում են նաև ուսանողությանը հուզող զանազան խնդիրներ:

Մասնաճյուղը 2015-16 ուստարին սկսել է արդյունավետ ուսումնառության համար անհրաժեշտ կրթական բոլոր գործընթացների և համապատասխան գործիքակազմի ապահովմամբ.

1. Ուսումնական տարվա սկզբից մասնաճյուղը բոլոր ֆակուլտետների առկա և հեռակա ուսուցման համակարգերում սովորող ուսանողների համար ապահովել է վերանայված և լրամշակված «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք» ձեռնարկները:

2. Ֆակուլտետներն ապահովել են կրթական վերջնարդյունքներով սահմանված համապատասխան կրթական ծրագրերը:

3. Ուսումնամեթոդական վարչությունն ապահովել է Վեբ հենքով էլեկտրոնային տեղեկատվական «SuperVision» ծրագրի անխափան գործունեությունը, որի միջոցով իրականցվում է մասնագիտությունների ուսումնական պլանների, ամբիոնների և դասախոսների բեռնվածության ավտոմատ մշակում, ուսանողների ուսումնական տվյալների հավաքագրում, մշակում և առաջադիմության վերահսկում: Այն նաև հիմք է ծառայում ուսանողական զեղչերի, փոխատեղումների իրականացման ժամանակ, դիպլոմի համաեվրոպական նմուշի հավելվածի պատրաստման համար:

4. Ֆակուլտետներն ապահովել են դասացուցակների առկայությունն ու դեկանատներում ներդրված հատուկ ծրագրային համակարգի գործունեությունը, որը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում իրականացնել ուսանողների հաճախումների հաշվառում, կիսամյակային քննական գնահատականների

հաշվառում և ամփոփում, կիսամյակային դասացուցակի ներմուծում, խմբագրում և տարբեր պահանջներին համապատասխան դասացուցակների ստացում, ֆակուլտետում ընթացիկ դասաժամի իրավիճակի ֆիքսում:

5. Ամբիոններն ապահովել են իրենց կողմից իրականացվող դասընթացների փաթեթների (պորտֆոլիոների) առկայությունը՝ համաձայն նախնական պայմանավորվածության (2015-16 ուստարվա յուրաքանչյուր կիսամյակի համար բոլոր դասախոսները ներկայացրել են մեկական փաթեթ): Դասախոսները ներկայացրել են իրենց աշխատանքային պլանները, անհատական զարգացման ծրագրերը: Ամբիոնները համապատասխան փաստաթղթերով կանոնակարգել են իրենց աշխատանքները. ապահովել են կամընտրական դասընթացների ընտրությունը ուսանողների կողմից, մշակել են ուսանողների և դասախոսների համագործակցության մեխանիզմներ, ժամանակացույցներ և այլն:

6. ՈՒՄՎ-ի մասնագիտական կողմնորոշման և պրակտիկաների կազմակերպման (ՄԿՊԿ) բաժինն ապահովել է ուսումնական պլաններով նախատեսված ուսումնական, մանկավարժական և արտադրական պրակտիկաների իրականացման համար համալսարանի և տարբեր պետական և ոչ պետական հաստատությունների, հիմնարկների, կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի (կնքվել է 28 պայմանագիր), համապատասխան պրակտիկաների ծրագրերի, անցկացման ժամանակացույցների առկայությունը:

2011թ.-ից մասնաճյուղն ամբողջությամբ անցել է **<u>ուսուցման կրեդիտային համակարգին</u>**: Մասնաճյուղում գործում է «Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը», որը միասնական նորմատիվային, կանոնակարգային և կազմակերպական հենք է ապահովում առկա և հեռակա ուսուցման համակարգում բակալավրի կրեդիտային համակարգով պատրաստման կրթական ծրագրերի իրականացման համար: Մասնաճյուղը բակալավրի կրթական աստիճանի համար ամբողջությամբ անցել է մոդուլացված, կրեդիտային հենքով ճկուն ուսումնական ծրագրերի, որոնցում մեծացված է ընտրովի դասընթացների հաշվեկշիռը:

Մասնաճյուղը մշտապես ավելացնում է լսարանային և լաբորատոր բազայի վերազինման և արդիականացման ծախսերը: Վերջին հինգ տարիներին **<u>ուսումնական ծախսերն</u>** աճել են մոտ 38%-ով, այն դեպքում, երբ տարեկան ընդհանուր ծախսերը 2011թ.-ի համեմատ աճել են 23%-ով: Հետևաբար, տարեկան ընդհանուր ծախսերում ուսումնական ծախսերի հաշվեկշիռը մեծացել է, սակայն այն համեմատաբար կայուն է և գտնվում է 43%-48% միջակայքում:

Վերջին 4 տարիների ընթացքում **<u>ուսումնաօժանդակական ծախսերն</u>** աճել են 25,6%-ով, իսկ միայն նախորդ տարվա համեմատ 13,9%-ով, սակայն ընդհանուր տարեկան ծախսերում ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը վերջին հինգ տարիների ընթացքում համեմատաբար կայուն է և կազմում է 10%-10,6%, որը հիմնավորում է օպտիմալ ուսումնաօժանդակ անձնակազմի և անհրաժեշտ պայմանների առկայությունը:

2011-16 թթ. ԳԱՑ-ի տվյալների համաձայն՝ միայն 2015 թվականի տարեկան ընդհանուր ծախսերը 2014-ի նկատմամբ ավելացել են 45.3 միլիոն դրամով (16.8%-ով), իսկ մեկ ուսանողին ընկնող տարեկան ուսումնական ծախսերը (տեսակարար ուսումնական ծախսերը)՝ 19.5%-ով (21600 դրամով).

Ցուցանիշներ 3.8, 3.9	2014	2015
Տարեկան ընդհանուր ծախսեր (հզ.դրամ)	372427	417723
Ուսումնական ծախսեր (հզ.դրամ)	171600	200500
Ուսումնական ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհանուր ծավալում (%)	**46,1**	**48,0**
Ուսումնաօժանդակ ծախսեր (հզ.դրամ)	37500	42700
Ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը (%)	**10,1**	**10,2**
Ուսանողների թիվը	1552	1517
Տեսակարար ուսումնական ծախսեր (հզ. դրամ)	**110,6**	**132,2**
Տեսակարար ուսումնաօժանդակ ծախսեր (հզ. դրամ)	**24.2**	**24.8**

Ըստ մասնաճյուղի գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ-ի)՝ 2012-14 տարիներին աճել են տարեկան ձեռքբերված սարքավորումների ծախսերը, ինչը պայմանավորված է համակարգչային և այլ լաբորատորիաների ստեղծմամբ, արդիականացմամբ և վերազինմամբ: Նշված փոփոխություններն էլ հիմք են դարձել մեկ ուսանողին ընկնող տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքի աճի (3,49-5,62 հզ. դր.) համար, թեև 2015թ.-ի համար այն նվազել է, ինչը փաստում է մասնաճյուղի տեխնիկական հագեցվածության մասին: Փաստենք, որ մասնաճյուղին լաբորատորիաների վերազինման համար անհրաժեշտ են հատուկ սարքավորումներ, որոնց ձեռքբերումը կախված է ավելի մեծ ֆինանսական ներդրումների հետ, որն առայժմ մասնաճյուղը չի կարողանում իրականացրել:

Ցուցանիշ 4.8	2012	2013	2014	2015
Տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքը (հզ. դր.)	**5504**	**6474**	**8609**	**4699**
ԵՊՀ ԻՄ ուսանողների թիվը	1577	1548	1531	1693
Մեկ ուսանողին ընկնող տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքը (հզ. դր.)	**3,49**	**4,18**	**5,62**	**2,78**

Շահագործման ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում 2011-2015թթ. համար համեմատաբար կայուն է և տատանվում է 30-34%-ի սահմաններում (**ԳԱՑ 2010-15, Ցուցանիշ 4.7**):





գ) Ուսանողական համակազմ և շրջանավարտներ

Մասնաճյուղի հարստությունն իր **ուսանողներն** են: 2015-16 ուստարում մասնաճյուղն ունեցել է բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցմամբ սովորող **1693** ուսանող, նրանցից **1539**-ը՝ վճարովի /01.04.2016թ. դրությամբ/:







Պետության կողմից ուսման վարձի (ուսանողական նպաստի ձևով) լրիվ փոխհատուցում է ստացել **119 ուսանող** (այդ թվում՝ 3-ը արտամրցութային): Պետական և ներբուհական կրթաթոշակներ են հատկացվել մասնաճյուղի 139 ուսանողների, որոնցից անվանական կրթաթոշակ է ստացել 12 ուսանող: 2015-16 ուստարում ուսման վարձի մասնակի փոխհատուցումից օգտվել են 336 ուսանողներ, այդ թվում՝ 152-ը առկա:

Մասնաճյուղը բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցմամբ տվել է **189**, իսկ հեռակա ուսուցմամբ՝ **161 շրջանավարտներ,** նրանցից գերազանցության դիպլոմով ավարտել է 21-ը: Ուրախությամբ պետք է փաստել, որ մասնաճյուղի շրջանավարտներին հանձնվում է միջազգային չափանիշներին համապատասխան **երկլեզու** (հայերեն և անգլերեն) տարբերակով **դիպլոմի հավելված**:

2015-16 ուստարվա շրջանավարտների դիպլոմների հանձնումը կազմակերպվել էր առանձնահատուկ շուքով: Հանդիսավոր արարողությանը ներկա են եղել ԵՊՀ-ի ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, ԵՊՀ-ի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Գրիգորյանը, ուսումնամեթոդական վարչության պետ Հ.Ժամհարյանը, ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ռ.Մարկոսյանը, ռեկտորի

աշխատակազմի ղեկավար Ա.Ղարիբյանը, մարզի տարբեր ոլորտների ներկայացուցիչներ, ծնողներ, ուսանողներ, հյուրեր: Մայր բուհի ռեկտոր Ա.Սիմոնյանն իր շնորհավորանքներն ու բարեմաղթանքներն է հղել շրջանավարտներին՝ մասնավորապես նշելով. «Երևանի պետական համալսարանի տարածաշրջանային մասնաճյուղի շրջանավարտներն այսօր պետք է ստանան իրենց հասունությունը հավաստող դիպլոմները, և նրանց առջև կբացվի հասուն կյանք մտնելու դժվարին, բայց միևնույն ժամանակ հետաքրքիր ուղին: Ուզում եմ ասել, որ մեծագույն պատիվ է լինել ԵՊՀ-ի շրջանավարտ: Ես սրտանց ուզում եմ շնորհավորել ձեզ բոլորիդ, ձեր ծնողներին, ձեր դասախոսներին, ձեր ուսուցիչներին, մարդկանց, որոնք կրթել, դաստիարակել են ձեզ… Եվ ուզում եմ հույս հայտնել ԵՊՀ-ի ղեկավարության և նրա ողջ կոլեկտիվի անունից, որ ձեր ամբողջ կյանքի ընթացքում բարձր կպահեք համալսարանականի պատիվը: …Եվ երբեք ձեր սրտերում թո՛ղ չմարի գիտելիք ստանալու, նոր բան սովորելու, նոր բարձունքներ նվաճելու տենչը. մարդն իր ամբողջ կյանքի ընթացքում սովորում է:Անպայման ուզում եմ, որ մի 5-6 տարի հետո մենք լսենք ձեր հաջողությունների մասին և ուրախանանք սրտանց, որովհետև այդ հաջողությունը մեր բոլորիս հաջողությունն է լինելու»:

Ռեկտորի կողմից գերազանց առաջադիմությամբ շրջանավարտներին տրվել են կարմիր դիպլոմները, ապա, ըստ ֆակուլտետների, պատվավոր հյուրերը դիպլոմները հանձնել են շրջանավարտներին:

Մասնաճյուղը, իր սաներին ճանապարհելով մեծ կյանք, մշտապես պատրաստ է համագործակցելու իր շրջանավարտների հետ, ցանկացած հարցում աջակցելու նրանց:

ԵՊՀ ԻՄ-ի լավագույն շրջանավարտներն իրենց ուսումը **<u>շարունակում են Մայր բուհի մագիստրատուրայում:</u>** Նրանցից շատերը համալրում են հարազատ բուհի պրոֆեսորադասախոսական կազմը: Մասնաճյուղն ուսումնասիրում է նրանց կարիքները, խնդիրները, լսում նրանց առաջարկությունները:

2015-16 ուստարվա II կիսամյակում մասնաճյուղում կազմակերպվել է «Բակալավրական և մագիստրոսական կրթությունն իմ աչքերով» թեմայով քննարկում բարձր առաջադիմություն և կրթությունը Մայր բուհի մագիստրատուրայում շարունակելու նպատակ ունեցող ուսանողների հետ: Մասնակիցները լրացրել են հատուկ մշակված հարցաթերթը և առաջադրված հարցերի վերաբերյալ բանավոր արտահայտել իրենց կարծիք-գնահատականը:

Շրջանավարտներին առաջադրվել են հետևյալ հարցերը.

1. Ընդունվելիս ի՞նչ ակնկալիքներ ունեիք Իջևանի մասնաճյուղից և որքանո՞վ արդարացան դրանք:

2. Բակալավրական կրթության շրջանակներում մասնաճյուղը կարողացա՞վ տալ բավարար գիտելիքներ ու հմտություններ՝ Ձեր մասնագիտությամբ աշխատելու համար:

3. Գնահատման գործող համակարգը կարողացա՞վ լիարժեք բացահայտել Ձեր գիտելիքները, հմտություններն ու կարողությունները:

4. Որո՞նք են այն շարժառիթները, որոնք Ձեզ մղում են ուսումը շարունակելու մագիստրատուրայում:

5. Ընդհանրապես ի՞նչ պատկերացում ունեք մագիստրոսական կրթության, նրա նպատակների ու հնարավորությունների մասին:

6. Ցանկություն ունե՞ք հետագայում զբաղվելու ուսումնագիտական գործունեությամբ:

ՄԿՈԱ բաժնի մասնագետ, սոցիոլոգ Է.Կյուրեղյանն իրականացրել է քննարկման արդյունքների վերլուծություն, որի համաձայն՝ ԵՊՀ ԻՄ-ի՝ բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտները միահամուռ էին այն հարցում, թե մասնաճյուղը բակալավրական կրթության շրջանակներում կարողացել է իրենց տալ բավարար գիտելիքներ և հմտություններ՝ տվյալ մասնագիտությամբ աշխատելու համար: Նրանց գերակշիռ մասը մասնաճյուղ է ընդունվել այն նպատակով, որ պետք է ստանա որակյալ բարձրագույն կրթություն և դառնա լավ մասնագետ, և խոստովանում են, որ իրենց ակնկալիքները լիովին արդարացել են: Շրջանավարտները հիմնականում բավարար պատկերացում ունեն մագիստրոսական կրթության մասին և մոտիվացված են: Գերակշիռ մասը համոզված է, որ կրթական այդ մակարդակում ձեռք են բերելու ավելի խորը և կայուն գիտելիքներ, գիտահետազոտական որակներ: Հատկանշական է և ուրախալի, որ 20 ապագա մագիստրոսներից 11-ը ցանկություն ունեն զբաղվելու ուսումնագիտական գործունեությամբ, ընդ որում՝ չեն թաքցրել իրենց մտադրությունը՝ հնարավորության դեպքում դասավանդել սիրելի մասնաճյուղում: «Ես սիրում եմ իմ մասնագիտությունը, ցանկանում եմ ավելի զարգացնել գիտելիքներս ու հմտություններս, իմ մասնագիտությամբ լավ աշխատանք գտնել, մրցունակ դառնալ աշխատաշուկայի համար, ինքնուրույն լիարժեք կյանքով ապրել, ինչի համար համոզված եմ, որ մագիստրոսական կրթությունը անհրաժեշտ պայմաններից մեկն է». հիմնականում նման բնույթի էին շրջանավարտների պատասխանները:

2016թ. մարտի 1-ին ԵՊՀ ԻՄ-ի «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողների մասնագիտական պատրաստվածության մակարդակի վերաբերյալ հարցազրույց է անց կացվել ԵՊՀ-ի անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտներ, բան. գիտ. թեկնածուներ և համատեղությամբ մասնաճյուղում դասավանդող Աստղիկ Չուբարյանի և Գայանե Մուրադյանի հետ: Մեր ուսանողների մասնագիտական պատրաստվածության, լեզվի իմացության, գիտելիքների, կրթությունը ԵՊՀ-ում շարունակելու նրանց ներուժի վերաբերյալ իրենց ուղղված հարցերին նրանք պատասխանել են, որ մեր ուսանողներից ստացած իրենց տպավորությունը շատ դրական է, որակական տարբերություն չեն տեսնում Մայր բուհի և նրա մասնաճյուղի ուսանողների միջև. թե՛ Երևանում և թե՛ այստեղ առկա է անգլերեն լեզվի նկատմամբ սեր, դասախոսների նկատմամբ ջերմ ու հարգալից վերաբերմունք: Ավելի անկեղծանալով՝ նրանք նշել են, որ մասնաճյուղում սովորելու ձգտումն ավելի մեծ է: Փորձառու դասախոսները նշել են, որ ուսանողին գնահատելիս իրենց համար առաջնայինը սովորելու ձգտումն է, իսկ դա ակնառու հատկանիշ է մասնաճյուղի ուսանողների համար: Այդ ձգտման հետ, անշուշտ, անհրաժեշտ է ունենալ նաև նախնական

գիտելիքների պաշար, մասնագիտական հիմքային գիտելիքներ, որպեսզի ապահովվի ցանկալի արդյունք: Նրանք փաստել են, որ մասնաճյուղի ուսանողներն ունեն և՛ մեկը, և՛ մյուսը, որը շատ ողջունելի է, և հավելել են, որ «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության ավարտական կուրսի ուսանողները լիովին պատրաստ են ընդունվելու և սովորելու ԵՊՀ մագիստրատուրայում:

Մասնաճյուղն ուրախանում է իր **շրջանավարտների ձեռքբերումներով և հպարտանում**, որ լավ մարդ, հայրենասեր, գրագետ ու խելացի քաղաքացի դաստիարակելու գործում նա կատարել է իր առաքելությունը:

ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս.Առաքելյանը ԼՂՀ ՊԲ-ի կողմից շնորհակալական նամակ է ստացել մասնաճյուղի լավագույն շրջանավարտ **Վլադիմիր Արմենի Պողոսյանի**՝ իբրև հայրենիքի արժանի զինվորի դաստիարակության գործում մեծ ներդրում ունենալու համար: 2014թ. լինելով «Հայ ասպետ» թիմի անդամ ՝ «Հայ ասպետ» ակումբների համաբանակային մրցույթում գրավել է առաջին տեղը՝ մեծ պատիվ բերելով զորամասին: 2015թ. հունիսից նախաձեռնել է զորամասի «Ասպետ» ամսաթերթի հրատարակությունը՝ որպես գլխավոր խմբագիր: Կազմակերպել է բազմաթիվ ինտելեկտուալ և մշակութային միջոցառումներ, մասնակցել համաբանակային մրցույթների և հանդես եկել ելույթներով: Պարգևատրվել է «Քաջարի մարտիկ», «Հայոց բանակի գերազանցիկ» կրծքանշաններով, պատվոգրերով և նվերներով:

Ցանկացած բուհի գործունեության արդյունավետությունը մեծապես կախված է այն հանգամանքից, թե <u>որքանով են բավարարվում ուսանողության օբյեկտիվ և սուբյեկտիվ կարիքները</u>: Այն կապված է բուհական համակարգի կառուցվածքային տարբեր տարրերի շահախնդիր գործունեության հետ, որոնցից բավարարվածության աստիճանը, լինելով ուսումնական ակտիվության իրական խթան, միաժամանակ հենց այն սուբյեկտիվ ցուցանիշն է, որով ուսանողները գնահատում են այդ կառույցների փոխհամաձայնեցված գործունեության արդյունավետությունը: Հետևաբար, իրենց ուսումնառությունից և կրթական միջավայրից բավարարված ուսանողներ ունենալու նախապայմանը կրթական ծրագրերի իրականացման պահանջներին բավարարող պրոֆեսորադասախոսական կազմն է, նյութատեխնիկական և գիտատեխնիկական հզոր բազան և արդյունավետ աշխատող **համալսարանական ենթակառուցվածքները**: Ուսանողների բավարարվածությունը բացահայտելու նպատակով ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը պարբերաբար անց է կացնում տարբեր հարցումներ:

2016 թվականի ապրիլ-մայիս ամիսներին անց է կացվել **<u>ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից բավարարվածության</u>** ուսանողական հարցում: Հարցման ժամանակահատվածը

պատահաբար չի ընտրվում: Դա երկրորդ կիսամյակի միջնամասն է, երբ ուսանողությունը դեռևս խիստ մտահոգված չէ առաջիկա քննաշրջանով, իսկ առաջին կուրսեցիներն արդեն մեկ կիսամյակի ուսումնառության ու քննաշրջանի փորձ ունեն: Այսինքն՝ օբյեկտիվորեն և հոգեբանական համեմատաբար խաղաղ վիճակում բոլոր կուրսերի ու ֆակուլտետների ուսանողները կարող են գնահատել բուհի տարբեր կառույցներից ստացած տպավորությունները:

Ուսանողների բարձր գնահատականները, կարծում ենք, օբյեկտիվորեն արտացոլում են այն ակնհայտ առաջընթացը, որ ունեցել է մասնաճյուղը գործունեության համար առանցքային նշանակություն ունեցող և անմիջականորեն ուսուցման գործընթացի կազմակերպման ու անցկացման ոլորտում: Մասնագետների պատրաստման հարցում նշված ռեսուրսներն ունեն առանցքային նշանակություն և պատահական չեն այն իդեալականին ձգտող գնահատականները, որ ուսանողները տվել են մասնաճյուղի կառավարման ստորաբաժանումներին՝ տնօրենությանը, ուսումնամեթոդական վարչությանը, անձնակազմի կառավարման բաժնին, հաշվապահությանը, վարչատնտեսական վարչությանը, գրադարանին:

Ստորաբաժանում	Բավարարվածությունը			
	2014-15		2015-16	
տնօրենություն	4,61	92,1%	4,65	93%
ուսումնամեթոդական վարչություն	4,58	91,5%	4,59	91,8%
վարչատնտեսական վարչություն	4,41	88,3%	4,45	88,9%
հաշվապահություն	4,49	89,8%	4,58	91,5%
գրադարան	4,52	90,3%	4,61	92,2%
Մասնակցած ուսանողների քանակը	**387**		**158**	

Այս գնահատականներն, ինչպես տեսնում ենք, 90 և ավելի տոկոս են, իսկ ցածր գնահատականները չեն գերազանցում 2-3%-ը:

2016թ. մայիս-հունիս ամիսներին անցկացված՝ **<u>ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության</u>** հարցման արդյունքներով մասնաճյուղում շրջանավարտների հասարակական գիտակցության մեջ ուսումնառության ընթացքում ձեռքբերված տեսագործնական գիտելիքներն ու մասնագիտական կարողությունները պատշաճ մակարդակի ու որակի են (միջին գնահատականը՝ **4.5**): Փաստ, որը խոսում է մասնաճյուղի ղեկավարության և պրոֆեսորադասախոսական անձնակազմի արդյունավետ գործունեության մասին: Շրջանավարտները գոհ են նաև դասախոսների ու կրթության կազմակերպիչների կողմից իրենց ջանքերի գնահատման արդարացիությունից (**4.4**), ուսման համար ստեղծված պայմաններից (ժամանակակից տեխնիկական հնարավորություններ՝ **4.60**, գրադարան-ընթերցասրահ՝ **4.5** և այլն):

Շրջանավարտներն իրենց առաջարկներում բարձր են գնահատել ղեկավարության հոգատարությունը, պրոֆեսորադասախոսական կազմի պատշաճ մակարդակը, մասնաճյուղում ստացած իրենց որակյալ կրթությունը՝ այդ ամենի համար հայտնելով իրենց երախտագիտությունը:



Հատկանշական է, որ շրջանավարտների՝ 3-ից մեկը պատրաստակամ է շարունակելու ուսումը, ինչը լուրջ մարդկային ռեսուրս է: Հարցմանը մասնակցած 178 շրջանավարտներից 152-ը, այսինքն՝ **85,4%**-ը, իրենց մերձավորներին և ընկերներին խորհուրդ են տալիս ուսանելու մասնաճյուղում:

h	Որքանո՞վ եք գոհ ԵՊՀ ԻՄ-ի. /առկա, 2015-16 ուստարի/	Միջ. գնահ.
1	ղեկավարությունից	**4,6**
2	ֆակուլտետի ղեկավարությունից	**4,7**
3	պրոֆեսորադասախոսական կազմից	**4,6**

դ) Դասախոսական կազմ

Մասնաճյուղը կարևոր և դժվար ռազմավարական խնդիր ունի՝ նպաստել **հետազոտությունների ծավալի մեծացմանը** և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և սովորողների ներգրավվածության ընդլայնմանը:

Նախ փաստենք, որ հաշվետու ժամանակաշրջանում մասնաճյուղում դասավանդել են հիմնական և համատեղությամբ 120 դասախոսներ, որը կազմում է դասախոսական կազմի 81.6%-ը, այդ թվում՝ 3 պրոֆեսոր (2.5%), 36 դոցենտ (30%), 48 ասիստենտ և 33 դասախոս (67.5%), որոնցից **գիտական աստիճանով՝ 3 դոկտոր և 63 թեկնածու,** ընդ որում՝ գիտական աստիճան ունեցող դասախոսների հաշվեկշիռը 50%-ից ավելի է: Մասնաճյուղում **97 հիմնական դասախոսների** միջին տարիքը 48 է. մինչև 35 տարեկան դասախոսների թիվը 21 է (21.7%), 36-65 տարեկան՝ 68 (70.1%), 65-ից բարձր՝ 8 (8.2%) **(ԳԱՑ, Ցուցանիշ 2.7)**: Կանայք կազմում են հիմնական դասախոսական կազմի 42.5% -ը:

Հաշվետու ուստարում մասնաճյուղի 1 դասախոս պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, 5-ը՝ (այդ թվում՝ 2-ը տեղացի) թեկնածուական ատենախոսություն: Հաշվետու ուստարում մասնաճյուղն ունեցել է 1 դոկտորանտ, 2 ասպիրանտ և 9 հայցորդ:

2 դասախոս պարգևատրվել է ԵՊՀ-ի հուշամեդալով:

Հարկ է նշել, որ վերջին 4 ուստարիների ընթացքում թեկնածուական թեզ պաշտպանած **27 դասախոսներից 21-ը** հիմնական աշխատողներ են, այդ թվում **17-ը** երիտասարդ, իսկ **9-ը**՝ մասնաճյուղի շրջանավարտներ են: Ընդ որում՝ թեկնածուական ատենախոսություններից 2-ը վերաբերել են Տավուշի տարածաշրջանին՝ «Աղստև գետի և նրա ջրահավաք ավազանի էկոլոգիական բնութագիրը» (2014թ.), «Հուղարկավորության և հիշատակի ծեսերն ու սովորույթները Տավուշի մարզում. ավանդույթներ և նորույթներ» (2015թ.):

Թեկնածուական ատենախոսության ուղղությունը	Թեկնածուական ատենախոսությունների քանակ			
	2012-16թթ.		2015-16 ուստարի	
	Տեղացի դասախոսներ	Մասնաճյուղի շրջանավարտներ	Ընդամենը	Տեղացի դասախոսներ
Բնագիտական	6	4	-	-
Հումանիտար	6	4	3	2
Տնտեսագիտական	1	1	1	-
Կիրառական	0	0	1	-
Ընդամենը	**13**	**9**	**4**	**2**

2015-16 ուստարում մասնաճյուղի ամբիոնների ապահովվածությունը պրոֆեսորադասախոսական անձնակազմով (ըստ պաշտոնների և գիտական աստիճանների) ունեցել է հետևյալ պատկերը.

N	Ամբիոնի անունը	ՊԴԱ քանակն ըստ պաշտոնների					ՊԴԱ թիվն ըստ գիտակարգերի և նրանց հաշվեկշիռը (%)				
		պրոֆեսոր	դոցենտ	ասիստենտ	դաս./հայց.	Ընդամենը					
	Բնական գիտությունների ֆակուլտետ										
1	Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության	-	12 (4)	7	8 (6)	27(10)	ֆմգդ	ֆմգթ	տեխգթ	այլ	65%
							-	10 (1)	2	5 (3)	
2	Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների	-	3	3	2	8	ֆմգդ	ֆմգթ	տեխգթ	այլ	50%
							-	2	2	-	
Ընդամենը ֆակուլտետում՝		**-**	**15 (4)**	**10**	**10 (6)**	**35(10)**	գդ	գթ			**61%**
							-	21 (4)			
	Հումանիտար գիտությունների ֆակուլտետ										
3	Հայոց պատմության և քաղաքագիտության	2	6	6 (1)	6/1(2)	20/1(3)	պգդ	պգթ	քգթ	այլ	56%
							2	6 (1)	1	1	
4	Հայոց լեզվի և գրականության	-	4	7 (1)	2/1(1)	13/1(2)	բգդ	բգթ			85%
							-	11 (1)	-	-	
5	Մանկավարժության և հոգեբանության	-	5 (1)	3	5/3(1)	13/3(2)	մգդ	մգթ	հգթ	այլ	50%
							-	1	4	1	
6	Օտար լեզուների	-	6 (3)	7 (1)	19/3 (3)	32/3(7)	բգդ	բգթ		այլ	23%
							-	9 (3)	-	1	
Ընդամենը ֆակուլտետում՝		**2**	**21 (4)**	**23 (3)**	**32/8 (7)**	**78/8 (14)**	գդ	գթ			**39%**
							2	35 (5)			
	Տնտեսագիտության ֆակուլտետ										
7	Ընդհանուր տնտեսագիտության	1	4	4 (1)	8/2(4)	17/2 (5)	տգդ	տգթ	տեխգթ	այլ	53%
							1	6	1	-	
8	Տուրիզմի կառավարման և մշակութաբանության	-	4	7 (1)	2 (2)	13 (3)	աշխգդ	աշխգթ	պգթ	այլ	81%
							-	3	2	2	
Ընդամենը ֆակուլտետում՝		**1**	**8**	**11(2)**	**10/3 (6)**	**30/2 (8)**	գդ	գթ			**65%**
							1	15			
	Կիրառական արվեստի ֆակուլտետ										
9	Գծանկարի, գունանկարի և քանդակի	-	1	5	3 (3)	9 (3)	ՆՄ/Ա	ԴՄ/Ա			-
							5	1			
10	Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի	-	-	5	2	7	ՆՄ/Ա	ԴՄ/Ա	արվ.գթ	այլ	17%
							4	-	1	1	
Ընդամենը ֆակուլտետում՝		**-**	**1**	**10**	**5 (3)**	**16 (3)**	ՆՄ/Ա	ԴՄ/Ա	գթ		**8%**
							9	1	2		
	Համամասնաճյուղային ամբիոն										
11	Արտակարգ իրավիճակների, մարմնակրթության և սպորտի			1	2 (1)	3 (1)	Սպ.միջ. վարպ.				
							1				
Ընդամենը մասնաճյուղում՝		**3**	**45 (8)**	**55 (5)**	**59 (23)**	**162/11 (36)**	գդ	գթ			**45%**
							3	73 (9)			

Փակագծերի մեջ նշված են ժամավճարով աշխատող դասախոսների թիվը

Լրիվ հաստիքային համարժեքով ուսանող-դասախոս հարաբերակցությունը 2015-16 ուստարում կազմել է 19.57, որը վերջին 5 տարիների կտրվածքով համեմատաբար կայուն է՝ պայմանավորված ուսանողների թվի և դասախոսական հաստիքների համամասնական փոփոխությամբ:



Դասախոսների միջին տարեկան ուսումնական բեռնվածության համահամալսարանական միջինը հաշվետու ուստարում կազմել է 815.9 ժամ: Մասնաճյուղում միջին տարեկան բեռնվածությունը, սահմանված նորմերի համաձայն, կազմում է 700-800 ժամ: Վերջին 2 ուստարիներին բոլոր ֆակուլտետներում դասախոսի միջին տարեկան բեռնվածությունը գերազանցում է սահմանված նորմատիվը, որը պայմանավորված է մասնաճյուղի ղեկավարության կողմից ֆինանսական ռեսուրսների խնայողության քաղաքականության իրականացմամբ: Սակայն համամասնաճյուղային միջինը մոտ է սահմանված նորմատիվ արժեքին:



Նշենք նաև, որ մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմը փորձառու ու առաջատար մասնագետներով ապահովելու գործում մասնաճյուղին մեծապես աջակցում են ԵՊՀ–ի համապատասխան ամբիոնները՝մասնաճյուղ ուղարկելով մրցութային կարգով իրենց մոտ աշխատանքի անցած լավագույն կադրերին:

Դասախոսական կազմի մասնագիտական կարողությունները, մանկավարժական հմտությունները, դասավանդման որակը և արդյունավետությունը պարբերաբար գնահատվում են <u>ԵՊՀ-ի կողմից իրականացվող ուսանողական հարցումների միջոցով</u>: 2015-16 ուստարվա 1-ին և 2-րդ կիսամյակների հարցումների արդյունքների համաձայն՝ բոլոր մասնագիտությունների գծով միջին թվաբանական միավորն ըստ ամբիոնների բարձր է 4.54-ից:

Ուսումնական միավորը	2015-16 ուստարի	
	1-ին կիս.	2-րդ կիս.
Բնական գիտությունների ֆակուլտետ	***4,56***	***4,62***
Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության	4,64	4,75
Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների	4,38	4,48
Տնտեսագիտության ֆակուլտետ	***4,66***	***4,78***
Ընդհանուր տնտեսագիտության	4,71	4,85
Տուրիզմի կառավարման և մշակութաբանության	4,60	4,69
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	***4,58***	***4,63***
Հայոց լեզվի և գրականության	4,54	4,60
Հայոց պատմության և հասարակագիտության	4,63	4,67
Մանկավարժության և հոգեբանության	4,63	4,61
Օտար լեզուների	4,54	4,63
Կիրառական արվեստի ֆակուլտետ	***4,76***	***4,86***
Գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոն	4,79	4,86
Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի ամբիոն	4,75	4,87

Դասախոսների (հատկապես երիտասարդ) ուսումնագիտական և մեթոդական գործունեությունը գտնվում է մասնաճյուղի տնօրենության ուշադրության կենտրոնում: Աջակցվում և խրախուսվում է նրանց նորարարական, ստեղծագործական և գիտամանկավարժական ակտիվ գործունեությունը, ինքնակրթության և ինքնազարգացման բոլոր դրսևորումները (գործուղումներ, վերապատրաստման դասընթացներ, պարգևատրումներ և այլն):

Դեռևս 2010թ. հոկտեմբերից մասնաճյուղում գործում է ***«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում երիտասարդ դասախոսների խրախուսման կանոնակարգը»***, որը սահմանում է մասնաճյուղի երիտասարդ դասախոսների խրախուսման ողջ գործընթացը: Երիտասարդ դասախոսները խրախուսվում են որակավորման բարձրացման կրթական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, մասնաճյուղում կազմակերպվող գիտագործնական և հետազոտական աշխատանքներին մասնակցելու, ուսանողական հարցումից բարձր գնահատական ստանալու, աշխատանքային կոլեկտիվի կողմից դրական բնութագրի համար և այլն:

2014թ. դեկտեմբերից ներդրված է **«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի աշխատակիցներին խրախուսելու կարգ սահմանելու մասին»** կանոնակարգը, որը նպատակ ունի նպաստել դասավանդման որակի շարունակական բարելավմանը: Ըստ այդ կանոնակարգի՝ 20 միավորանոց սանդղակով դասախոսը միավորներ է ձեռք բերում ուսումնամեթոդական և գիտամանկավարժական հետևյալ աշխատանքների իրականացման համար.

- Դասագրքի, ուսումնական կամ ուսումնամեթոդական ձեռնարկի հրատարակում,
- «Դասընթացի փաթեթի» (պորտֆոլիոյի) մշակում, նոր դասընթացի իրականացում,
- Ուսումնառության ժամանակակից ակտիվ, ինտերակտիվ նաև տեղեկատվական մեթոդների կիրառում (համապատասխան մեթոդական ուղեցույցի առկայությամբ),
- Բուհական ուսանողական կոնֆերանսների, սեմինարների, տարբեր օլիմպիադաների, մրցույթների կազմակերպում,
- Ֆակուլտետի խորհրդի կողմից լավագույն համարված բաց դաս,
- Դասալսումների արդյունքում ամբիոնի վարիչի տված բարձր գնահատական և մասնագետ գործընկերների հատուկ կարծիքներ,
- Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումից ստացած լավ գնահատական և այլն:

Խրախուսման կիրառվող մեխանիզմները նպաստում են ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների արդյունավետ ներդրմանը:

Միայն 2015-16 թթ. ընթացքում դրամական խրախուսում են ստացել մասնաճյուղի 109 դասախոսներ:

N	Ֆակուլտետի անունը	2015թ.		2016թ.		Ընդամենը	
		թիվը	չափը /հգ.դրամ/	թիվը	չափը /հգ.դրամ/	թիվը	չափը /հգ.դրամ/
1	Բնական գիտություններ	14	420	13	410	27	*830*
2	Հումանիտար գիտություններ	30	910	19	460	49	*1370*
3	Տնտեսագիտություն	13	360	11	265	24	*625*
4	Կիրառական արվեստ	4	140	5	130	9	*270*
Ընդամենը		**61**	**1830**	**48**	**1265**	109	*3095*

2015թ. դեկտեմբերի 26-ին ԵՊՀ ԻՄ-ում կայացած Գիտական խորհրդի ընդլայնված նիստում անբասիր, արդյունավետ աշխատանքի և մասնաճյուղում կրթության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի համար ***ԵՊՀ-ի հուշամեդալով պարգևատրվել են*** ՄԿՈԱ բաժնի ավագ մասնագետ, Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի ասիստենտ Մարիետա Ճաղարյանը, Արտակարգ իրավիճակների, մարմնակրթության և սպորտի ամբիոնի վարիչ Վարդիթեր Պողոսյանը:

2015թ. օգոստոսին Ստամբուլում կայացել է ԵՊՀ ԻՄ-ի տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ **Լևոն Լաչիկյանի** «Պոլիսը՝ մոտ ու հեռու» 10-րդ անհատական ցուցահանդեսը: Այն ներառել է շուրջ 3 տասնյակ գրաֆիկական աշխատանքներ: «Սփիւռք» գիտաուսումնական կենտրոնի տնօրեն, պրոֆ. Սուրեն Դանիելյանի խոսքով՝ Լաչիկյանը կամրջել է 2 ժամանակների Պոլիսները իր «տաք» գծանկարներում: «Պոլիսը՝ մոտ ու հեռու» ցուցահանդեսին ներկա են գտնվել Թուրքիո խորհրդարանի հայ երեսփոխան Սելինա Դողանը, Սբ.Փրկիչ ազգային հիվանդանոցի հոգաբարձության ատենապետ Պետրոս Շիրինօղլուն, Շիշլիի փոխքաղաքապետ Վազգեն Պարընը, ինչպես հայ, այնպես էլ թուրք հայտնի արվեստագետներ, գրողներ, երգիչներ:

2015թ. օգոստոսի 2-13-ը Երևանում անց են կացվել Համահայկական 6-րդ ամառային խաղերը, որոնցում ընդգրկված էին աշխարհի 165 երկրների 6350-ից ավելի մեր հայրենակիցներ՝ 17 թիմային մարզաձևերում: Համահայկական 6-րդ խաղերում՝ «Բադմինթոն» մարզաձևում, Իջևան քաղաքը պատվով ներկայացրել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի արտակարգ իրավիճակների, մարմնակրթության և սպորտի ամբիոնի

վարիչ, փետրագնդակի միջազգային կարգի սպորտի վարպետ, Հայաստանի բազմակի չեմպիոն, Սովետական միության (1980թ.), Եվրոպայի չեմպիոն (Գերմանիա, 1980թ.), Ֆրանսիայի բաց առաջնության չեմպիոն (Ֆրանսիա, 1981թ.), Համահայկական 5-րդ խաղերի ոսկե մեդալակիր (2011թ.) **Վարդիթեր Գուրգենի Պողոսյանը**: Վարդիթեր և Լիլիթ Պողոսյանները եզրափակիչում 2:0 հաշվով առավելության հասնելով Երևան քաղաքը ներկայացնող զույգի նկատմամբ՝ գրավել են առաջին տեղը: Չեմպիոնները պարգևատրվել են ոսկե մեդալով և դիպլոմով:

Մասնաճյուղում արդեն կայուն ներդրված է ուսանողների համար **օտար լեզվով դասախոսություններ անցկացնելու գործընթացը**, որն առաջընթաց քայլ է կրթական ծրագրերի միջազգայնացման ճանապարհին: Մասնավորապես՝

- **2015թ. նոյեմբերի 18-ին** «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտության 4-րդ կուրսում ռուսերեն լեզվով դասախոսություն է կարդացել Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ, ֆ.մ.գ.թ. Կ.Հովսեփյանը: Դասախոսության թեման էր «Վերջավոր և անվերջ չափանի կոմպակտ օպերատորների սահմանումները և հատկությունները»:
- **Նոյեմբերի 19-ին** ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության 3-րդ կուրսում ռուսերեն լեզվով դասախոսություն է կարդացել Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.թ. Վ.Նավոյանը: Դասախոսության թեման էր «Անիսկական ինտեգրալների մոտավոր հաշվումը» (“Приближенное вычисление несобственных интегралов”):

2015թ. դեկտեմբերի 10-ին Տավուշի մարզային գրադարանում Սերո Խանզադյանի ծննդյան 100-րդ տարեդարձին և նրա ստեղծագործությանը նվիրված բաց դաս է անցկացրել մասնաճյուղի Հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Վահան Աղաբաբյանը: Ձեկուցողը ներկայացրել է Սերո Խանզադյան գրողին, որի ստեղծագործական որոնումների առանցքում հայրենիքի քաղաքական ճակատագիրն է, վերջինս էլ ձևավորում է նրա աշխարհընկալման մոտիվները, գեղարվեստական վերարտադրման թեման, կերպն ու ոճը, իրադարձությունների հորձանուտում հայտնված անհատի դրաման:

Համալսարանականներին ու մարզի քաղաքացիներին գեղագիտական, համամարդկային արժեքներ փոխանցելու գործում իր ուրույն տեղն ունի **Կիրառական արվեստի ֆակուլտետը**, որի դասախոսների կողմից կազմակերպված գեղարվեստական աշխատանքների ցուցահանդեսները ընդունվում են ոգևորությամբ: 2015-16 ուստարում կազմակերպվել են 5 ցուցահենդեսներ՝ նվիրված 110 000 հայ որբերի կյանքը փրկած դանիացի միսիոներուհի Մարիա Յակոբսենին, Կանանց միջազգային օրվան, գեղեցկության և մայրության, ուսանողության տոներին և այլն:

2015թ. նոյեմբերի 17-ին Իջևանի քաղաքային պատկերասրահում ցուցադրվել են ԵՊՀ ԻՄ-ի **<u>կիրառական արվեստի ֆակուլտետի դասախոսների</u>** շուրջ 60 բազմառճ ու բազմաժանր (գեղանկար, գրաֆիկական աշխատանք, գոբելեն, կոլաժ, բնանկար, նատյուրմորտ և այլն) ստեղծագործությունները՝ նվիրված Ուսանողների միջազգային օրվան: Ցուցահանդեսի հանդիսավոր բացմանը մասնակցել են նաև մարզի և քաղաքի կրթության և մշակույթի պատասխանատուներ, քաղաքային պատկերասրահի աշխատակիցներ, ուսանողներ, լրագրողներ, հյուրեր, այցելուներ: Ցուցահանդեսի նպատակն էր Ուսանողության միջազգային օրվա առթիվ դասախոսների կողմից գեղեցիկ նվեր մատուցել ուսանողներին, շնորհավորել նրանց տոնը, հղել բարեմաղթանքներ:

2016թ. ապրիլի 14-ին Իջևանի քաղաքային պատկերասրահում կայացել է ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի **<u>դասախոսների, ուսանողների և դպրոցականների</u>**՝ **«Երեք սերունդ»** խորագրով ցուցահանդեսը, որտեղ ներկայացվել են շուրջ 70 բազմաժանր աշխատանքներ (գրաֆիկա, բատիկա, ստիլիզացված դիմանկարներ, կենդանական և բուսական աշխարհի սիմվոլիկաներով ստեղծված կոմպոզիցիաներ, կոլաժներ, ֆլորիստիկա, գեղանկարչական գործեր, քանդակ, գոբելեն և այլն): Ցուցահանդեսի գլխավոր կազմակերպիչ, Գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի դոցենտ, ՀՆՄ վարչության անդամ **<u>Հ.Ասատրյանի</u>** խոսքով՝ նմանատիպ ցուցահանդեսների կազմակերպումը մի յուրատեսակ հաշվետվություն է ինչպես արվեստասեր հասարակության, այնպես էլ բուհի առջև. արվեստագետ դառնալու ճանապարհին ավագ

ընկերների կողքին ցուցադրվելով՝ ուսանողությունը և մատաղ սերունդն իրենց ավելի անկաշկանդ են զգում ճիշտ կողմնորոշվելու և ինքնուրույնություն ձեռք բերելու խնդիրներում:

2016թ. հուլիսի 17-ին ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի գլխավորությամբ մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական անձնակազմի մի խումբ անդամներ՝ Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի ԺՊ, պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ներսիսյանը, պ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Նահապետյանը, փ.գ.թ., դոցենտ Է.Կյուրեղյանը, բ.գ.թ., դոցենտ Ա.Սարհատյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի ԺՊ, ֆմգթ., ասիստենտ

Ա.Մարգարյանը, Գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի դոցենտ, ՀՆՄ վարչության անդամ, Գեղանկարի սեկցիայի նախագահ Հ.Ասատրյանը և ուրիշներ, այցելել են Գեղարքունիքի մարզի պատանի երկրապահների ճամբար՝ ռազմահայրենասիրական թեմաներով ակնարկային դասախոսություններ կարդալու նպատակով: ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրեն, ԵԿՄ Տավուշի մարզային խորհրդի փոխնախագահ Ս.Առաքելյանը ողջույնի խոսք է ասել հանրապետության տարբեր վայրերից ու Արցախից ճամբարում ուսումնամարզական վարժանքներ և հրամանատարասերժանտական դասընթացներ անցնող երկրապահներին: Ապա մասնաճյուղի հմուտ ու փորձառու դասախոսները պատանի ու երիտասարդ երկրապահների համար կարդացել են ակնարկային դասախոսություններ հայ ժողովրդի պատմության հերոսական դրվագների, հայոց լեզվի՝ որպես ազգապահպանման գործոնի, արվեստի պատմության, փիլիսոփայության վերաբերյալ:

<u>ե) Գիտական գործունեություն, որակավորման բարձրացում և մասնագիտական վերապատրաստում</u>

Իդեալականորեն բուհական դասախոսի աշխատանքային համակարգաստեղծ երկու առանցքային հատկանիշներն են **դասավանդումը** և **գիտական գործունեությունը**: Մյուս կողմերը՝ ներբուհական հասարակական գործունեություն, արտաբուհական սոցիալական ակտիվություն, ոչ պաշտոնական հարաբերություններում տարբեր դերեր և այլն, ածանցյալ են տվյալ հատկանիշներից այն իմաստով, որ լավագույն դեպքում պետք է ծառայեն դրանց արդյունավետ իրագործմանը: Տեսականորեն շատ դժվար է այդ երկու հատկանիշների միջև

կարևորության խնդիր դնել: Այն պատճառով, որ ճանաչողության և հասարակությունների զարգացման ժամանակակից տեմպերը, համընդհանուր միտումներին հարմարվելու, դրանց հետ ներդաշնակվելու ազգապետական և քաղաքակրթական առանձնահատկությունները, տվյալ գործընթացներով և ինքնազարգացման անհրաժեշտությամբ պարտադրված կրթական համակարգերի բարեփոխումների համատեքստում՝ արդյունավետ ուսուցմանը օժանդակող գիտական գործունեությունը դարձնում են դասավանդման հետ հավասար կարևոր: Ուսուցման գործընթացում հենց դասախոսի գիտական այն աշխատանքների արդյունքների օգտագործումն է գիտելիքների ու հմտությունների ձեռքբերումը դարձնում ավելի զգալի ու արդյունավետ, որոնք առնչվում են առարկայական ծրագրի բովանդակության հետ: Տարբեր չափով ու յուրովի, դա վերաբերում է կրթական ծրագրում ներառված գրեթե բոլոր առարկաներին:

Կրթական ծրագրերի պատասխանատուների առաջնահերթ խնդիրներից է դասավանդման, ուսումնառության և հետազոտության ինտեգրման (փոխկապակցման) ժամանակակից փորձի ուսումնասիրումը և բակալավրի կրթական ծրագրերում դրանց կիրառումը: Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեությունը ուղղորդված է կրթական ծրագրերի արդյունավետ իրագործմանը: Մասնաճյուղում դրան խոչընդոտող հանգամանքներ չկան, այն մշտապես գտնվում է ղեկավարության ուշադրության կենտրոնում: Ղեկավարությունը համարժեքորեն կարևորում է և իրապես ու գործնականորեն պատրաստ է կարելվույն օժանդակելու տվյալ խնդրի լուծման գործում: Այն բազմիցս քննարկվել և հավաստվել է տնօրենության ու գիտխորհրդի նիստերում, ֆակուլտետային ու ամբիոնային պաշտոնական հանդիպումների ընթացքում: Դրա ապացույցներից է նաև հարցումը, որը **2016թ. մայիս-հունիս ամիսներին** անց է կացվել մասնաճյուղի ՄԿՈԱ բաժնի կողմից, և որը նպատակ ուներ ուսումնասիրել ամբիոնների գործունեությունը, նրանց աջակցությունը դասախոսական կազմի գիտական գործունեությանը, նրանց կայացմանը, ուսանող-դասախոս համագործակցության արդյունավետությունը և այլն:

Այդ **հարցման** արդյունքների համաձայն՝ հարցմանը մասնակցած դասախոսների **78%-ը** փաստում է, որ իր գիտական գործունեության արդյունքները ներառում է դասախոսություններում, դասընթացները կազմակերպում են բավարար մակարդակի հետազոտական տարրի ընդգրկմամբ՝ դրա միջոցով ուսումնառության ընթացքում ուսանողի մեջ ձևավորելով վերլուծական և քննադատական հմտություններ: Նրանք փաստում են, որ հետազոտական գործունեության համար իրենք խոչընդոտներ չեն տեսնում:

N	Գիտական գործունեություն	Ընդ.	չ/պ	դժ/պ	2	3	4	5
1	Ձեր կարծիքով, որքանո՞վ է ամբիոնը խթանում դասախոսների գիտական գործունեությունը	83	6	10	11	12	26	18
2	Ձեր մասնագիտացումը որքանո՞վ է հնարավորություն տալիս զբաղվելու տարածաշրջանի հիմնախնդիրների ուսումնասիրությամբ	83	2	4	20	10	20	27
3	Ըստ Ձեզ, ամբիոնում որքանո՞վ են փոխկապակցված հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացները	83	3	6	10	19	33	12
4	Ինչպե՞ս կգնահատեք մասնաճյուղի ուսանողների հետազոտական կարողությունները	83	6	1	18	40	15	3
5	Ինչպե՞ս կգնահատեք մասնաճյուղի ՈՒԳԸ-ի գիտական գործունեությունը	83	10	6	23	29	13	2

Տարածաշրջանային խնդիրների հանդեպ մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական հետաքրքրությունների և հնարավորությունների վերաբերյալ 83 դասախոսներից **47-ը** նշել է, որ իրենց մասնագիտացումը լիարժեքորեն թույլ է տալիս զբաղվելու տարածաշրջանային հիմնախնդիրների ուսումնասիրությամբ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դասախոսների գիտական աշխատանքների արդյունքները **ուսանողությանը մատչելի են դառնում** դասախոսություններում դրանց ներառման միջոցով, արտալսարանային հաղորդակցման ընթացքում, ամբիոնում և գրադարանում դասախոսությունների և համապատասխան ուսումնական ձեռնարկների առկայությամբ, ուսանողական պրակտիկայի, էլեկտրոնային համապատասխան կայքէջերի միջոցով: Կարծում ենք, որ դասախոսություններում գիտական արդյունքների լայնորեն օգտագործումը և դրա զուգակցումը ուսանողության հետ արտալսարանային հաղորդակցման, պրակտիկաների ընթացքում իրապես օժանդակում են առարկայական ծրագրերի բովանդակության ավելի արդյունավետ յուրացմանը: Եվ ընդհանրացնելով՝ կարող ենք ասել, որ մասնաճյուղի դասախոսական կազմի համար դասախոսական աշխատանքի հետ գիտական գործունեությանը համակցումը բոլոր դեպքերում կարևոր է և անհրաժեշտ: Հարցվածների գերակշիռ վիճակագրական մեծամասնությունը **(93,7%-ը)** գիտակցում է, որ գիտական մշակույթը, գիտական հետաքրքրությունները և դասավանդմանը զուգընթաց գիտական ուսումնասիրություններ կատարելն իր աշխատանքային երկու հիմնական «հոգսերից» մեկն է:



ԵՊՀ ԻՄ-ի դասախոսների մեծամասնությունը գիտական գործունեությունը համարում է դասախոսական աշխատանքի պարտադիր բաղադրատարր: Ընդհանուր առմամբ, գիտական և մեթոդական աշխատանքների քանակությունը, դասավանդման գործընթացում դրանց արդյունքների ներառվածությունը դասախոսական և գիտական աշխատանքների փոխգործակցության բավարար ապացույց են:

ՀՀ ԳԿ պետական **դրամաշնորհային ծրագրերում** ընդգրկված են մասնաճյուղի 2 դասախոսներ («Երիտասարդների մասնագիտական կոմպետենտության ապահովումը ինքնուրույնության խթանման ճանապարհով»-15T-5A078, 2015-17թթ., «Հայաստանի ճարտարապետությունը անկախությունից հետո»-15T-2A088, 2016-18թթ.):

2015-16 ուստարվա ընթացքում մասնաճյուղի 34 դասախոս մասնակցել է տարբեր գիտաժողովների, որից 10-ը **ՀՀ-ում կայացած միջազգային**, 13-ը **արտասահմանում կայացած միջազգային** գիտաժողովներ են:

N	Գիտաժողովի (Գ/ժ) տեսակը	2015		2016		**Ընդամենը**	
		Գ/ժ քան.	Մասն. թիվը	Գ/ժ քան.	Մասն. թիվը	Գ/ժ քան.	Մասն. թիվը
1	Ներքուհական	-		-		-	-
2	Հանրապետական	3	4	4	7	**7**	**11**
3	Միջազգային	7	10	7	13	**14**	**23**
Ընդամենը		**10**	**14**	**11**	**20**	**21**	**34**

Մասնաճյուղի դասախոսների կողմից հաշվետու ուստարում հրատարակվել են **4 մենագրություն, 8 ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկ, զեկուցման 6 թեզիս, 83 գիտական հոդված:**

Հոդվածների քանակներն ըստ ֆակուլտետների և ամբիոնների հետևյալն են.

	Ամբիոնի անունը	Հոդվածների քանակը
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ		***61***
1	Հայոց պատմության և հասարակագիտության	6
2	Մանկավարժության և հոգեբանության	20
3	Հայոց լեզվի և գրականության	13
4	Օտար լեզուների	22
Բնական գիտությունների ֆակուլտետ		***4***
5	Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների	1
6	Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության	3
Տնտեսագիտության ֆակուլտետ		***11***
7	Ընդհանուր տնտեսագիտության	6
8	Տուրիզմի կառավարման և մշակութաբանության	5
Կիրառական արվեստի ֆակուլտետ		***7***
9	Գծանկարի, գունանկարի և քանդակի	1
10	Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի	6
Ընդամենը		***83***

Դեռևս **2014թ.** հոկտեմբերից գործում է **<u>ԵՊՀ ԻՄ-ի դասավանդման առաջավոր փորձի փոխանցման և երիտասարդ դասախոսների աջակցման կենտրոնը,</u>** որի կազմակերպած դասընթացները նպատակ ունեն բարձրացնել երիտասարդ դասավանդողների որակավորումը, կատարելագործել նրանց դասավանդման մեթոդիկան, նպաստել ուսումնական գործընթացում կրթական նորագույն տեխնոլոգիաների կիրառմանը: Հաշվետու ուստարում կենտրոնի կողմից երիտասարդ դասախոսների համար կազմակերպվել են նպատակային մի շարք դասընթացներ:

Մասնաճյուղում արդյունավետ գործում է սկսնակ դասավանդողների մենթորության ինստիտուտը: Երիտասարդները պարբերաբար մասնակցում են փորձառու դասախոսների դասերին կամ նրանց են հրավիրում իրենց դասերին:

Երիտասարդ դասախոսների կայացմանը և նրանց գիտական գործունեությանը աջակցում է նաև մասնաճյուղի **<u>«Ակունք» գիտական հոդվածների ժողովածուն</u>**, որտեղ անվճար տպագրվում են աշխատակիցների հոդվածները: Ընդգրկված լինելով ՀՀ ԲՈՀ-ի կողմից հաստատված «Ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակ»-ում՝ գիտական հանդեսն ապահովում է մասնաճյուղի, ինչպես նաև ՀՀ այլ բուհերի պրոֆեսորադասախոսական աշխատակազմի կողմից իրականացված գիտամեթոդական աշխատանքների հրապարակայնությունը, նպաստում տարածաշրջանում գիտական մտքի զարգացմանը:

Հանդեսի խմբագրական խորհրդի կազմում ընդգրկված են մեկ տասնյակից ավելի գիտական ճանաչում և վաստակ ունեցող գիտնականներ, հանդեսում տպագրվում են միայն

խմբագրական խորհրդի կողմից երաշխավորված և գրախոսված հոդվածները: Այն ունի հումանիտար ուղղվածություն, և ներառում է նաև ուսումնամեթոդական հոդվածներ:

Հաշվետու ուստարում հրատարակվել է **2 ժողովածու**, որոնցում ընդգրկված **66 հոդվածներից 34-ը** մասնաճյուղի հիմնական դասախոսների հոդվածներն են: Մասնավորապես՝ այդ հոդվածներից **8-ը Ֆրանսերեն լեզվի ամբիոնի երիտասարդ դասախոսների հոդվածներն են**:

	Տարեթիվը	Համարը	Հրատարակու-թյունների ընդ-հանուր թիվը	Հ ե ղ ի ն ա կ ն ե ր		
				ԵՊՀ-ի և այլ բուհերի հետ համատեղությամբ աշխատողներ	Տեղացիներ	Այլ հեղինակներ
1	2015	№2	18	1	5	12
2	2016	№1	48	6	12	30
Ընդամենը՝			**66**	**7**	**17**	**42**

Պետք է փաստել, որ վերջին 2 տարիներին տարբեր պատճառներով նվազել է «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուի հրատարակման հաճախականությունը, որը հոդվածների բացակայության խնդիր չէ, այլ ավելի շատ կապված է տեխնիկական մի շարք լուծումների հետ: Այս առումով մասնաճյուղն ունի լուրջ խնդիրներ:

Հաշվետու ուստարում մասնաճյուղի հիմնական դասախոսական կազմի կողմից **ՀՀ-ում գրախոսվող** ամսագրերում հրատարակվել է **35**, **ԱՊՀ երկրներում** գրախոսվող **2** և **օտարերկրյա միջազգային** գրախոսվող **1** հոդված: Այս տվյալները ցույց են տալիս, որ դեռևս սահմանափակ է ԱՊՀ և օտարերկրյա գրախոսվող ամսագրերում հրապարակումների թիվը և հարկավոր է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել ԱՊՀ և միջազգային գրախոսվող ամսագրերում գիտական հրապարակումներն ընդլայնելու ուղղությամբ:

Պրոֆեսորադասախոսական կազմի գիտական գործունեության ակտիվացմանը նպաստելու համար մասնաճյուղը կայքի միջոցով տեղեկատվություն է տալիս հայաստանյան և արտասահմանյան տարբեր գիտական միջոցառումների մասին: Սակայն պետք է նշել, որ ԵՊՀ-ի, հանրապետության կամ արտասահմանյան բուհերի կողմից կազմակերպվող միջազգային գիտաժողովներին մասնաճյուղի դասախոսները մասնակցում են հիմնականում իրենց նախաձեռնությամբ:

Մասնաճյուղի կարևոր ձեռքբերումներից է 2014 թ.-ին «Հայաստանի տարածաշրջանները հօգուտ եվրասիական ինտեգրման» և 2015թ.-ին «Ղազախստանի և Հայաստանի համագործակցությունը արդի ժամանակաշրջանում» **միջազգային համաժողովների կազմակերպումը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում:**

2015թ. նոյեմբերի 27-ին ԵՊՀ ԻՄ-ում տեղի է ունեցել «Ղազախստանի և Հայաստանի համագործակցությունը արդի ժամանակաշրջանում» թեմայով **միջազգային համաժողով**, որը կազմակերպվել էր ՀՀ-ում Ղազախստանի Հանրապետության դեսպանության, Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի և ԵՊՀ Իջևանի

մասնաճյուղի կողմից: Համաժողովի աշխատանքային լեզուն ռուսերենն էր: Համաժողովի ընթացքում «Հայաստանի և Ղազախստանի միջև երկկողմ և տարածաշրջանային համագործակցությունը որպես փոխշահավետ և բարեկամական կապերի ներուժ» թեմայով ելույթ են ունեցել ՀՀ-ում Ղազախստանի Հանրապետության դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատար Կանատ Խասենովը և Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի (ԳՏՀՎԿ) ղեկավար Ստեփան Գրիգորյանը: «Ղազախստանի առաջին նախագահի ինստիտուտը որպես հզոր խթան և մեխանիզմ՝ «Ազգային պլան. 100 քայլ» ինստիտուցիոնալ հինգ բարեփոխումների իրականացման համար» թեմայով զեկուցում է ներկայացրել «Ինտեգրացիա և զարգացում» հետազոտության և վերլուծության հասարակական կազմակերպության նախագահ Արամ Սաֆարյանը: ՀՀ-ում Ղազախստանի Հանրապետության դեսպանության կողմից մասնաճյուղին նվիրվեցին Ղազախստանին վերաբերող գրքեր, բուկլետներ, օրացույցներ:

2015թ. նոյեմբերի 5-ին ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետում «Փնտրման և տեսակավորման դասական ալգորիթմներ, ալգորիթմների ծրագրային ապահովման մշակում և բարդությունների գնահատում» թեմայով **գիտական զեկուցում** է կարդացել **ԵՊՀ դիսկրետ մաթեմատիկայի ամբիոնի ասպիրանտ Ներսես Խաչատրյանը:** Ուսանողներին ներկայացվել են տեսակավորման ալգորիթմներն ըստ կատարման արագության և հիշողության օգտագործման, ըստ նրա աշխատանքի արդյունավետության գնահատելու սկզբունքները, դիտարկվել կիրառական խնդիրների օրինակներ, դուրս են բերվել տեսակավորման հայտնի ալգորիթմների ժամանակային գնահատականները: Վերլուծվել են նույն խնդիրը լուծող տարբեր ալգորիթմների արդյունավետության համեմատության հնարավորությունները:

2015թ. նոյեմբերի 14-ին մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողության համար «Սոցիալական դեպրիվացիա» հետաքրքիր և արդիական թեմայով **գիտական զեկուցում** է կարդացել **Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի ասիստենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու Դիանա Սարգսյանը**: Զեկուցողն ունկնդիրներին ծանոթացրել է հոգեբանության մեջ որպես խորքային հիմնախնդիր հանդես եկող «Դեպրիվացիա» հասկացությանը, ներկայացրել դրա տեսակները (միջավայրային, բնակտարածքային, հաղորդակցման, տեղեկատվական), դրսևորման ձևերը, հետազոտական մոտեցումները, միջոցները և վերականգնողական հնարավոր ուղիները: Բացատրվել են դեպրիվացիայի հարակից հասկացությունները (psychological starvatio–հոգեբանական քաղց,

carence mentale–հոգեկան անբավարարվածություն, isolation–մեկուսացում, segregation–առանձնացում, deficit–պակասություն):

2015-16 ուստարվա ավարտը բավականին հագեցած էր **ԵՊՀ ԻՄ-ի տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ Լևոն Լաչիկյանի** համար. դասախոսական աշխատանքին ու քննական գործընթացին զուգահեռ՝ նա իր մասնակցությունն է բերել Երևանում կազմակերպված **2 հոբելյանական գիտաժողովների**:

Առաջինը **կազմակերպվել էր Հայաստանի պետական մանկավարժական համալսարանում** և նվիրված էր արևմտահայ ականավոր մանկավարժ Հովհաննես Հինդլյանի ծննդյան 150-ամյակին: «Սփիւռք» գիտաուսումնական կենտրոնի հրավերին արձագանքել էին հայկական սփյուռքի տարբեր գաղթօջախների նշանավոր մտավորականներ: Լևոն Լաչիկյանը հանդես է եկել «Հինդլյանի հայաստանյան ներկայությունը» թեմայով զեկուցմամբ՝ նվիրված մեծ մանկավարժի հայացքների վերընձյուղմանը մայր հայրենիքում, ինչպես նաև **ՀՀ Տավուշի մարզում գործող Հ.Հինդլյանի անվան միջնակարգ** դպրոցի 10-ամյա փորձին: Ավելին՝ մեր դասախոսի առա ջարկով

երկօրյա գիտաժողովի երկրորդ օրվա նիստը գումարվել է Տավուշի մարզի Կայան ավանում, ուր այցելել են արտերկրից ժամանած հյուրերն ու երևանցի գիտնականները: Այդտեղ նրանք ոչ միայն հյուրընկալվել են Հ. Հինդլյանի անվան դպրոցում, այլև մոտիկից տեսել այն սահմանը, որից սկսվում է հող հայրենին:

Հաջորդ գիտաժողովը, որին մասնակցել է մասնաճյուղի դասախոսը, ՀՀ ԳԱԱ Մ. **Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում հունիսի 16-ին** կայացած ներկայացուցչական գիտաժողովն էր՝ նվիրված հայ հանրագիտակ մտածող Խաչատուր Էրզրումեցու 350-ամյա հոբելյանին: Լ.Լաչիկյանը գիտաժողովում ներկայացրել է «Լեզվի և խոսքի գեղագիտության հարցերը Խաչատուր Էրզրումեցու աշխատություններում» զեկուցումը: ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի նիստերի դահլիճում գեղագետի ներկայացրած գործերը վերստեղծել են քաղաքային այն միջավայրը (Վենետիկ, Կ.Պոլիս), որտեղ 17-18-րդ դարերի սահմանագծին ապրել ու ստեղծագործել էր Խաչատուր Էրզրումեցին:

զ) Ուսումնառություն

«ԵՊՀ» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղն իր՝ **2015-16 ուսումնական տարին** սկսել է կարևոր իրադարձությամբ: **2015թ. օգոստոսի 24-ին** մասնաճյուղ է այցելել ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը՝ մարզի ղեկավարների հետ միասին: Պարոն Աշոտյանը մասնակցել է իր այցելության պատվին կազմակերպված՝ Կիրառական արվեստի ֆակուլտետի դասախոսների և ուսանողների ստեղծագործությունների ցուցահանդեսին և մասնաճյուղի դասախոսների հեղինակած գրքերի ցուցադրությանը: Այնուհետև ՀՀ ԿԳ նախարարի հետ անց է կացվել խորհրդակցություն, որի ընթացքում ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս.Առաքելյանը ներկայացրել է մասնաճյուղում իրականացվող առկա և հեռակա ուսուցման, գործող մասնագիտությունների վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն, քննարկվել են ուսումնական գործընթացին վերաբերող մի շարք հարցեր:

Ապագա մասնագետի մրցունակության և ստացած որակյալ կրթության ապացույցը նրա **գործնական հմտություններն ու պրակտիկ կարողություններն են**, իսկ դրանց ձևավորման գրավականը արդյունավետ և նպատակային կազմակերպված **պրակտիկաներն են**: Հետևաբար, տարատեսակ պրակտիկաների (ուսումնական, մանկավարժական, արտադրական, հաշվողական) կազմակերպումը և նրանց արդյունավետ անցկացումը մշտապես եղել և մնում է մասնաճյուղի գերակա խնդիրներից մեկը: Այն ուսանողների գործնական հմտությունների ձեռքբերման ու կարողությունների ձևավորման լավագույն միջոցն է և նպաատակ ունի զարգացնել ուսանողների մանկավարժական կարողությունները, աշակերտների հետ աշխատելու հմտությունները և մանկավարժական փորձը:

Ռազմավարական այդ խնդրի շրջանակներում **2016թ. հոկտեմբեր և նոյեմբեր** ամիսներին կրթական ծրագրերի պատասխանատուները մշակել են պրակտիկաների բարելավմանն ուղղված համալիր միջոցառումների ծրագիր: Կազմվել են բոլոր տեսակի պրակտիկաների համար նոր ծրագրեր, որոնցում, բացի ուսանողի պրակտիկ հմտությունների զարգացումն ապահովող պահանջներից, ներառված են նաև ուսանողի ինքնուրույն, ստեղծագործական և հետազոտական կարողությունները զարգացնելու պահանջներ՝ ապահովելով կիրառական-հետազոտական ուղղվածության զարգացումը, կապը կուրսային և ավարտական աշխատանքների թեմաների հետ: Պրակտիկաների ծրագրերը կազմելիս հաշվի են առնվել ուսանողների՝ թե՛ պրակտիկայի վայրի ընտրության,

ժամկետների և թե՛ բովանդակային կազմակերպման հետ կապված առաջարկները, որոնք վեր են հանվել համապատասխան հարցումների և քննարկումների միջոցով:

Ակնկալում ենք, որ կրթական **ծրագրերի պատասխանատուների ինստիտուտի ներդրումն** է՛լ ավելի կակտիվացնի պրակտիկաների նպատակային ու արդյունավետ կազմակերպումը, և 2016-17 ուստարվա ավարտին մենք կունենանք պրակտիկայից բավարավածության բարձր մակարդակ:

Նշենք, որ **2016թ.** անցկացրած պրակտիկայից բավարարվածության հարցման արդյունքների համաձայն՝ մասնաճյուղի **ուսանողները բավարարված են պրակտիկայի կազմակերպման գործընթացից** (միջին միավորը՝ **4.52**), նրանք կարծում են, որ ուսումնառության ընթացքում ձեռք բերած տեսական գիտելիքները և յուրացրած մեթոդները բավարարել են պրակտիկայի արդյունավետ իրականացմանը (միջին միավորը՝ **4.72**), և, որ ամենակարևորն է, պրակտիկան նպաստել է իրենց մասնագիտական կարողությունների և հմտությունների դրսևորմանը (միջին միավորը՝ **4.68**):

Հաշվետու ուստարում հատուկ ուշադրություն է դարձվել ուսումնական (դաշտային) պրակտիկայի կազմակերպմանը, իսկ որոշ ֆակուլտետների մի շարք պրակտիկաներ կազմակերպվել են մեկօրյա կամ 2-4 օր տևողությամբ ավտոբուսային երթուղիների ձևով ՀՀ տարածքում, ինչպես նաև քաղաքամերձ հետիոտն երթուղիներով: Արտադրական (այդ թվում՝ մանկավարժական) **պրակտիկա անցել են 223**, ուսումնական պրակտիկա են անցել **335 ուսանող**, որոնցից 10-ը՝ դաշտային:

Մասնաճյուղը զգալիորեն ընդլայնել է մարզում գործող հիմնարկ-ձեռնարկությունների, հանրակրթական դպրոցների և բանկային կազմակերպությունների հետ **պայմանագրային բազան**: Պայմանագրեր են կնքվել նաև մարզի ավագ դպրոցների, Տավուշի մարզային արխիվի, Իջևանի երկրագիտական թանգարանի, Տավուշի մարզային գրադարանի և ՀՀ ՊՆ թիվ N զորամասի, «SOS մանկական գյուղեր ծրագրի Իջևանի կենտրոն»-ի, այլ հաստատությունների հետ: Ճանաչողական պրակտիկաների, կուրսային և ավարտական աշխատանքների իրականացման շրջանակներում ուսանողներն այցելել են ՀՀ կենտրոնական բանկ, Երևանի կոնյակի գործարան, «Թեքնոլոջի ընդ Սայնս Դայնամիքս» ընկերություն՝ Մերգելյան ակումբի գործոնեությանը մոտիկից ծանոթանալու նպատակով, Վրաստանի մայրաքաղաք՝ զբոսաշրջային ներուժի ուսումնասիրության և լեզվական հմտությունների զարգացման նպատակով: Վերջին տարիներին մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողները մրցութային կարգով իրենց արտադրական պրակտիկաներն անց են կացնում հեռահաղորդակցության օպերատորներ «ՎԻՎԱ ՍԵԼ-ՄՏՍ» և «Օրանժ» ընկերություններում, ՀՀ ԿԲ-ի Դիլիջանի մասնաճյուղում: Ուրախությամբ նշենք, որ ուսանողների հետ պրակտիկ աշխատանքների ճիշտ կազմակերպումը տվել է իր արդյունքները, այդ են վկայում մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքների ուսումնասիրման արդյունքները, որոնց համաձայն՝ էապես բարելավվել են մեր ուսանողների տեսական գիտելիքները (միջին միավորը՝ **4.81**), գործնական հմտությունները (միջին միավորը՝ **4.55**) և մասնագիտական խոսքը (միջին միավորը՝ **4.64**), ինչպես նաև զարգացել է նրանց ստեղծագործական մոտեցումն իրենց գործունեության նկատմամբ (միջին միավորը՝ **4.66**):





Ուսանողներին մատուցվող խորհրդատվական և լրացուցիչ կրթական ծառայությունները զարգացնելու համար ամբիոնները յուրաքանչյուր կիսամյակի համար կազմում են պլան-ժամանակացույց, և համաձայն գրաֆիկի՝ իրականացվում են լրացուցիչ ուսումնական պարապմունքներ: Փաստենք, որ այդ գործընթացին ակտիվորեն ներգրավված են նաև բարձր առաջադիմությամբ ուսանողներ: Այսպես՝ հաշվի առնելով «Օտար լեզու և գրականություն» մասնագիտության ապագա առաջին կուրսի ուսանողների լեզվական տարբերությունները՝ **2016թ. սեպտեմբերից** մասնաճյուղում սկսել են իրականացնել ֆրանսերեն և անգլերեն լեզուներով արտալսարանային դասընթացներ:

Կարևորելով կրթական գործունեության եվրոպական միջավայր դուրս գալու անհրաժեշտությունը՝ մասնաճյուղը փորձում է կրթական ոլորտում զարգացնել միջազգայնացման գործընթացները: Եվ «Տնտեսագիտության տեսություն» կրթական ծրագրում՝ **2016-2017 ուստարվա ուսումնական պլանում, ներդրվել է** կամընտրական **մեկ օտարալեզու մոդուլ** (գործավարություն՝ ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներով): Նախատեսվում է 2017թ. սեպտեմբերից գործող բոլոր կրթական ծրագրերում ներդնել մեկա-կան օտարալեզու մոդուլ, 2018թ. սեպտեմբերից՝ երկուական օտարալեզու մոդուլ, 2019թ. սեպտեմբերից՝ երեքական օտարալեզու մոդուլ:

Մասնաճյուղի լավագույն ձեռքբերումներից են դեռևս 2014թ.-ից ուսումնական գործընթացում կիրառվող դասախոսի կողմից որակի ապահովման մեխանիզմներով համալրված **դասընթացների փաթեթները** (պորտֆոլիոները):

Դասընթացի փաթեթի կարևոր բաղկացուցիչ մասը դասընթացի ավարտին կոմպետենցիաների տերմիններով ձևակերպված ակնկալվող կրթական վերջնարդյունքներն են: Փաթեթում կրթական վերջնարդյունքների ձևավորման գործընթացն ավարտուն ներկայացվում է ըստ թեմաների կրթական վերջնարդյունքների ձևավորման քարտեզում: Այն ակնառու կերպով ցույց է տալիս, թե ինչպես է թեմաների միջոցով իրականացվում դասընթացի ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը, և ինչպես են վերջիններս շաղկապված դասընթացի բաղկացուցիչ մաս կազմող թեմաների հետ:

Դասընթացի և նրա յուրաքանչյուր թեմայի բարեհաջող ավարտին ուսանողի կողմից ձեռք բերվող կրթական վերջնարդյունքներից բացի՝ փաթեթը պարունակում է նաև դասընթացի վարման ռազմավարությունը (ստրատեգիան) և մարտավարությունը (տակտիկան), դրանցով պլանավորվում է դասընթացի ուսուցման արդյունավետ ու տրամաբանական կազմակերպումը, իրականացվում է դասընթացից դասավանդողի ու ուսումնառողի ձեռքբերումների գնահատումը և միտված է ոչ միայն ուսանողի գնահատմանը, այլև նրա անհատական մասնագիտական աճի ապահովմանը: Փաթեթներում

առանձնահատուկ տեղ է հատկացված ուսանողների ինքնուրույն աշխատանքների կազմակերպմանը և գնահատմանը:

Ըստ իրենց բովանդակության և ժամանակագրության՝ պորտֆոլիոյի փաստաթղթերը ներառվում են երեք բաժիններում.

- Փաստաթղթեր, որոնք ներառվում են դասընթացն սկսվելուց առաջ,
- Փաստաթղթեր, որոնք ներառվում են դասընթացի իրականացման ընթացքում,
- Փաստաթղթեր, որոնք ներառվում են դասընթացի ավարտից հետո:

2015-16 ուստարվա ավարտին մասնաճյուղի **10 մասնագիտական և 1 համամասնաճյուղային ամբիոններում** ընդհանուր առմամբ ներդրված են դասընթացի փաթեթների առաջին բաժինները, այսինքն՝ հնարավոր ենթադրվող փաթեթների **85%-ը,** իսկ գործընթացն ամբողջությամբ կավարտվի 2017թ. սեպտեմբերի դրությամբ:

Փաթեթի առաջին բաժինը կազմելիս դասախոսներն առաջնորդվել են Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից **մշակված ուղեցույցով**: Եվ համաձայն ընթացիկ ռազմավարական պլանավորման՝ արդեն բաժնի կողմից մշակվել են նաև դասընթացների փաթեթների **երկրորդ և երրորդ բաժինների կազմման ուղեցույցները**: Դրանք դասախոսների քննարկմանը կներկայացվեն **2017թ. փետրվարին**, ապա ՄԿՈԱ բաժնի մասնագետներն ըստ ժամանակացույցի կիրականացնեն համապատասխան խորհրդատվություններ, և արդեն 2017թ. սեպտեմբերից կսկսվի փաթեթների համալրման գործընթացը:

2015-16 ուստարվա ընթացքում ուսանողների գործնական հմտությունների ու պրակտիկ կարողությունների զարգացման, նրանց նպատակային ուսումնառության ապահովման համար մասնաճյուղն իրականացրել է համապատասխան աշխատանքներ ճանաչողական այցերի, բաց-դասերի, պլեներային դասընթացների և մանկավարժական ու արտադրական պրակտիկաների ձևով:

2015թ. սեպտեմբերի 30-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում տեղի է ունեցել հանդիպում Տավուշի թեմի առաջնորդի հետ: Հոգևոր դաս-քննարկման թեման էր «Հայ եկեղեցու առաքելության իրականացման ուղիները»: Ներկայացվել են Հայ եկեղեցու առաքելության գաղափարական հիմնադրույթները, տեսական նյութն ամրապնդելու նպատակով բերվել են համապատասխան օրինակներ Աստվածաշնչից, հայ մատենագրությունից, պատմագրությունից, Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկից, դասի թեման կապվել է ժամանակակից կյանքի երևույթների հետ:

2015թ. սեպտեմբերի 11-ին ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետում անց է կացվել **բնապահպանական դասընթաց,** որի ժամանակ զեկուցումներ են կարդացվել «Կարմիր գիրք, վտանգված տեսակներ», «Կարմիր գրքում գրանցված հյուսիսարևելյան Հայաստանի կենդանատեսակները և բուսատեսակները» թեմաներով: Դասընթացին ներկա են եղել նաև Տավուշի մարզպետարանի Բնապահպանության բաժնի ներկայացուցիչներ: Դասընթացն իր բովանդակությամբ ունեցել է գործնական և կիրառական նշանակություն,

այն հագեցած է եղել Հայաստանի Կարմիր գրքում զետեղված և ՀՀ հյուսիսարևելյան շրջաններում առկա տեսակների մասին զանազան տեղեկատվությամբ: Օգտագործվել է նաև «GIZ Կենսաբազմազանության կայուն կառավարում Հարավային Կովկասում» ծրագրի, Հայաստանի բնության պետական թանգարանի և Տավուշի մարզպետարանի կողմից տրամադրված գրականությունը: Ուսանողներն ակտիվ մասնակցել են Տավուշի մարզի վտանգված տեսակների, դրանց պահպանության ուղղությամբ ներկայումս տարվող աշխատանքների վերաբերյալ քննարկումներին: Նրանց առաջարկվել է ներկայացնել տեսակի պաշտպանության սեփական լուծումները: Առանձնակի ուշադրություն է դարձվել այնպիսի տեսակների, ինչպիսիք են կենին, արջատխլենին, նռնենին, արևելյան կակաչը, ծնեբեկը, անդրկովկասյան

գորշ արջը, կովկասյան անտառային կատուն, կատվաձը, միջերկրածովյան կրիան, բեզուարյան այծը, երկարականջ ոզնին: Պայմանավորվածություն է ձեռք բերվել Իջևանի դենդրոպարկում գործնական հետազոտություններ ու քննարկումներ կատարելու մասին:

2015թ. նոյեմբերի 3-ին «Սերվիս» մասնագիտության IV կուրսի ուսանողները «Հյուրանոցային և ռեստորանային մարքեթինգ» դասընթացի շրջանակներում **այցելել են** Ենոքավան համայնքում գործող հյուրանոցային համալիր: Այցը նպատակ է ունեցել տեսական գիտելիքները կիրառել գործնականում՝ կատարել դաշտային հետազոտություն և ստանալ տվյալ բիզնեսի նրբություններին վերաբերող մի շարք հարցերի պատասխաններ. ինչպիսի՞ն է հյուրանոցային և ռեստորանային ծառայությունների պահանջարկը, ի՞նչ ծառայություններ են մատուցվում, դրանց իրականացման ձևերը, ո՞րն է բիզնեսի նպատակային շուկան, ի՞նչ գնային քաղաքականություն է կիրառվում, ինչպիսի՞ն է մրցակցային դաշտը, որքա՞ն է մարքեթինգային բյուջեն, ի՞նչ մարքեթինգային ռազմավարությամբ է առաջնորդվում բիզնեսը, զարգացման ի՞նչ հեռանկարներ կան:

Մասնաճյուղի նախկին շրջանավարտներ և արդեն համալիրի աշխատակիցներ Արամն ու Նարեկը նախ ուսանողներին ներկայացրել են համալիրի լյուքս, դելյուքս և ստանդարտ տիպի հյուրատները, նրանց հիմնական տարբերությունները, գները և լրացուցիչ ծառայությունները՝ ձիարշավներ, երեկոյան խարույկ, ձկնորսություն, սպորտային խաղեր, այցելություն մարզի տեսարժան վայրեր, ինչպես նաև սեփական արտադրության

կաթնամթերք և մսամթերք (էկոսնունդ): Համալիրի տնօրենը նշել է, որ համալիրն ընդգրկում է էկո, գյուղական, ռեկրեացիոն և էքստրեմալ տուրիզմի ձևերը, ներկայացրել նոր՝ “Zip Line” ծառայությունը, որն առաջինն է ՀՀ-ում: Որպես համալսարանից առաջին այցելուների՝ նրանց հնարավորություն է տրվել օգտվել ծառայությունից: Համալիրի տնօրենը կատարել է մի քանի գործնական առաջարկներ. բիզնես համագործակցություն, աշխատատեղ (գիդ, մենեջեր, մատուցող, նկարիչ), տուրիստական ծառայությունների ոլորտում կարևոր չորս համակարգչային ծրագրերի ուսուցում համալսարանում և ապագա մենեջերների պատրաստում: Այդ այցելությունն ուսանողներին տվել է հյուրանոցային տնտեսությանը և ընդհանրապես զբոսաշրջությանը վերաբերող օգտակար գիտելիքներ ու գործնական հմտություններ:

2015թ. նոյեմբերի 19-ին ԵՊՀ ԻՄ-ի «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության 2-րդ և 4-րդ կուրսերի ուսանողները **ուսումնաճանաչողական այց են**

կատարել ԵՊՀ-ի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի փորձարարական հոգեբանության, անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիաներ: Փորձարարական հոգեբանության լաբորատորիայի գիտաշխատողները ուսանողներին ներկայացրել են լաբորատորիայի սարքավորումները և նրանց հետ իրականացրել մի քանի փորձ:

Անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության լաբորատորիայի գիտաշխատողներն ուսանողներին ծանոթացրել են լաբորատորիայի գիտահետազոտական աշխատանքներին, մասնագիտական հարուստ գրականությանը (ինչպես ժամանակակից, այնպես էլ մատենագիր), հոգեբանության դասագրքերին (հայերեն և օտարալեզու): Մեր ուսանողները եղել են նաև Կիրառական հոգեբանության կենտրոնում, որտեղ նրանց ծանոթացրել են թրեյնինգային սենյակին, ուր իրականացվել են խմբային և անհատական թերապևտիկ աշխատանքներ: Ուսանողներն այցելել են նաև «Կանաչ սենյակ-ծիածանային պարտեզ» երեխաների սոցիալականացման կենտրոն:

Կիրառական արվեստի ֆակուլտետում **2015-16 ուստարվա առաջին կիսամյակում**

ընթացել են ուսումնական պլաններով նախատեսված **դաս-պլեներներ**՝ «Գծանկարչություն» և «Գունանկարչություն» առարկաներից: Դաս-պլեներներն անց են կացվել Իջևանի «Մայր Հայաստան» հուշահամալիրի, դենդրոպարկի տարածքում, քաղաքի այլ գեղատեսիլ վայրերում, Հովքի լճի, Գոշավանքի շրջակայքում: Պլեներների անցկացման հիմնական նպատակը բնության գրկում ուսանողների գունատեսության, յուղաներկով աշխատելու գործնական հմտությունների ու կարողությունների զարգացումն է:

2015-2016 ուստարվա առաջին կիսամյակում «Սերվիսի համակարգի էթիկետ» դասընթացի շրջանակներում ԵՊՀ ԻՄ-ի «Սերվիս» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողներն **այցելություններ են կատարել** սերվիս մատուցող տարատեսակ հաստատություններ՝ հյուրատներ, զբոսաշրջային հանգրվաններ, բանկեր, բուժիմնարկներ և այլն: Ուսանողները եղել են Դիլիջանի «Փարադայզ» հյուրանոցում, «Մայիսյան կամուրջ» հանգստի համալիրում, Իջևանի բժշկական կենտրոնում: Նման այցելությունները նպաստում են ուսանողների ձեռք բերած տեսական գիտելիքների ամրապնդմանը, հարստացնում են կենսափորձը ու գործնական հմտությունները, նրանց հնարավորություն են տալիս հասկանալու, որ կյանքը ծառայության ամենատարբեր տեսակների իրարահաջորդ շղթա է, և հաճախ դրա մատուցման մակարդակով է պայմանավորված կյանքի որակը, նույնիսկ՝ տևողությունը:

2016թ. հունվարի 31-ին ԵՊՀ ԻՄ-ի «Սերվիս», «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտությունների ուսանողները “World Vision Armenia” կազմակերպության Ալավերդու ՏԶԾ-ի, Երիտասարդների ձեռներեցության ծրագրի և Տավուշի թեմի

աջակցությամբ **այցելել են** Ալավերդու տարածաշրջան՝ զբոսաշրջության ոլորտում փորձի փոխանակման նպատակով: Բարձր մակարդակով կազմակերպված ճանաչողական էքսկուրսիայի ընթացքում ուսանողներն այցելել են Սանահինի և Հաղպատի վանական համալիրներ: Նրանց դիմավորել են Տուրիզմի զարգացման և երիտասարդների ձեռներեցության ծրագրի ղեկավարն ու ծրագրի կամավորները: Նրանք ուսանողներին ներկայացրել են իրենց պատրաստած էքսկուրսիոն փաթեթները, որոնք պարունակում էին Սանահինի և Հաղպատի վանական համալիրներին վերաբերող ուշագրավ փաստեր,

հետաքրքիր և արժեքավոր տեղեկություններ մանրանկարչության, Սայաթ-Նովայի կյանքի և գործունեության վերաբերյալ: Ուսանողները եղել են “World Vision Armenia” կազմակերպության Ալավերդու գրասենյակում, որտեղ ամփոփվել են շրջայցի արդյունքները և քննարկվել Տավուշի մարզում (Հաղարծին վանական համալիրում) վերոնշյալ ծրագրի իրականացման հետագա քայլերը: Ուսանողներն ստացել են համապատասխան ցուցումներ և հանձնարարություններ Հաղարծին վանական համալիրի վերաբերյալ տվյալներ հայթայթելու և ներկայացնելու ուղղությամբ: Ճանաչողական այցի շնորհիվ մեր ուսանողները ձեռք են բերել զբոսաշրջությանը վերաբերող գործնական հմտություններ, նաև ստացել համագործակցության նոր հնարավորություններ:

2016թ. հունվարի 25-ից փետրվարի 20-ը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի «Հայոց լեզու և գրականություն», «Մանկավարժություն և հոգեբանություն», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» 3-րդ և «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Մանկավարժություն և հոգեբանություն» 4-րդ կուրսերի շուրջ 100 ուսանողներ Տավուշի և Գեղարքունիքի մարզերի հանրակրթական դպրոցներում անց են կացրել 2015-16 ուստարվա ուսումնական պլանով նախատեսված իրենց **մանկավարժական պրակտիկան**:

Պրակտիկայի խմբերի ղեկավարները պրակտիկանտ-ուսանողների հետ սահմանված կարգով իրականացրել են խորհրդատվություններ, պարզաբանել պրակտիկայի նպատակները, խնդիրները, նրա անցկացման ժամկետները, տրամադրել մեթոդական համապատասխան ցուցումներ և անհրաժեշտ գրականություն: Ուսանող-պրակտիկանտները մասնակցել են դասապրոցեսներին, կատարել դասալսումներ, որոնց արդյունքում ինքնավստահություն են ձեռք բերել ակտիվ պրակտիկայի համար:

Մանկավարժական պրակտիկայի առաջին փուլն ինքնաճանաչման, ինքնահաստատման բազմաստիճան գործընթացի առաջին աստիճանն է, որտեղ ուսանողները երեք տարիների ընթացքում իրենց ձեռք բերած տեսական գիտելիքներն օգտագործում են պրակտիկայում: Պրակտիկայի երկրորդ փուլում ուսանողն իրականացնում է ակտիվ մանկավարժական պրակտիկա, որի ընթացքում անցկացնում է դաս ուսուցիչ-մեթոդիստի հետ նախապես պլանավորած թեմայով: Ուսանողի վարած դասը լսում են ուսանողին կցված ուսուցիչ-մեթոդիստը և իր ընկեր-ընկերուհիները: Դասն ավարտելուց հետո այն քննարկվում է, մատնանշվում են դասի դրական և բացասական կողմերը: Մանկավարժական պրակտիկայի ընթացքում դրսևորվում են պրակտիկանտի մանկավարժական ընդունակությունները,

աստիճանաբար ձևավորվում է ուսուցչի մանկավարժական տակտ, վարպետություն և տեխնիկա:

2016թ. փետրվարի 22-ին ԵՊՀ ԻՄ-ի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողների մասնակցությամբ կայացել է **Մայրենի լեզվի միջազգային օրվան նվիրված բաց-դաս**, որը վարել է Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Աիդա Սարհատյանը: Նա հուզական անմիջականությամբ և լեզվական նուրբ զգացողությամբ ներկայացրել է «Մեր ժառանգության մեծագույն գանձի՝ հայոց լեզվի անփոխարինելի դերն ու նշանակությունը մարդու կյանքում. «Լեզուն մեր գոյությունն է, մեր էությունը, մեր մտքերն արտացոլող կախարդական բանալին, մեզ տրված աստվածային պարգևը, մեր առաջին թոթովանքն է, մեր արտասանած առաջին բառերը, մեր ապրած բոլոր զգացումները, մեր սերն է, սիրո անուշ շշուկների վերածված մեր առաջին խոստովանությունը, մեր ասված ու չասված թաքուն մտքերը, մեր կարոտի կանչն է, մեր սպասման թախիծը, հանդիպման երջանկությունը, մեր ապրած տառապանքն է, մեր ցավի ու հիասթափության արձագանքը, մեր վշտի մորմոքն ու մեր անբառ արցունքները, մեր սերն է հայրենիքի հանդեպ, մեր բնության հանդեպ, արևի, ծառ ու ծաղկի հանդեպ, մեր հայացքի խորունկ խորհուրդն է, ասված ու չասված խոսքերը, մեր երազանքը, մեր կյանքը, լեզուն հենց մենք ենք…»:

Մայրենի լեզուն անաղարտ պահելու կոչով հանդես են եկել ուսանողները, նրանց խոսքը, ի հետևանք իրենց դասախոսի սրտառուչ խոսքերի, անկեղծ էր, և զգացվում էր նրանց ընդգծված ջերմ վերաբերմունքը մայրենի լեզվի՝ որպես ժողովրդի ազգային գոյության և էության ամենախոշոր փաստի նկատմամբ:

2016թ. մարտի 15-ին մասնաճյուղի մի խումբ ուսանողներ ՀԵՀ Տավուշի մարզային կենտրոնի կամավորների հետ **այցելել են** Իջևանի պատմաերկրագիտական թանգարան: Թանգարանի աշխատակիցները երիտասարդներին ներկայացրել են թանգարանային նմուշները, հետաքրքիր փաստեր ցուցանմուշների վերաբերյալ, ինչպես նաև այն բացառիկ նմուշները, որոնք գտնվում են Իջևանի թանգարանում: Դրանցից ամենանշանավորը Իջևանի թիվ 4 դպրոցի տարածքում հայտնաբերված դամբարանից վերցված նմուշներն են: Ընդհանրապես թիվ 4 դպրոցի, Իջևանի հիվանդանոցի տարածքը Քրիստոսի ծննդից առաջ առաջին հազարամյակի դամբարանադաշտ է, որն ուսումնասիրվել է 1967թ.: Նորահայտ դամբարանում հայտնաբերվել են լավ պահպանված բրոնզե թուր, նետերի օքսիդիան ծայրեր, զրահաշապկի բրոնզե կոճակներ և այլն: Այցելության ընթացքում երիտասարդները ծանոթացել են նաև

Իջևանի տարածքի պատմությանը, մշակույթին և ձեռք բերել նոր գիտելիքներ տարածաշրջանի մշակույթի մասին:

2016թ. մարտի 11-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կայացել է Կիրառական արվեստի

ֆակուլտետի ուսանողների կիսամյակային **աշխատանքների ցուցադրությունը՝** նվիրված Մայրության և գեղեցկության միամյակին: Ցուցադրության բացումն ուղեկցվել է ֆակուլտետի առաջին կուրսի ուսանող Հովհաննես Չոբանյանի կողմից հնչեցված քյամանչայի հոգեպարար երաժշտությամբ, գեղեցկության շնչով ու գարնանային խանդավառ տրամադրությամբ: Մայրության և գեղեցկության միամսյակին նվիրված ցուցադրությունն առանձնահատուկ էր իր ձևաչափով, ընդգրկել է բազմաթիվ ու բազմաժանր ստեղծագործություններ՝ գոբելեն, բատիկա, գեղանկար, քանդակ, հագուստ, խեցի, փայտի գեղարվեստական մշակում և այլն:

2015-16 ուստարվա երկրորդ կիսամյակում ԵՊՀ ԻՄ-ի «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողները «Ձեռնարկության էկոնոմիկա» դասընթացի շրջանակներում **ճանաչողական այց են կատարել** Իջևանի գինու և կոնյակի գործարան: Ճանաչողական այցի ընթացքում ուսանողներին դիմավորել են գործարանի մասնագետ-տեխնոլոգները: Ուսանողներին ներկայացվել է արտադրության կազմակերպման գործընթացը, արտադրական տեխնոլոգիաները, մթերող սարքավորումները, հոսքագծերը, խմիչքների տեսակները, կազմակերպության ստեղծման պատմությունը և զարգացման հեռանկարները: Առանձնահատուկ նշվել է, որ կատարվում են կառուցողական աշխատանքներ, որոնց արդյունքում ավելի շատ խաղող կմթերվի, և կբարելավվի գինու կայունությունը: Ուսանողներն այցելել են գինու և կոնյակի մառաններ, նրանց ցույց են տվել, թե ինչ տեսակի գինիներ են պահվում կարասներում, ինչքան է դրանց հնությունը, և որ երկրներ են դրանք արտահանվում, իմացել են, որ գործարանն ընդլայնել է տեսականին. գինուց և կոնյակից բացի՝ առաջարկվում են շուկային օղի և պահածոներ: Արտահանելու նպատակով նմուշներ են ուղարկվել Չինաստան և Ճապոնիա: Մեր ուսանողներին հնարավորություն է տրվել ներկա գտնվելու օղու շշալցման գործընթացին:

2016թ. ապրիլի 5-ին ԵՊՀ ԻՄ-ի «Պատմություն» մասնագիտության առաջին կուրսում **հայրենասիրության թեմայով դաս է անցկացրել Վարուժան Կարապետյանը՝** Հերոսը: Նա հանդես է եկել պատմական համառոտ ակնարկով՝ ներկայացնելով 20-ական թվականներին ծավալված «Նեմեսիս» գործողության, «Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ» կազմակերպության հիմնադրման և գործունեության մասին: Իր խոսքում Հերոսը շեշտել է, որ արյան մեծ կանչն էր, արյան ցավը, ստրկության, ամոթի և անպատվության սև մրուրը, որ ստիպեց նրանց պայքարելու հանուն ազգային շահերի: Հերոսը անկախության սերնդի ներկայացուցիչներին՝ ապագա պատմաբաններին, որոնց մի մասը, հայրենիքի նկատմամբ սուրբ պարտքը կատարած, նոր էր զորացրվել Հայոց բանակից, պատգամել է անմնացորդ կերպով նվիրվել հայրենիքին:

2016թ. ապրիլի 15-ին ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի «Ինֆորմատիկա և Կիրառական մաթեմատիկա» մասնագիտության մի խումբ ուսանողներ՝ դասախոսների ղեկավարությամբ, **ճանաչողական այց են կատարել** «Թեքնոլոջի ընդ Սայնս Դայնամիքս» ընկերություն՝ Մերգելյան ակումբի գործունեությանը մոտիկից ծանոթանալու նպատակով: Այցը կազմակերպվել էր նույն թ. մարտի 14-ին «Թի-Էս-Դի» ընկերության ներկայացուցիչերի՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ կատարած այցելության ընթացքում ձեռքբերված պայմանավորվածության հիման վրա:

Մասնակիցներին ներկայացվել են «Թի-Էս-Դի» ընկերության թողարկվող արտադրանքները («Արմթաբ», «Արմֆոն» բրենդներ և այլն), հոսքագիծը, որտեղ փուլ առ փուլ մշակվում և ստացվում է վերջնական պատրաստի արտադրանքը: Ուսանողները ծանոթացել են սարքավորումների մշակման գործընթացներին: «Թեքնոլոջի ընդ Սայնս Դայնամիքս» ընկերության և «Նյու Թեքնոլոջի Էդուքեյշն Ֆոնդ» բարեգործական հիմնադրամի աշխատակիցները, ծրագրերի ղեկավարները ներկայացրել են իրենց կազմակերպությունը, նրա գործունեության հիմնական ուղղությունները, գործող «Startup»-երը, իսկ «Թի-Էս-Դի» ընկերության հիմնադիր տնօրեն Վահան Շաքարյանը խոսել է իրենց ձեռքբերումների և ծրագրերի մասին, փորձնական հարցազրույցի ձևով ներկաներին ուղղել մի քանի տրամաբանական հարց: Վ.Շաքարյանը հավելել է, որ պատրաստ է աջակցել և Իջևանի երիտասարդ հետազոտողների «Մերգելյան» ակումբի որոշ ուսանողների, իր իսկ ընտրությամբ, հրավիրել մասնագիտական պրակտիկայի: Պարոն Շաքարյանը նաև հույս է հայտնել, որ դրանով մասնաճյուղի հետ համագործակցությունը չի սահմանափակվի:

2016թ. մայիսի 4-ին Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Պատմություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողները «Թանգարանագիտություն և արխիվագիտություն» դասընթացի շրջանակներում **գործնական դաս են անցկացրել** Իջևանի պատմաերկրագիտական թանգարանում: Ուսանողները նախապես ուսումնասիրել և տեղեկություններ են հավաքել տավուշցի անվանի մարդկանց կյանքի ու գործունեության վերաբերյալ, ապա հանդես գալով թանգարանի աշխատակիցների դերում՝ ներկայացրել են դրանք: Գործնական դասի ընթացքում ուսանողները տեսական գիտելիքների հետ դրսևորել են իրենց գործնական հմտություններն ու կարողությունները:

2015-16 ուստարվա երկրորդ կիսամյակում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի «Սերվիս» մասնագիտության ուսանողները “GIZ” միջազգային կազմակերպության և «Տավուշի տուրիզմի զարգացման գործակալություն» հասարակական կազմակերպության ֆինանսավորմամբ իրենց **ուսումնական պրակտիկան իրականացրել են** Վայոց ձորի մարզում: Եռօրյա պրակտիկան հրաշալի հնարավորություն էր համատեղել ամառային հանգիստը նոր գիտելիքների և հմտությունների ձեռքբերման հետ: Պրակտիկայի ընթացքում ուսանողները արշավներ են կազմակերպել մարզի տարածքում, եղել կարևոր նշանակության պատմամշակութային վայրերում, հնարավորինս բացահայտել մարզի զբոսաշրջային ներուժը և փորձել են զուգահեռներ անցկացնել Վայոց Ձորի և Տավուշի մարզերի զարգացման հեռանկարների միջև: Արշավախմբի անդամները ծավալել են հետաքրքիր քննարկումներ իրենց հետագա անելիքների և ծրագրերի՝ մասնավորապես 2016թ. սեպտեմբերի 24-ին կայանալիք մարզային փառատոնի նախապատրաստական աշխատանքների շուրջ:

2016թ. մայիսի 12-ին ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողները «Բարբառագիտության հիմունքներ» դասընթացի **գործնական դասն անց են կացրել** մարզի Գանձաքար գյուղում: Նրանք այցելել են գյուղի տարեց բնակիչներին, ովքեր բնիկ գյուղացիներ են և այդ գյուղի

բարբառակիրները (Սեդա Ներկարարյան՝ 1932թ., Հրաչիկ Ներկարարյան՝ 1935թ., Մանյա Ներկարարյան՝ 1937թ., Բախշի Ստեփանյան՝ 1952թ.): Բարբառախոսների հետ ունեցած զրույցների հիման վրա ուսանողները հավաքել են իրենց հետաքրքրող և անհրաժեշտ նյութերը: Նրանք նախատեսել են հավաքած բարբառագիտական նյութերը ենթարկել առավել խոր ուսումնասիրության և հրատարակել որպես հոդված:

2015-16 ուստարվա երկրորդ կիսամյակում ԵՊՀ ԻՄ-ի «Սերվիս» մասնագիտության 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողները մասնագիտության խորհրդատուի, ուսումնական պրակտիկայի ղեկավարների ուղեկցությամբ **ուսումնական պրակտիկայի շրջանակներում այցելել են** Դիլիջան և Գոշավանք: Պրակտիկայի նպատակը Դիլիջանի և Գետիկի հովտի բնական ու մարդածին ռեկրեացիոն ռեսուրսների ճանաչումը և գնահատումն էր: Ուսանողները ճանաչողական այցը սկսել են Հայաստանի ժողովրդական արվեստի պետական թանգարանի Դիլիջանի մասնաճյուղից: Հովհաննես Շարանբեյանի անունը կրող մշակույթի կարևոր այս օջախը զբաղվում է հայ ժողովրդական արվեստի արժեքավոր նմուշների ձեռքբերման, պահպանման և ցուցադրման աշխատանքներով: Ուսանողները եղել են Թուֆենկյան Հին Դիլիջան համալիրում, ծանոթացել համալիրի բազմաբնույթ գործունեությանը, որն իր մեջ ներառում է ոչ միայն հյուրանոցային, այլ նաև արհեստագործական, առևտրային և թանգարանային ծառայություններ: Ապա այցելել են Տավուշի մարզի զբոսաշրջային ամենաշատ այցելուներ ունեցող Նոր Գետիկ (Գոշավանք) վանական համալիր: Պրակտիկայի ընթացքում ուսանողները գործնականորեն ամրապնդել են իրենց տեսական գիտելիքները:



2015-2016 ուստարվա II կիսամյակում «Հաշվապահական հաշվառում» առարկայի շրջանակներում ԵՊՀ ԻՄ-ի «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողները **գործնական դաս են անցկացրել** մասնաճյուղի անձակազմի կառավարման և հաշվապահության բաժիններում:

Անձակազմի կառավարման բաժնում ուսանողներին հանգամանորեն ներկայացվել են բաժնի գործառույթները, աշխատանքի ընդունման և աշխատանքից ազատման, աշխատանքային պայմանագրեր կնքելու կարգերը, գործավարությունը: Այդ ամենի հետ կապված՝ տրվել են իրավաբանական մեկնաբանություններ: Ներկայացվել են մասնաճյուղի աշխատակիցների անհատական գործերը:

Հաշվապահության բաժնում ամբողջական տեղեկատվություն է տրվել ՀԾ-6 համակարգի և նրա հնարավորությունների, աշխատավարձի հաշվման, պահումների կատարման, վճարման կարգերի մասին: Ուսանողներն իրենց հետաքրքրող հարցերի վերաբերյալ ստացել են սպառիչ պատասխաններ:



Այսպիսի գործնական դասերը նպաստում են ուսանողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների ամրապնդմանը:

2015-2016 ուստարվա II կիսամյակում ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողները «Մշակութաբանություն» առարկայի շրջանակներում **<u>այցելել են</u>** Իջևանի Սբ. Ներսես Շնորհալի եկեղեցի: Այցը համընկել է Մայրության և գեղեցկության օրվան, երբ Հայ առաքելական եկեղեցին նշում էր Սուրբ Մարիամ Աստվածածնի Ավետման տոնը: Ուսանողները ծանոթացել են եկեղեցում մեկ շաբաթից ավելի ցուցադրվող Սրբոց նահատակաց սրբապատկերին:

Շուրջ մեկ տարի առաջ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցած Հայոց ցեղասպանության ժամանակ հանուն հավատի ու հայրենիքի զոհվածների հավաքական սրբադասման արարողության ժամանակ օրհնված 2 սրբանկարներից մեկը՝ Սրբոց նահատակաց մեծադիր կտավը շրջում է թեմից թեմ՝ ի տես և ի երկրպագություն հավատավոր հայ ժողովրդի: Սրբանկարի հեղինակ, գյումրեցի տաղանդավոր գեղանկարիչ Տիգրան Բարխանաջյանը մեր ուսանողներին սիրով բացատրել է նկարի ստեղծման պատմությունը, իր առջև դրված խնդիրները և սրբանկարի խորհուրդը: Ուսանողներն աղոթքի միջոցով Բարձրյալից խնդրել են խաղաղություն և անսասանություն երկրին:

Նման այցելություններն ու հանդիպումները նպաստում են գործնական հմտությունների ձեռքբերմանը:

<u>Է) Քննաշրջաններ</u>

Յուրաքանչյուր ուստարում երկու անգամ, ըստ սահմանված կարգի, իրականացվում է ուսանողների ձեռքբերումների գնահատում, կուրսային, ավարտական աշխատանքների պաշտպանություն: Քննաշրջաններն անց են կացվում սահմանված կարգով, ըստ ժամանակացույցների, դասախոսները և ուսանողները քննություններին մոտենում են

ամենայն պատասխանատվությամբ, խախտումներ չեն նկատվում, քննությունների ընթացքում գործում է ազատ մրցակցության սկզբունքը:

Յուրաքանչյուր քննաշրջանից հետո Ուսումնամեթոդական վարչության պետ Ա.Դավթյանն ամփոփում է քննաշրջանը:

2015-16 ուստարվա երկու կիսամյակների քննաշրջանների արդյունքները, մասնաճյուղի առկա ուսուցման համակարգի ուսանողների առաջադիմությունն ըստ մասնագիտությունների ունեցել է հետևյալ պատկերը.

N	Մասնագիտության անունը	Առաջադիմությունը (%)					
		1-ին կիսամյակ			2-րդ կիսամյակ		
		ընդ.	անվճ.	վճ.	ընդ.	անվճ.	վճ.
Բնական գիտությունների ֆակուլտետ							
1	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	66,7	91,7	59,5	73,6	91,7	68,3
2	Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա	61,5	100	50	100	100	100
3	Քարտեզագրություն և կադաստրային գործ	72	100	68,1	100	100	100
Ընդամենը ֆակուլտետում՝		**67,4%**	**94,4%**	**60,8%**	**80,6%**	**93,3%**	**77,2%**
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ							
4	Պատմություն	75,7	95,2	67,9	84,6	100	79
5	Հայոց լեզու և գրականություն	73,9	100	63,8	89,2	100	85,1
6	Մանկավարժություն և հոգեբանություն	94,7	100	92,6	91,9	100	88,5
7	Հոգեբանություն	64,3	0	64,3	92,3	0	92,3
8	Ֆրանսերեն լեզու և գրականություն	87,5	100	82,1	90	100	85,7
9	Անգլերեն լեզու և գրականություն	80,2	100	76,5	96	100	95,2
Ընդամենը ֆակուլտետում՝		**79,8%**	**98,7%**	**72,5%**	**95,5%**	**100%**	**94,1%**
Տնտեսագիտության ֆակուլտետ							
10	Տնտեսագիտության տեսություն	60	95,5	50,6	69,6	93,8	62,3
11	Սերվիս	81,1	100	72,2	91,2	100	86,4
Ընդամենը ֆակուլտետում՝		**67,1%**	**97,4%**	**57,1%**	**76,7%**	**96,4%**	**69,3%**
Կիրառական արվեստի ֆակուլտետ							
12	Դիզայն	86,4	100	81,3	90,9	100	87,5
13	Կիրառական արվեստ	66,7	100	57,7	88,7	100	85,7
Ընդամենը ֆակուլտետում՝		**71,6%**	**100%**	**63,2%**	**83,0%**	**100%**	**76,9%**
Ընդամենը մասնաճյուղում՝		**74,0%**	**98,1%**	**65,8%**	**87,7%**	**98,2%**	**84,4%**

N	Ֆակուլտետի անունը	1-ին կիսամյակ						2-րդ կիսամյակ					
		Ուս. թիվը			Անբավարար ստացած ուս. թիվը			Ուս. թիվը			Անբավարար ստացած ուս. թիվը		
		Ընդ.	անվճ.	վճ.	ընդ.	անվճ.	վճ.	Ընդ.	անվճ.	վճ.	ընդ.	անվճ.	վճ.
1	Բնական գիտությունների	**92**	18	74	30	1	29	**72**	15	57	14	1	13
2	Հումանիտար գիտությունների	**327**	77	236	66	1	65	**242**	55	187	11	0	11
3	Տնտեսագիտության	**158**	39	119	52	1	51	**103**	28	75	24	1	23
4	Կիրառական արվեստի	**88**	20	68	25	0	25	**53**	14	39	9	0	9
Ընդամենը		***665***	***154***	***497***	***173***	***3***	***170***	***470***	***112***	***358***	***58***	***2***	***56***

Իր անցկացման ձևով 2015-16 ուստարում ուշագրավ և հետաքրքրական էր հատկապես «Դիզայն» մասնագիտության երկրորդ կուրսում «Աշխատանք նյութի վրա-3» **դասընթացի քննությունը**: Ուսանողները քննությանը ներկայացրել են կիսամյակի ընթացքում իրենց իսկ ձեռքով պատրաստած երեքական հագուստները: Թեև ուսանողների ընդհանուր պատրաստվածության մակարդակը նորմալ էր, սակայն դասավանդողներն առանձնացրել են այն հանգամանքը, որ բարձր կուրսերի ուսանողներն իրենց աշխատանքներում պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնեն ստեղծագործական մտքի, անհատականության դրսևորմանը՝ նմանակումը հասցնելով նվազագույնի:

2016թ. մայիսի 14-29-ը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում տեղի են ունեցել 2015-2016 ուստարվա առկա ուսուցման **ամփոփիչ ատեստավորման քննություններն ու ավարտական աշխատանքների պաշտպանությունները**:

Բուհի գործունեության արդյունավետության կարևորագույն բաղադրիչներից մեկը, եթե ոչ ամենակարևորը, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կողմից շրջանավարտների ամփոփիչ քննությանը և ավարտական աշխատանքների պաշտպանությանը տրված որակա-քանակական գնահատականներն են: Ի թիվս այլոց՝ ԵՊՀ ԻՄ-ի մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժնի կողմից հանձնաժողովներին տրվել է հաշվետվության հատուկ ձևաթերթ, որում հանձնաժողովին առաջարկվել է գնահատել շրջանավարտների ձեռք բերած ուսումնառության ընդհանրական արդյունքները, ավարտական աշխատանքների թեմաները, շրջանավարտների կողմից դրանց ներկայացման հմտությունը և համապատասխանությունը որակավորմանը:

Ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսուցման համակարգի տարբեր մասնագիտությունների հանձնաժողովներն ամփոփիչ ատեստավորման քննության արդյունքներից ստացած տպավորությունները, որակական գնահատականները ձևակերպել են յուրովի, սակայն դրանք հատվում են մի կետում, այն է՝ ԵՊՀ ԻՄ-ի՝ 2015-16 ուստարվա

շրջանավարտներն ընդհանուր առմամբ ունեն մասնագիտական գիտելիքների իմացության պատշաճ մակարդակ, դրանք կիրառելու անհրաժեշտ կարողություն, կրթական և մասնագիտական միջավայրում գրագետ դատողություններ անելու հմտություններ: Նրանք ազատորեն կարողանում են հայտնել ու քննարկել իրենց կարծիքը, հեշտությամբ հաղորդակցվում են հանձնաժողովի անդամների հետ, ներկայացնում լսարանից դուրս ստացած տեղեկությունները, ինչը յուրովի ինքնակրթության արտահայտություններից է, մի բան, որը կարևորվում է կրթական ներկա զարգացումներում:

Առավել բարձր էին ավարտական աշխատանքների պաշտպանությունների վերաբերյալ հանձնաժողովների արտահայտած կարծիքները: Ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսուցման համակարգերի հանձնաժողովները, տարբեր ու յուրովի ձևակերպումներով հանդերձ, համակարծիք էին, որ ԵՊՀ ԻՄ-ի՝ 2015-16 ուստարվա **շրջանավարտների ավարտական աշխատանքների** թեմատիկան համապատասխանում է մասնագիտության առաջադրվող պահանջներին, աշխատանքները հագեցած են հետազոտական արժանահավատ տվյալներով, հիմնախնդիրները վերլուծված են համակարգված սկզբունքով, մի բան, որն անշուշտ նաև գիտական ղեկավարների հետևողական աշխատանքի արդյունք է: Աշխատանքների մեծ մասում նկատելի են ուսանողների ինքնուրույնության տարրերը, գիտության արդի հիմնախնդիրներին, ինովացիոն տեխնոլոգիաներին անդրադարձը, նորովի մոտեցումները: Վիճելի դրույթների, տեսակետների կողքին մասնաճյուղի շրջանավարտները փորձել և հիմնականում կարողացել են հիմնավորել իրենց տեսակետները, վերլուծաբար օգտվել տեսական աղբյուրներից, հստակ, համոզիչ կերպով և տրամաբանորեն առաջադրել հարցադրումներն ու պատասխանել դրանց:

Հանձնաժողովի նախագահների արտահայտած ընդհանրական կարծիքի համաձայն՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղն ամփոփիչ քննության և ավարտական աշխատանքների ու դրանց պաշտպանության մակարդակով, դասախոսական կազմով, ուսանողների առաջադիմությամբ, իր կազմակերպվածությամբ և բուհին ներկայացվող պահանջներով **բավարարում է բակալավր պատրաստելու պահանջներին և յուրաքանչյուր ոլորտում պահանջարկին համապատասխանող կադրեր տալու զգալի ներուժ ունի**:

Շրջանավարտների ձեռք բերած ուսումնառության ընդհանրական արդյունքների մակարդակի վերաբերյալ և նրանց հետագա բարելավման ուղղությամբ մասնագիտական հանձնաժողովները տվել են իրենց գնահատականները և կատարել կարևոր ***առաջարկներ.***

- թարմացնել ուսումնական ծրագրերը, մեծ ուշադրություն դարձնել ռազմական պատմության հիմնահարցերին, այնպիսի թեմաներ առաջադրել, որոնք առավելապես արդիական հնչեղություն ունենան և անմիջականորեն առնչվեն հատկապես հայ իրականության և տարածաշրջանային հիմնախնդիրներին, ավելի շատ օգտագործել դիդակտիկ նյութեր և պատմական քարտեզներ, (***«Պատմություն»,*** հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ մասնագետ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Կլիմենտ Ամասիայի Հարությունյան),

- լուրջ ուշադրություն դարձնել հոգեկանի ֆիզիոլոգիական հիմքերի ուսումնասիրմանը, որպես ավարտական աշխատանքների թեմաներ ընտրել գլխավորապես տարածաշրջանային հիմնախնդիրների բացահայտմանը և լուծմանը վերաբերող թեմաներ (***«Մանկավարժություն և հոգեբանություն»,*** հանձնաժողովի նախագահ՝ Գյումրիի Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պրոռեկտոր, մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սպարտակ Սերյոժայի Սողոյան),

- ավարտական աշխատանքների թեմաները արդիական են, ուղղակի պետք է ավելացնել նրանց կիրառական կողմը (***«Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա»,*** հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Լևոն Գրիշի Մարդոյան),

- ավարտական աշխատանքների թեմաները համապատասխանում են որակավորմանը, բարձր են մասնագիտական գրականությունից օգտվելու և համադրելու ուսանողների կարողությունները (***«Հայոց լեզու և գրականություն»,*** հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի դոցենտ, բան. գիտ. թեկնածու Լավրենտի Աշոտի Միրզոյան),

- հարցաշարերում ընդգրկվեն ավելի կոնկրետ հարցեր, իսկ ավարտական աշխատանքները գրվեն ֆրանսերեն (***«Ֆրանսերեն լեզու և գրականություն»,*** հանձնաժողովի նախագահ՝ Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի ֆրանսերեն լեզվի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Մելանյա Սմբատի Ղազարյան),

- ավելի արդիական դարձնել ավարտական աշխատանքների թեմաները՝ ուշադրությունը կենտրոնացնելով նաև դրանց տրամաբանական կառուցվածքին և մյուս պահանջներին (***«Անգլերեն լեզու և գրականություն»,*** հանձնաժողովի նախագահ՝ Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի անգլերեն լեզվի բառագիտության և ոճաբանության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Լիլիթ Ասատուրի Բաղալյան),

- կատարելագործել հարցաշարերը՝ ոլորտը կարգավորող օրենսդրության համաձայն, բարելավել հարցատոմսերը՝ ապահովելով տարբեր դասընթացներին վերաբերող հարցերի համամասնությունը, մեծ ուշադրություն դարձնել ավարտական աշխատանքների վերլուծական կողմին, խնդիրներին լուծումներ տալու հմտություններին և պրակտիկ մոտեցումներին (***«Սերվիս»***, հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության վարչության պետ Մեխակ Վեմիրի Ապրեսյան),

- ամփոփիչ քննության և ավարտական աշխատանքների պաշտպանության միջև ապահովել որոշակի ժամանակահատված (***«Տնտեսագիտության տեսություն»,*** հանձնաժողովի նախագահ՝ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ամբիոնի պրոֆեսոր, տնտ. դոկտոր Մաքսիմ Տիգրանի Սարգսյան),

- առավել մեծ ուշադրություն դարձնել բնօրինակներին, ոչ միայն տեսականորեն իմանալ դրանց անվանումները, այլև մոտիկից տեսնել դրանք, իսկ ավարտական աշխատանքներում տրված են արդի ժամանակշրջանին հարիր կոմպոզիցիոն խնդիրների լուծումներ, առկա է թեմայի ճիշտ ընտրություն և իրականացում, ***գնահատելի է*** աշխատանքներում յուրօրինակ

նորարարական տարրերի օգտագործումը, դրանց ներկայացման մակարդակը և բանավոր խոսքը (***«Կիրառական արվեստ»***, հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ նկարիչների միության նախագահի տեղակալ-քարտուղար, պրոֆեսոր Խաչատուր Սուրենի Ազիզյան):

Ընդհանրացնելով տվյալ ամփոփիչ քննության (**Ա/ք**) և ավարտական աշխատանքների (**Ա/ա**) պաշտպանության քանակական գնահատականները՝ տեսնում ենք, որ դրանք նկատելի խզում չունեն խմբային սուբյեկտիվ տպավորությունների հետ, հակառակը՝ գրեթե լիովին համահունչ են դրանց: Այսպես՝ առկա և հեռակա ուսուցման համակարգերում ամփոփիչ քննություն հանձնած 368 ուսանողից **225**-ը (**61,0%**) ստացել է գերազանց և լավ գնահատականներ: Ավարտական աշխատանքներ պաշտպանած **365** շրջանավարտից գերազանց և լավ գնահատականներ է ստացել **258**-ը (**70,0**%):







4. Համագործակցություն

Մասնաճյուղն ակտիվացնում և ընդլայնում է համագործակցությունը իր հիմնական գործատու և նվիրատու կազմակերպությունների հետ, շարունակում է իրականացնել մի շարք միջազգային ***համագործակցային ծրագրեր***: Հաշվետու ուստարում այդ ծրագրերի շրջանակներում իրականացվել են վերապատրաստման տարբեր դասընթացներ դասախոսական կազմի և ուսանողության համար, ձեռք են բերվել արժեքավոր բուհական դասագրքեր և մեթոդական ուղեցույցներ, բարձր կուրսերի ուսանողների համար պարբերաբար իրականացվել են այցելություններ գործատու կազմակերպություններ, հետազոտական լաբորատորիաներ, պատմական վայրեր և այլն, իրականացվել են մասնագիտական գործնական պարապմունքներ: Այդ նպատակով հաճախակի մասնաճյուղում իրականացվել են հանդիպումներ արտասահմանցի անվանի գործիչների, գիտնականների, բուհերի ղեկավարների հետ և այլն:

Կրթական ծրագրերի արդիականացման նպատակով համագործակցության շրջանակներում մասնաճյուղում կարևորվել և պարբերաբար տեղի են ունեցել հանդիպումներ մարզի գործատուների հետ, որոնց ընթացքում քննարկվել և բացահայտվել են մասնաճյուղի շրջանավարտների տեսական ու գործնական պատրաստվածության վերաբերյալ խնդիրները, նշվել մեր շրջանավարտների ձեռք բերած ուսումնառության ընդհանրական արդյունքները, մասնագիտական գիտելիքների իմացության և կիրառման կարողությունների մակարդակը, հաղորդակցման, առաջադրված խնդիրների համակողմանի ուսումնասիրման և վերլուծության ունակությունները, մասնագիտական գրականությունից օգտվելու կարողությունները: Այդ հանդիպումների ժամանակ նշվել են մեր շրջանավարտների որոշ թերություններ և առավելություններ:

Գործատուների հետ հանդիպումների ժամանակ ընդունվել են մի շարք գործնական որոշումներ հետագայում նպատակային պրակտիկաների, ինչպես նաև կուրսային ու ավարտական աշխատանքների թեմատիկայի ընտրության և իրականացման գործում արտաքին շահակիցների (գործատուների) անմիջական մասնակցության ապահովման ուղղությամբ:

2015թ. սեպտեմբերի 16-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ են <u>**այցելել Վալանսի պատվիրակության ներկայացուցիչները**</u>՝ Վալանսի փոխքաղաքապետի գլխավորությամբ: Հանդիպման ընթացքում տնօրենի կողմից ներկայացվել է մասնաճյուղի, նրանում գործող մասնագիտությունների՝ հատկապես ֆրանսերեն լեզվի և գրականության վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն, նշվել, որ պետության կողմից ամեն ինչ արվում է ֆրանսերեն լեզվի ուսուցումը բարձր մակարդակով կազմակերպելու, այդ լեզուն ոչ միայն պահպանելու, այլև տարածելու, զարգացնելու ուղղությամբ, Իջևանում գործում են և ֆրանսերեն լեզվի ուսուցման կենտրոններ, որոնցում անվճար ֆրանսերեն է ուսուցանվում: Առանձնահատուկ ընդգծվել է, որ 2016-2017 ուստարվանից մասնաճյուղում հավասար

ժամաքանակով ֆրանսերեն կանցնեն նաև «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության ուսանողները: Քննարկվել են մասնաճյուղում ֆրանսերեն լեզվի ուսուցման, ուսանողների փոխանակման, դասընթացներ ու դասալսումներ կազմակերպելու վերաբերյալ մի շարք հարցեր:

Մասնավորապես նշվել է, որ Վալանսում մեկամսյա ուսումնական պրակտիկա անցած մեր ուսանողներն անչափ տպավորված են և՛ հյուրընկալությունից, և՛ ուսուցումից, առաջարկվել է, որ Վալանսի ուսանողներն էլ այցելեն մասնաճյուղ, հյուրընկալվեն Իջևանում:

Այնուհետև ֆրանսերենի ուսուցման սրահում Վալանսի փոխքաղաքապետը հանդիպել է «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտության մի խումբ ուսանողների հետ, ովքեր ֆրանսերենով հաղորդակցվել են փոխքաղաքապետի հետ, խոսել իրենց ուսանողական առօրյայից, ստացել իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները, վստահեցրել, որ սիրով ու պատասխանատվությամբ են ուսումնասիրում ֆրանսերենը: Հայ-ֆրանսիական համագործակցությունն ավելի սերտացնելու, լեզվամշակութային հաղորդակցությունը խորացնելու նպատակով առաջարկվել է 2016թ. գարնանը Իջևանի քույր քաղաք Վալանս մեկնող պատվիրակության կազմում ընդգրկել մասնաճյուղից ներկայացուցիչներ, հետագայում կնքել համաձայնության հուշագիր:

2015թ. դեկտեմբերի 16-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի **շրջանավարտների և կարիերայի կենտրոնի ու Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ի համագործակցության շրջանակներում** իրականացվել է «Մասնագիտական կողմնորոշման նոր քաղաքականություն» թեմայով սեմինար-քննարկում: Նախաձեռնության նպատակն էր ուսանողներին մասնագիտական կողմնորոշման և կարիերայի վերաբերյալ գիտելիքների տրամադրումը, սոցիալ-աշխատանքային տարբեր իրավիճակներում գտնվող անձանց մասնագիտության արդյունավետ ընտրության, փոփոխության և կարիերայի շարունակական զարգացման հնարավորությունների քննարկումը՝ նկատի ունենալով մարդու անձնային հատկանիշները և աշխատաշուկայի պահանջարկի փոփոխվող իրավիճակը: Սեմինար-քննարկումն անց է կացվել երկու՝ «Անգլերեն լեզու և գրականություն», «Հոգեբանություն և մանկավարժություն» մասնագիտությունների՝ շուրջ 40 ուսանողների հետ:

Սեմինարի ընթացքում ուսանողներին ներկայացվել են մասնագիտական կողմորոշման համակարգի ներդրման քաղաքականությունը, ՀՀ կառավարության՝ 2012թ. հոկտեմբերի 4-ի որոշմամբ հավանության արժանացած ՀՀ մասնագիտական կողմորոշման համակարգի զարգացման հայեցակարգը, դրանից բխող միջոցառումների ծրագիրը, համակարգի հիմնական նպատակը, այն է՝ անձի հետաքրքրություններին, կարիքներին և առանձնահատկություններին, ինչպես նաև աշխատաշուկայում որակավորված և մրցունակ կադրերի պահանջարկին առավելապես համապատասխանող մասնագիտական

գործունեության ազատ և գիտակից ընտրության հնարավորության ստեղծումը ողջ կյանքի ընթացքում: Քննարկվել է մասնագիտական կողմնորոշման գործընթացի բովանդակությունը՝ անձի բացահայտում և զարգացում, աշխատանքի դերերի և աշխատանքային հարաբերությունների մասին գիտակցության բարձրացում, կարիերայի կառավարման հմտությունների զարգացում, ձեռնարկատիրական հմտությունների զարգացում: Տարբերակվել են մասնագիտական կողմնորոշման աշխատանքները հանրակրթական դպրոցներում, նախնական արհեստագործական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում: Հետաքրքիր և ուսանելի սեմինար-քննարկման շնորհիվ ուսանողները նոր գիտելիքներ են ստացել աշխատանքի և կարիերայի զարգացման, մասնագիտական առանձնահատկությունների վերաբերյալ:

2016թ. հունվարի 12-ին ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս.Առաքելյանը **հանդիպել է "World Vision Armenia" կազմակերպության, Տուրիզմի տարածքային զարգացման ծրագրերի ներկայացուցիչների** (Անդրե Ուայթ /Անգլիա/, Օլգա Կովտուն /Ռուսաստան/, Նարինե Սիմոնյան /Ալավերդի/, Ինգա Մանուկյան) հետ: Հանդիպման նպատակն էր Տավուշի մարզում տուրիստական ծրագիր իրականացնելու շրջանակներում ծավալել համագործակցություն, ծրագրում ընդգրկել մասնաճյուղի ուսանողներին՝ նպատակ ունենալով նրանցից լավագույններին հետագայում նաև ապահովելու աշխատանքով:

Տուրիզմի տարածքային զարգացման ծրագրի պատասխանատուները ներկայացրել են իրենց ծրագրի էությունը, նպատակը, խնդիրները: Ծրագիրը հավանության է արժանացել մասնաճյուղի տնօրենի կողմից, ուրվագծվել են համագործակցության եզրերը, նախանշվել քայլերը: Նշվել է, որ այդ ծրագրում կարող են ընդգրկվել մասնավորապես Տնտեսագիտության ֆակուլտետի «Սերվիս», Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» և «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտությունների, Կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողները:

2016թ. փետրվարի 23-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կայացել է **հանդիպում «Կրթություն Հայաստան» հասարակական կազմակերպության ներկայացուցիչների** և տարբեր մասնագիտությունների չորրորդ կուրսերի ուսանողների ու դասախոսների հետ: Ծրագրի պատասխանատուները ներկայացրել են ծրագրի առաքելությունը, նրան դիմելու կարգը, պատասխանել մասնակիցներին հետաքրքրող հարցերին: Ծրագրի առաքելությունն է բարելավել Հայաստանի բոլոր երեխաների կրթության որակը՝ ներգրավելով և վերապատրաստելով համալսարանների շրջանավարտներին որպես ուսուցիչներ և այնուհետև 2 տարով

գործուղել նրանց Հայաստանի մարզային դպրոցներ, որտեղ կա տվյալ մասնագիտությամբ ուսուցչի կարիք: Ծրագրի առանձնահատկությունն այն է, որ պարտադիր չէ մասնակիցը լինի մասնագիտությամբ մանկավարժ, միայն հարկավոր է դասավանդելու և Հայաստանի զարգացմանը նպաստելու ցանկություն, մյուս խնդիրները, ինչպիսիք են՝ վերապատրաստումը, աշխատանքի տեղավորումը մարզային դպրոցներում, վարձատրությունը, կլուծի ծրագիրը: Հանդիպման ժամանակ ներկայացվել է, որ «Կրթություն Հայաստան» ծրագիրն իր մասնակիցներին հնարավորություն է ընձեռում անմիջական ազդեցություն ունենալու աշակերտների ներկայի և ապագայի վրա՝ միաժամանակ նաև զարգացնելով սեփական կարիերան, նշվել են ծրագրի մասնակիցներին տրվող արտոնությունները:

2016թ. մարտի 11-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում տեղի է ունեցել **հանդիպում «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի տնօրենի և աշխատակիցների հետ**, որը նախաձեռնել էր մասնաճյուղի ՈՒԽ-ն՝ ուսանողների խնդրանքով: Հանդիպման ընթացքում ուսանողները տեղեկացվել են բանկի կողմից ուսանող հաճախորդներին տրված արտոնությունների մասին: Ներկայացվել են բացառապես ուսանողների համար նախատեսված “Visa ISIC” քարտերը՝ աշխարհի ցանկացած մասում օգտագործման համար: Հանդիպման ժամանակ մանրամասն բացատրվել են ուսանողների համար վարկային քարտերի տրամադրման և վարկային սահմանաչափի սահմանման պայմանները: Նշվել է, որ ուսանողների համար գործում են հատուկ շահավետ փաթեթներ:

2016թ. մարտի 14-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ են **այցելել “Technology and Science Dynamics” ընկերության ներկայացուցիչները**՝ “Technology and Science Dynamics”, “New

Technology Education Fund (NTEF) Armenia” ընկերությունների հիմնադիր տնօրեն Վահան Շաքարյանը, նախագծերի համակարգող Շուշանիկ Վարդանյանը, մենեջեր Արփինե Ամիրյանը: Այցելության հիմնական նպատակն էր համագործակցել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հետ՝ ուսանողներին ընդգրկելու մարզում ստեղծվելիք Մերգելյան ակումբի գործունեության մեջ, հետագայում նրանցից լավագույններին ապահովելու աշխատանքով: “Technology and Science Dynamics” ընկերության **հիմնադիր տնօրենն** ընդհանուր գծերով

ներկայացրել է իրենց կազմակերպության գործունեությունը, նպատակը, խնդիրները, նշել է, որ “TSD”-ն գիտահետազոտական ընկերություն է, որն զբաղվում է բարձր տեխնոլոգիաների արտադրությամբ: Գիտահետազոտական ծրագրերի շրջանակներում ընկերությունը ձևավորել է «Երիտասարդ հետազոտողների Մերգելյան ակումբ», պլանավորվել է Տավուշի մարզում ևս ձևավորել համապատասխան ակումբ և նրա դասընթացներում ընդգրկել մարզի հիմնական բարձրագույն ուսումնական հաստատության՝ ԵՊՀ ԻՄ-ի ուսանողներին: **Որպես համագործակցության առաջին քայլ**՝ մասնաճյուղի տարբեր մասնագիտությունների (գլխավորապես բնագիտական ուղղվածության) ուսանողների հետ իրականացվել է սեմինար-քննարկում: “TSD” գիտահետազոտական ընկերության ներկայացուցիչների կողմից առաջարկվել է հետաքրքրված ուսանողներից ձևավորել նախնական խումբ և իրենց արտադրամասերի ու Մերգելյան ակումբի գործունեությանը մոտիկից ծանոթանալու նպատակով ճանաչողական այց կազմակերպել:

2016թ. ապրիլի 14-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ են **այցելել ԵՊՀ-ի ֆրանսիական բանասիրության ամբիոնի ներկայացուցիչները** (դասախոս, Ռոմանագերմանական ֆակուլտետի փոխդեկան Լիլիթ Կարապետյանը, դասախոս Թագուհի Բլբուլյանը, ավագ գործավար Լիլյա Հովհաննիսյանը) և Մոնպելյեի համալսարանի պրոֆեսոր, միջնադարյան գրականության մասնագետ Ֆրանսուա Ռուդոն:

Այցելության հիմնական նպատակն էր ԵՊՀ ԻՄ-ի «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտության ուսանողների համար «Ֆրանսիական վերածննդի գրականությունը» թեմայով դասախոսություն կարդալը: Պատվիրակության անդամների և մասնաճյուղի տնօրեն Ս.Առաքելյանի միջև տեղի ունեցած հանդիպման ընթացքում քննարկվել են ֆրանսերեն լեզվի պահպանմանն ու զարգացմանն ուղղված հարցեր, նշվել է, որ մասնաճյուղի դասախոսների վերապատրաստման և ուսանողների փոխանակման ծրագրերի իրականացման գործում զգացվում է ֆրանսիական դեսպանատան աջակցության կարիքը, պատմական համառոտ ակնարկ է կատարվել հայ և ֆրանսիացի ժողովուրդների դարավոր բարեկամության մասին:



Այնուհետև «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտության տարբեր կուրսերի ուսանողների համար «Ֆրանսիական վերածննդի գրականությունը» թեմայով (ֆրանսերեն) բավականին հետաքրքիր դասախոսություն է ներկայացրել **Մոնպելյեի համալսարանի պրոֆեսոր Ֆրանսուա Ռուդոն**: Դասախոսությունից հետո ուսանողները պրոֆեսորին ուղղել են թեմային առնչվող բազմաթիվ հարցեր: Ապա մասնաճյուղի օտար լեզուների ամբիոնում

կայացել է ԵՊՀ-ի ֆրանսիական բանասիրության ամբիոնի ներկայացուցիչների հետ հանդիպում, որի ընթացքում քննարկվել են «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտության առարկայական ծրագրերի, դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառման ոլորտում մայր բուհի և մասնաճյուղի համագործակցությանը վերաբերող հարցեր:

2016թ. ապրիլի 23-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բակում **տեղի է ունեցել** Հայոց ցեղասպանությունից 110.000 հայ որբերի փրկած դանիացի միսիոներուհի Մարիա Յակոբսենին (նրա արձանը երկու տասնամյակից ավելի գտնվում է մասնաճյուղի բակում, նախկինում նրա անունով էր կոչվում նույն վայրում գտնվող մանկապարտեզը) նվիրված միջոցառում: Միջոցառումը նախաձեռնել և կազմակերպել են **Դանիայի Թագավորության հյուպատոսությունը Հայաստանում**, Հայոց ցեղասպանության թանգարանը, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Տավուշի թեմը, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը, Դանիական-հայկական բարեգործական առաքելությունը՝ Մարիա Յակոբսենի մահվան 55-րդ տարելիցի և Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի եզրափակմանն ընդառաջ: Այս առիթով Տավուշ էին այցելել Դանիայի Թագավորության հյուպատոսության ներկայացուցիչներ՝ պատվավոր հյուպատոս Գագիկ Գյուլբուդաղյանի գլխավորությամբ, Դանիական-հայկական բարեգործական առաքելությունը՝ ղեկավար Նանե Խաչատրյանի գլխավորությամբ, պատվավոր հյուրեր, «Իմպրովիզ» քանոնահարների խումբը, աստվածաբանության ֆակուլտետի ուսանողներ, լրագրողներ և ուրիշներ: Նախ՝ Տավուշի թեմի առաջնորդ Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանյանն իրականացրել է Իջևան քաղաքում Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող Սուրբ նահատակաց խորանի սեղանի օծում և հոգեհանգստի արարողություն՝ նվիրված Մարիա Յակոբսենին: Ապա ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բակում՝ Հայաստանում Մ.Յակոբսենին նվիրված միակ հուշարձանի մոտ (հեղ.՝ Արա Շիրազ) տեղի է ունեցել միջոցառում: ԵՊՀ ԻՄ-ի տնօրենը, ողջունելով հյուրերին, միջոցառման նախաձեռնողներին ու մասնակիցներին, ընդգծել է Մարիա Յակոբսենի մեծությունը, երախտաբար արժևորելով նրա մարդասիրական մեծ առաքելությունը, խոստանալով, որ մասնաճյուղում սահմանվելու է **Մարիա Յակոբսենի անվան կրթաթոշակ** այն ուսանողների համար, ովքեր աչքի կընկնեն բարեգթությամբ, բարեսրտությամբ և միջավայրի նկատմամբ բարի ցանկություններով: Ելույթ են ունեցել պատվավոր հյուպատոս Գագիկ Գյուլբուդաղյանը, Տավուշի թեմի առաջնորդ Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը, Օձունի քահանա Տեր Վրթանես Բաղալյանը: Դանիական-հայկական

բարեգործական առաքելության ղեկավար Նանե Խաչատրյանը Մարիա Յակոբսենի վերաբերյալ ներկայացրել է արժեքավոր տեղեկություններ՝ քաղված Հայոց ցեղասպանության թանգարանում պահվող արխիվային նյութերից: Նա իր ելույթը եզրափակել է Մարիա Յակոբսենի աղոթքների գլխավոր հիշատակությամբ՝ «Տե՛ր Աստված, թո՛ղ այս մանուկները փուչիկի պայթյունից ավելի ուժեղ ձայն չլսեն»: Դանիայի թագավորության հյուպատոսությունը՝ պատվավոր հյուպատոս պարոն Գագիկ Գյուլբուդաղյանի գլխավորությամբ, Մարիա Յակոբսենի գերեզմանից հող էր բերել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, որն իբրև սրբազան մասունք կպահպանվի մասնաճյուղում: Այնուհետև մասնաճյուղի ուսանողական խորհրդի աջակցությամբ գրադարանում տեղի է ունեցել Մարիա Յակոբսենի անձնական իրերի և վավերագրական ֆիլմի ցուցադրությունը, ներկայացվել է Յակոբսենի կյանքի և գործունեության վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն: Մասնաճյուղում ամբողջ միջոցառումն ուղեկցվել է ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողների աշխատանքների՝ Մարիա Յակոբսենին նվիրված ցուցահանդես-վաճառքով:

2016թ. մայիսի 6-ին և 11-ին «Տավուշի զբոսաշրջության զարգացման գործակալություն» ՀԿ-ի հետ <u>համագործակցության շրջանակներում</u> կայացել են ԵՊՀ ԻՄ-ի «Սերվիս» մասնագիտության ուսանողների հերթական հանդիպումները ՀԿ-ի նախագահ, էքսկուրսավար-թարգմանիչ Հովհաննես Ղահրամանյանի հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են երկու կողմերի համագործակցությանն առնչվող հարցեր, մասնակիցներին տրվել են զբոսաշրջային վայրերի մասին անգլերեն լեզվով բուկլետներ: Ձեռք է բերվել գործնական պարապմունքներ, էքսկուրսիաներ կազմակերպելու պայմանավորվածություն:



2016թ. հունիսի 29-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում տեղի է ունեցել **<u>հանդիպում</u> «Հայ-ֆրանսիական բարեկամություն» կազմակերպության կամավոր Ժուլիեն Լըկուտուղիեի հետ**: Հանդիպման նպատակն էր նշված մասնագիտության ուսանողներին կրթաթոշակներ հանձնելը: Ժուլիեն Լըկուտուղիեն հանձնեց «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողների երկրորդ կիսամյակի կրթաթոշակները և դրամական պարգևներ՝ նույն մասնագիտության անվճար հիմունքներով սովորող երկրորդ, երրորդ և չորրորդ կուրսի 5 ուսանողուհիների: Հանդիպման վերջում երիտասարդ կամավորն ամփոփել է իր մեկ տարվա կատարած աշխատանքը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում և Անժելա Վանեսյանի անվան ֆրանկոֆոնիայի կենտրոնում:

2016թ. ապրիլի 29-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ են **<u>այցելել</u> Ռուսաստանի Դաշնության Գժելի պետական համալսարանի պատվիրակության ներկայացուցիչները՝** Սերվիսի և տուրիզմի ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Տատյանա Լիսիցինան (պատվիրակության ղեկավար), նույն ամբիոնի դոցենտ, Ռուսաստանի Դաշնության վաստակավոր նկարիչ, ՌԳՄ անդամ, մանկավարժական գիտությունների թեկնածու Իրինա Կորշունովան, մշակութաբանության թեկնածու, դոցենտ, զբոսավար Ալլա Կորժանովան:

Այցելության հիմնական նպատակը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հետ **<u>համագործակցության պայմանագիր</u>** կնքելը, համատեղ ծրագրեր իրականացնելն էր:



ДОГОВОР О СОТРУДНИЧЕСТВЕ

пос. Электроизолятор «29» IV 2016 г.

Федеральное государственное бюджетное образовательное учреждение высшего образования «Гжельский государственный университет» (ГГУ), в лице ректора Илькевича Бориса Владимировича, действующего на основании Устава университета, с одной стороны, и Иджеванский филиал «Ереванский государственный университет» в лице директора Аракеляна Самвела Аршавировича, действующего на основании Устава Иджеванского филиала «ЕГУ», с другой стороны, учитывая необходимость повышения профессиональной мобильности преподавателей и академической мобильности студентов, внедрения и использования инновационного опыта и научных разработок в образовательном процессе, составили Договор о нижеследующем:

1. ПРЕДМЕТ ДОГОВОРА

1.1. Стороны договариваются совместно действовать с целью объединения усилий в решении задач и проблем научно-исследовательской, учебно-методической деятельности, воспитательной работы со студентами и внедрения инновационных образовательных технологий.

1.2. Стороны обязуются сотрудничать в области науки и образования по следующим направлениям:

– обмен преподавателями, аспирантами, магистрантами, студентами с целью стажировки и повышения квалификации, а также специалистов для чтения лекций, проведения научных исследований и консультаций;

Հանդիպման ընթացքում կողմերը ներկայացրել են կրթական և գիտամշակութային գործունեություն իրականացնող երկու համալսարանների առաքելությունները, հիմնական խնդիրները, գործող ֆակուլտետներն ու մասնագիտությունները, ապա քննարկելով համագործակցության պայմանագրի դրույթները՝ ստորագրել են այն:

Այնուհետև Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Ն.Խուդավերդյանի հետ ձեռքբերված պայմանավորվածության համաձայն՝ պատվիրակության անդամները ֆակուլտետի «Սերվիս» մասնագիտության ուսանողների հետ ունեցել են սեմինար-քննարկում, որի ընթացքում տիկին Լիսիցինան շնորհանդեսի ուղեկցությամբ ուսանողներին ներկայացրել է Գժելի պետական համալսարանի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն, իրենց բուհում գործող ֆակուլտետները, մասնագիտությունները, տարատեսակ խմբակները (պարի, սպորտի, ժամանցի և այլն), բակալավրական, մագիստրոսական և ասպիրանտական ուսուցման պայմանները, վճարովի և անվճար ուսուցման հնարավորությունները և այլն:

Ապա տեղի է ունեցել հանդիպում Կիրառական արվեստի ֆակուլտետում, որտեղ ֆակուլտետի դեկանը և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչները Ռուսաստանից ժամանած հյուրերին ներկայացրել են ֆակուլտետի ամբիոնները (Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի, Գծանկարի, գունանկարի և քանդակի), մասնագիտությունները («Կիրառական արվեստ», «Դիզայն») և արվեստանոցները (գծանկարի և գունանկարի, տեքստիլի, դիզայնի, խեցեգործության, քանդակի և այլն): Արվեստանոցներում հյուրերը տեղում ականատես են եղել աշխատանքների

ստեղծագործական պրոցեսին, դրանց ստեղծման տեխնիկային: Նրանք մեծապես տպավորված էին ֆակուլտետի ուսանողների և շրջանավարտների բազմաժանր ստեղծագործություններով, որոնց մի մասը ցուցադրված էր ֆակուլտետում, իսկ մյուս մասը՝ Իջևանի քաղաքային պատկերասրահում:

Կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողների համար պատվիրակության անդամ, ՌԴ վաստակավոր նկարիչ **Իրինա Կորշունովան վարպետության դաս** է տվել: Նա շնորհանդեսի ուղեկցությամբ տեսականորեն ներկայացրել է Գժելում թողարկվող կերամիկական արտադրության պատմությունը, ուսանողներին ծանոթացրել իրենց համալսարանում դրա ստեղծման, մշակման տեխնիկային, իրենց կողմից ստեղծված և արտադրության մեջ դրված զարդանախշերին: Այնուհետև այդ նախշերից մեկը վարպետ ձեռքով վրձնել է ներկաների համար՝ արժանանալով բոլորի հիացմունքին:

5. Տեղեկատվական համակարգեր, տեղեկատվական ռեսուրսների զարգացում

Մասնաճյուղում տարեցտարի բարձրացվում է ներքին և արտաքին **տեղեկատվական ռեսուրսների մատչելիությունը**, որին աջակցում են անվճար ինտերնետ կապը, էլեկտրոնային ընթերցասրահը, էլեկտրոնային հարուստ պաշարները: Մասնաճյուղի գրադարանային ֆոնդը ներառում է 14623 գիրք, որից 6056-ը դասագիրք է, 2390-ը ծրագրային գեղարվեստական, 2942-ը՝ ուսումնամեթոդական և ուսումնաօժանդակ գրքեր են, գրադարանը համալրված է 1750 էլեկտրոնային-տեղեկատվական նյութերով, 70 քարտեզներով և այլն: Գրադարանային ֆոնդի համալրումը կատարվել է մասնաճյուղի կողմից գնման և նվիրատվությունների միջոցով (այդ թվում՝ ուսանողների և դասախոսների կողմից): Մեծաքանակ ուսումնագիտական և մասնագիտական գրքեր է հատկացրել Մայր բուհը: Մասնաճյուղի կողմից օպտիկական կապի ձեռքբերման շնորհիվ մայր բուհի կողմից տրամադրվել է գերարագ ինտերնետ կապ, որը հնարավորություն է տալիս օգտվելու մայր բուհի գրադարանի պայմաններից՝ lib.ysu.am էլեկտրոնային հասցեի միջոցով: Գրադարանում հաշվետու ժամանակաշրջանում ավելացվել է նաև համակարգիչների թիվը, տեղադրվել է նոր տպող սարք, լուսապատճենահանման սարք (սկաներ):

Ուսանողներին հասանելի գրականության թիվը տարեցտարի ավելացել է, ստեղծվել է նաև էլեկտրոնային գրադարան՝ դասավանդվող բոլոր մոդուլների էլեկտրոնային դասախոսությունների և հիմնական դասագրքերի թվայնացված տարբերակներով: Ավելացել է մեկ ուսանողին ընկնող գրականության ձեռքբերման տարեկան ծախսերը, պայմանավորված գրականության նկատմամբ ունեցած պահանջով, հրատարակված նոր մասնագիտական գրականության անհրաժեշտությամբ, մասնագիտական գրքերի բարձր գներով, ինչպես նաև նոր մասնագիտությունների համար անհրաժեշտ գրականությամբ:

Ուսումնական գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Բնական գիտությունների և Կիրառական արվեստի ֆակուլտետների ուսանողների համար մասնաճյուղի թիվ 2 մասմասնաշենքում ստեղծվել է հարմարավետ ընթերցասրահով երկրորդ գրադարանը:

Անընդհատ կատարվում է գրքերի թվայնացում, ինչպես նաև գրքերի ներբեռնում ինտերնետային տարբեր կայքերից՝ lib.ysu.am, www.freebooks.do.am, www.usum.am, www.nwravank.am, www.nla.am, www.eknigi org, www.luys.am և այլն:

Օպտիկական կապ ձեռք բերելու շնորհիվ Մայր բուհի կողմից տրամադրվել է գերարագ ինտերնետ կապ, որը հնարավորություն է տալիս օգտվելու ինչպես ԵՊՀ-ի Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գիտական գրադարանի էլեկտրոնային գրքային ֆոնդից՝ www.lib.ysu.am էլեկտրոնային հասցեի միջոցով, այնպես էլ հանրապետության ֆունդամենտալ գրադարանների էլեկտրոնային պաշարներից:

Գրադարանն ունի իր էլեկտրոնային տեղեկատու համակարգը: Նախատեսվում է գրադարանում կիրառել ընթերցողների էլեկտրոնային սպասարկման համակարգ:

Պետք է նշել, որ մասնագիտական գրականության սակավության պատճառով առայժմ հնարավոր չէ յուրաքանչյուր ուսանողին ապահովել անհրաժեշտ ուսումնական գրականությամբ: Այս խնդիրը լուծվում է 2 ընթերցասրահների գործունեության ակտիվացման և բարելավման հաշվին:

Մասնագիտական գրականությունից ուսանողների և դասավանդողների պահանջարկը բավարարելու համար գրադարանը տարեկան երկու անգամ ամբիոններից հավաքագրում է անհրաժեշտ գրականության ցանկը և կազմակերպում դրանց հնարավոր ձեռքբերման գործընթացը: Ամբիոնների դասախոսներն իրենց՝ դեռևս չհրատարակած աշխատանքները, դասախոսությունները էլեկտրոնային տարբերակով տրամադրում են մասնաճյուղի գրադարանին:

Տարվում են աշխատանքներ միջազգային գրադարանային ցանցերին մասնաճյուղի մասնակցությունն ընդլայնելու ուղղությամբ:

Մասնաճյուղում գործում է **ներքին համակարգչային ցանց**, որը միավորում է շուրջ 140 համակարգիչ, 2 Wi-Fi անկյուն և նույն հնարավորությամբ խորհրդակցությունների դահլիճ:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ղեկավարությունն իրապես կարևորում է տարաբնույթ հարցումների միջոցով տեղեկատվության հավաքագրման հնարավորությունը և նման տեղեկույթը ձգտում է օգտագործել ի շահ կրթօջախի: Դրա ապացույցն են Մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժնի կողմից վերջին 4-5 տարիներին մասնաճյուղում անցկացված բազմաթիվ հարցումները, նրա արդյունքների մանրամասն քննարկումն ու առօրյա աշխատանքում կիրառումը:

2015-2016 ուստարվա առկա ուսուցման շրջանավարտների շրջանում անցկացված հարցման (**ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության**) արդյունքների համաձայն՝ մասնաճյուղի շրջանավարտները բավարարված են մասնաճյուղի լսարանների, ուսումնական լաբորատորիաների ու համակարգչային սրահների կահավորանքից և հատկապես համակարգչային սրահների մատչելիությունից.

h	Որքանո՞վ եք բավարարված.	Միջ.գն.	Անգլ	Կ/Ա	ԿՄՖ	ՀԼԳ	Մ/Հ	Պատմ	Սերվ	Տնտ	ՖրԼ
1	Լսարանների վիճակից և կահավորանքից	4,4	4,3	4,5	4,0	4,5	4,0	4,3	4,2	4,8	4,1
2	Ուսումնական լաբորա-տորիաների ժամանակակից սարքավորումներով հագեց-վածության աստիճանից և կահավորանքից	4,3	4,0	4,6	4,2	4,6	4,0	4,0	4,2	4,7	4,0
3	Համակարգչային սրահների մատչելիությունից և կահավորանքից	4,6	4,2	4,9	4,9	4,7	4,6	4,4	4,6	4,9	4,6
4	Մասնաճյուղի համացանցի (ինտերնետի) մատչելիությունից	4,5	4,2	4,8	4,9	4,6	4,0	4,1	4,6	4,8	4,4

Վերջին 4 ուստարիների հարցման արդյունքների համաձայն՝ նրանց բավարարվածության մակարդակն էապես բարձրացել է, ինչը վկայում է բարելավման ուղղությամբ իրականացված գործընթացների արդյունավետության մասին.









Իսկ ըստ <u>ԵՊՀ ԻՄ-ից բավարարվածության</u> ուսանողական հարցման արդյունքների՝ նրանք հիմնականում բավարարված են լսարանների կահավորումից, տեխնիկական հագեցվածությունից, առանձնապես նրանց բավարարարում է ընթերցասրահի հարմարավետությունը, փոխարենը նրանց չի բավարարում գրադարանում առկա մասնագիտական գրականությունը:

5-բալանի սանդղակով հիմնականում 4,5-ից բարձր գնահատականները հավաստում են, որ գրավիչ ու մատչելիություն ապահովող կառուցվածքով լիարժեք տեղեկույթի մատուցումը բուհական կյանքի նորությունների, նախատեսվող ու անցկացվող բազմաբնույթ միջոցառումների, գիտաուսումնական ոլորտում ձեռքբերումների մասին կայքը դարձրել են

մասնաճյուղի գործունեության արդյունավետության ապահովման գրեթե անփոխարինելի միջոց.

h	Ուսանողների բավարարվածությունը կայքի. /2015-16 ուստարի, առկա/	Միջ.գն.
1	կառուցվածքից,	4,71
2	տեղեկատվության ստացման հարմարավետությունից,	4,62
3	տեղեկատվության լիարժեքությունից,	4,55
4	նորությունների լուսաբանումից,	4,65
5	ընդհանուր գրավչությունից:	4,39

Գրադարանն իր հարմարավետ ընթերցասրահով իզուր չէ, որ գրավում է ուսանողներին. այդտեղ նրանք հնարավորություն ունեն ազատ բանակցելու, արտահայտելու իրենց կարծիքը, զարգացնելու իրենց հոգևոր պահանջմունքները: Գրադարանը, ակտիվ համագործակցելով մասնաճյուղի ֆակուլտետների, ամբիոնների, ուսանողական կառույցների հետ, դարձել է յուրօրինակ գիտամշակութային օջախ:



2016թ. մարտի 3-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գրադարանում կայացել է «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողուհի Մերի Գասպարյանի անդրանիկ՝ «Մոխրագույն լուսին» գրքի շնորհանդեսը: Գիրքն ընդգրկում է թարմ, հետաքրքիր մտքեր ու բանաստեղծություններ՝ ստեղծագործական ներշնչանքի պահի, սիրո, հայրենասիրության, անձնավորված բնության, մարդու մասին:

Գրքի շնորհանդեսի ժամանակ «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության ուսանողները ներկայացրել են իրենց ընկերուհու բանաստեղծություններից («Էջը բացվեց, «Գիշեր», «Քուն», «Հավքերի պես…», «Թունոտ թշնամի», «Քունս չի տանում»): Կիթառի ուղեկցությամբ կատարվել են նաև այդ բանաստեղծությունների հիման վրա գրված հոգեբուխ երգեր («Տավուշի քաջեր», «Ծեր խաչքար»), որոնք իրենց ասելիքով, մեղեդայնությամբ ու անկեղծ կատարումով հուզել են ունկդիրների սրտերը: Հեղինակը

պարզաբանել է իր կերտած լուսնային պատկերների խորհուրդը, գրքի «Մոխրագույն լուսին» վերնագիրը, որի համաձայն՝ լուսինն իր կարոտն է, որն ինքը տեսնում է մոխրագույն:

2016թ. ապրիլի 4-ին ԵՊՀ ԻՄ-ի գրադարանում տեղի է ունեցել Հեռակա ուսուցման համակարգի «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողուհիներ, երկվորյակ քույրեր Սյուզաննա և Ռուզաննա Աղաբաբյանների «Եռանկյունի» գրքի շնորհանդեսը: Գրքի վերաբերյալ արտահայտված գնահատականների մեջ գերակշռել է այն կարծիքը, որ այնտեղ ապրվածի արձագանքն է և կյանքի նկատմամբ լուսավոր հայացքը:

Ներկաները, մասնավորապես՝ Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոսներն իրենց սրտի խոսքն են ասել աղջնակների նրբին հույզերի, գրքում արտահայտված նրանց ներքին ալեվետումների, կորցրածի ու գտածի, անցավորի ու հավերժականի, գեղեցիկի զգացողության, ինքնատիպ կամային որակների վերաբերյալ: Երկվորյակ քույրիկներին կոչելով երկու լուսաշող հրեշտակներ՝ նրանց իր օրհնանքի խոսքն է ուղղել Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը:

2016թ. 2-րդ կիսամյակից հիմք է դրվել **Բանավեճի ակումբի** գործունեությանը, որը ղեկավարում է ՄԿՈԱ բաժնի մասնագետ, սոցիոլոգ, փ.գ.թ., դոցենտ Է.Կյուրեղյանը: Ակումբը նպատակ ունի նախապատրաստել բանիմաց ուսանողներ և նրանց ներգրավել մասնաճյուղի կառավարման գործընթացներում, ուսանողության հետ տարվող աշխատանքներում: Ակումբում իրականացվող քննարկումները սեփական կարծիքը հայտնելու, դիմացինի կարծիքը լսելու և այն սեփականի հետ համադրելու լավ հնարավորություններ են մասնակիցների համար: Նորաստեղծ Բանավեճի ակումբի առաջին քննարկումները կայացել են հաջողությամբ և ճանապարհ բացել նոր ու հետաքրքիր քննարկումների համար:

2016թ. մարտի 25-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում տեղի է ունեցել նորաստեղծ Բանավեճի ակումբի առաջին՝ **«Հասարակական կարծիքը որպես բարոյական հսկիչ» թեմայով քննարկումը**: Քննարկմանը մասնակցել են տարբեր ֆակուլտետների և կուրսերի ուսանողներ, մասնաճյուղի աշխատակիցներ: Է.Կյուրեղյանը ներկայացրել է «հասարակական կարծիք» կոչվող երևույթի գիտական ըմբռնումը, նրա ձևավորման մեխանիզմները, հնարավոր ազդեցությունները մարդկանց վարքի վրա, գիտակցաբար այն կառավարելու ռեսուրսները: Կոնկրետ օրինակների օգնությամբ ցուցադրվել են հասարակական կյանքի կառավարման մեջ դրա գործնական կիրառության պատմությունը, մեր հանրապետությունում ձևավորվող մշակույթը, առկա դժվարությունները: Մասնակիցներին հատկապես հետաքրքրել են այն

վնասները, որը սոցիալական միջավայրը կրում է հասարակական կարծիքը չիմանալու կամ այն իր «հակոտնյայի»՝ ասեկոսների, շշուկների հետ շփոթելու հետևանքով:

Սեփական կենսափորձի և հետազոտությունների արդյունքների ներկայացման, մանկավարժական, արտադրական ու կենցաղային կյանքից բերված օրինակների միջոցով հիմնավորվել են այն ավերիչ հետևանքները, որոնք կարող են տեղի ունենալ այդ բացասական երևույթի պատճառով, հակիրճ ներկայացվել են դրա դեմ գիտականորեն հիմնավորված «դեղատոմսերը»: Մասնակիցները քննարկել են երևույթի կոնկրետ ազդեցությունն իրենց ուսման, ընտանեկան կյանքի վրա, սոցիալական կյանքի տարբեր մակարդակներում հասարակական կարծիքի կամ բամբասանքի յուրահատկությունները, վերջինի դեմ պայքարի հնարավորությունները:

2016թ. ապրիլի 7-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում տեղի է ունեցել բանավեճի ակումբի՝ **Մայրության և գեղեցկության օրվան նվիրված քննարկումը**: Քննարկումը տեղի է ունեցել մեր երկրի ու ազգի վերապրած հերթական մեծ փորձությունից՝ քառօրյա պատերազմից հետո: Բանավեճի ակումբը վարող, սոցիոլոգ Է.Կյուրեղյանը սրտի ցավով, սակայն հպարտությամբ նշել է, որ ողջ հայության համախմբվածության, պատմական արդարությունն ու մարդկայնությունը պաշտպանելու վճռականության շնորհիվ մեր հերոս տղաները պատվով դուրս եկան: Ներկայացվել է օրվա խորհուրդը, զուգահեռներ անցկացվել «Մարտի 8»-ի և «Ապրիլի 7-ի» միջև: Զեկուցողը նշել է, որ մի աներևույթ, ամենակարող ուժ, պատմական մաքառումների, դաժան ճակատագրի և ցուցաբերած հերոսական ջանքերի համար կարծես Հայ մորն ու կնոջը յուրովի «նվեր» է մատուցել՝ կանանց միամսյա տոնի տեսքով: Քննարկման ընթացքում շոշափվել են ընտանիքի կայունության, ընտանեկան սիրո, դրա փիլիսոփայական ըմբռնման, կնոջ կրթության և ինքնակրթության հարցերը: Շեշտադրվել է բարեկրթության, համակողմանի գիտելիքների, աշխարհայացքային ինքնակրթության կարևորությունը կայուն ընտանիքի, առողջ սերնդի ձևավորման, նրա մեջ հայրենասիրական ու մարդասիրական ոգու ներարկման հարցում:

6. Հասարակայնության հետ կապ

Մասնաճյուղն իր հեղինակության ամրապնդման, հասարակական վարկանիշի բարձրացման նպատակով վարում է **տեղեկատվության տարածման, գովազդային-լրատվական, քարոզչական համապատասխան քաղաքականություն**: ԵՊՀ ԻՄ-ի բոլոր ստորաբաժանումների գործընթացների, իրադարձությունների, կազմակերպված միջոցառումների, հարցազրույցների, անհրաժեշտ հայտարարությունների, ուսանողական կյանքին և միջավայրին վերաբերող նորությունների լուսաբանումը, տեղեկատվության մատչելիությունն ապահովվում է մասնաճյուղի ինտերնետային կայքի միջոցով (եռալեզու տարբերակի իրականացումն ընթացքի մեջ է), «Facebook» սոցիալական ցանցում գործող ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի էջի և խմբի միջոցով, նաև մասնաճյուղի մասին տեղեկատվություն ու նկարագրություններ են տպագրվում տարբեր տեղեկագրքերում, ժողովածուներում և կայքերում, մասնավորապես «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթում, “1TV.AM”, “HAYNEWS.AM”, “TESANKYUN.AM”, “CIVILNET.AM”, “LURER.COM” Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի կայքերում և այլն:

Մասնաճյուղի պաշտոնական **կայքը պարբերաբար կատարելագործվում է:** Այն այսօր ունի 194 էջ, տեղադրված է 1449 նյութ, 6051 ֆայլ, որոնցից 4107-ը նկարներ են:



	Page Views	Unique Visits	First Time Visits	Returning Visits
Total	1,174,035	394,208	162,996	231,212
Yearly Average	195,673	65,702	27,166	38,536

	Page Views	Unique Visits	First Time Visits	Returning Visits
2016	294,308	104,415	44,668	59,747
2015	327,741	118,226	50,353	67,873
2014	284,180	93,629	38,999	54,630
2013	204,001	62,415	22,800	39,615
2012	60,684	15,170	6,043	9,127
2011	3,121	353	133	220

Կայքի «**ԶԼՄ-ները մեր մասին**» էջում տեղադրված են մասնաճյուղի վերաբերյալ զանազան լրատվական միջոցների (ԶԼՄ-ների) կողմից հրապարակված **հոդվածներ ու տեսանյութեր: Միայն 2016թ.-ին** 1-ին լրատվականով, Ա1+-ով, “YouTube”-ով, այլ լրատվական ալիքներով լուսաբանվել են մի շարք իրադարձություններ՝ «Մերի Գասպարյանի «Մոխրագույն լուսին» գրքի շնորհանդեսը» **(2016թ. մարտի 22),** «Ուսանողական հանրապետական ամենամյա գիտաժողովը ԳՊՄԻ-ում» **(2016թ. ապրիլի 22)**, «Հարգանքի տուրք Մարիա Յակոբսենի մահվան 55-ամյակին» **(2016թ. ապրիլի 25),** «2015-16 ուստարվա շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունը» **(2016թ. հուլիսի 11)**, «Առաջին կուրսեցիների՝ ուսուցչի երդման հանդիսավոր արարողությունը» **(2016թ. նոյեմբերի 16)** և այլն:

Կայքն իր կարևոր դերն ունի նաև օտարերկրյա ուսանողների հավաքագրման գործում՝ իր մշտապես թարմացվող տեղեկատվությամբ, եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) գործարկմամբ: Փաստենք, որ կայքի միջոցով հանրությանը հասանելի են նաև ԵՊՀ ԻՄ-ի, Կիրառական արվեստի ֆակուլտետի, Հեռակա ուսուցման բաժնի վերաբերյալ օտարալեզու (վրացերեն և պարսկերեն) բուկլետները: Պլանավորված է մշակել և մասնաճյուղի կայքում ներկայացնել օտարերկրյա ուսանողների ուսումնառության ուղեցույց, ինչպես նաև մասնաճյուղի ու նրա կրթական ծրագրերի վերաբերյալ համառոտ տեղեկատու նյութեր:

Մասնաճյուղի շրջանավարտներին թափուր աշխատատեղերի մասին իրազեկելու, նրանց կարիերային նպաստելու նպատակով կայքում դրվում են խորհրդատվություններ և հայտարարություններ՝ «Մրցույթներ, թափուր հաստիքներ», «Խորհրդատվություն», «Շրջանավարտների և կարիերայի կենտրոն», «Գրանցում» ենթաբաժիններում:

2016թ. մարտի 24-ին «Առաջին լրատվական»-ի թղթակցին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կողմից առաջարկվող մասնագիտությունների վերաբերյալ հարցազրույց է տվել տնօրեն Ս.Առաքելյանը: Հարցազրույցի ընթացքում ներկայացվել են գործող մասնագիտություններից բացի՝ վերջին չորս տարիներին մասնաճյուղում ներդրված նոր մասնագիտությունները՝ «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա», «Քարտեզագրություն և կադաստրային գործ», «Հոգեբանություն» և «Դիզայն»: Ընդգծվել է, որ տարածաշրջանում մասնագետների պահանջարկով պայմանավորված՝ 2016 թվականից մասնաճյուղն ընդունելություն է իրականացնելու երկու նոր՝ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Համակարգչային գրաֆիկա» մասնագիտություններով: Նշվել է նաև, որ իր գործունեության 22 տարիների ընթացքում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը հաջողությամբ իրականացնում է մարզի երիտասարդներին բարձրագույն կրթություն տալու, տարածաշրջանը բարձր որակավորում ունեցող մասնագետներով ապահովելու իր առաքելությունը. տվել է շուրջ 5000 շրջանավարտ, որոնք աշխատանքի են անցել ամենատարբեր ոլորտներում, 400-ից ավելին՝ դպրոցներում:

7. Ուսանողական կառույցներ, աշխատանք ուսանողների և շրջանավարտների հետ

ա) Ուսանողական խորհուրդ, Ուսանողական գիտական ընկերություն

Ուսանողական և ուսումնագիտական միջավայրի ձևավորման գործում իրենց անփոխարինելի տեղն ունեն **ուսանողական համապատասխան կառույցները՝** Ուսանողական խորհուրդ (ՈՒԽ), ՈՒսանողական գիտական ընկերությունը (ՈՒԳԸ): Հաշվետու ուստարում ուսանողական խորհրդի կողմից կազմակերպվել են տարբեր տոների, հիշատակների նվիրված մշակութային և սպորտային շուրջ 35 միջոցառումներ և հանդիպումներ, խորհրդի անդամները մասնակցել են ԵՊՀ-ի ուսանողական ձեռնարկումներին: ՈՒԳԸ-ի կողմից կազմակերպվել են զեկուցումների շարքեր ֆակուլտետներում, մասնագիտական ֆիլմերի դիտումներ, ինտելեկտուալ խաղեր, շարադրությունների մրցույթներ, մարզի դպրոցականների համար օլիմպիադաներ: Նրա անդամները մասնակցել են 2 գիտաժողովների, նաև բիզնես թրեյնինգի դասընթացների:

ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական խորհուրդը և ուսանողական գիտական ընկերությունն ամեն ինչ անում են, որ մասնաճյուղի ուսանողները լինեն առավել ակտիվ, նախաձեռնող, իրազեկված, ինչը պարզապես անհրաժեշտություն է մեր արագընթաց դարում, որ ուսանողական առօրյան ավելի հետաքրքիր ու բովանդակալից լինի, որ ակտիվորեն մասնակցեն մրցույթների, ինտելեկտուալ խաղերի, միջոցառումների և հաղթեն, բացահայտեն իրենց ստեղծագործական կարողությունները:

Ուսանողական խորհուրդն ակտիվ մասնակցում է մասնաճյուղի կառավարման գործընթացներին, մշտապես հաշվետու է իր ուսանողության առաջ: Ուսանողական գիտական ընկերությունն ակտիվ համագործակցում է մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ, կազմակերպելով գիտական զեկուցումներ, մասնակցելով տարբեր գիտաժողովների և այլն:

Դասախոսներն աջակցում և ղեկավարում են ՈՒԳԸ շրջանակներում իրականացվող զեկուցումները, առհասարակ ուսանողների գիտահետազոտական աշխատանքները:

2015թ. սեպտեմբերի 22-ին ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ Սամվել Առաքելյանը հանդիպել է մասնաճյուղի ուսանողական կառույցների՝ ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության, «Տավուշ» ռազմահայրենասիրական ակումբի ներկայացուցիչների հետ: Տնօրենը ուսանողներին կոչ է արել լինել ակտիվ: «Ուսանողը պիտի ունենա մե՛կ նպատակ՝ ստանալ որակյալ կրթություն, իսկ այն, որ մեր համալսարանը պատրաստ է տալու նման կրթություն, դա ակնհայտ է. վկան մեր լավագույն շրջանավարտներն են, որոնք հաջողությամբ աշխատում են հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, պետական և հանրային կառույցներում, բանկային համակարգում,- իր խոսքում ընդգծել է Ս.Առաքելյանը: - Մենք ամեն ջանք ու եռանդ գործադրում ենք մասնաճյուղում կրթության անհրաժեշտ որակ ապահովելու համար»:

2015-16 ուստարվա ընթացքում ուսանողական խորհուրդը և ուսանողական գիտական ընկերությունը նախաձեռնել և կազմակերպել են մի շարք գեղեցիկ, բարոյադաստիարակչական, ստեղծագործական միջոցառումներ, ուսանողների սոցիալական կարիքների լուծմանն ուղղված նախաձեռնություններ, տաղանդավոր ու խելացի ուսանողներ հայտնաբերելու և նրանց աջակցելու գործընթացներ:



2015թ. հոկտեմբերի 13-ին և 2016թ. ապրիլի 4-ին ԵՊՀ ԻՄ-ում տեղի են ունեցել հանդիպումներ **ՀԵՀ-ի** կողմից ուսման վարձի փոխհատուցման համար մասնաճյուղից ընտրված ուսանողների հետ: Հայաստանի երիտասարդական հիմնադրամը ՀՀ կառավարության ու Կրթության և գիտության նախարարության աջակցությամբ փոխհատուցել է ՀՀ սահմանամերձ որոշ համայնքների (Տավուշի մարզ՝ Ն.Կ. Աղբյուր, Ոսկևան, Չորաթան, Կողբ, Վազաշեն, Բերքաբեր, Ոսկեպար, Չինարի, Արծվաբերդ, Ծաղկավան, Մոսեսգեղ, Դովեղ, Պառավաքար, Բերդավան, Բարեկամավան, Կոթի, Բաղանիս, Սարիգյուղ, Այգեձոր, Կիրանց, Այգեպար, Սևքար, Այգեհովիտ, Վ.Կ. Աղբյուր) պետական, ոչ պետական, միջպետական բուհերի առկա ուսուցման համակարգի բակալավրիատի 1-ին կուրսերում սովորող ուսանողների՝ 2015-2016 ուսումնական տարվա 1-ին և 2-րդ կիսամյակների ուսման վարձերը: ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից ՀԵՀ-ի կազմակերպած ուսման վարձի փոխհատուցում են ստացել տարբեր մասնագիտությունների 41 ուսանողներ: Նրանց հանձնվել են կրթաթոշակի հավաստագրեր:

2015թ. նոյեմբերի 18-ին ԵՊՀ ԻՄ-ի դահլիճում տեղի է ունեցել Ուսանողների

միջազգային օրվան նվիրված **գրական-երաժշտական միջոցառում**: Միջոցառմանը մասնակցել են նաև Իջևանում տեղակայված N զորամասի նվագախմբի տղաները, ծնողներ, հյուրեր: Մասնաճյուղի շնորհալի ուսանողները հանդես են եկել բանաստեղծություններով ու երգերով, պարային գեղեցիկ կատարումներով: Տոնական դահլիճում թևածել է սիրո մեղեդին, բեմի վրա ալիքվել նաիրյան աղջկա հեզաճկուն պարը, և պտույտ է գործել շնորհագեղ զույգի խելահեղ վալսը: Ազգային-հայրենասիրական երգերով ու երաժշտական խրոխտ կատարումներով ուսանողներին միացել են զորամասի նվագախմբի տղաները:

2015թ. նոյեմբերի 4-ին տեղի է ունեցել Սոցիալական աշխատողի միջազգային օրվան նվիրված միջոցառում, որը նախաձեռնել և կազմակերպել էր մասնաճյուղի ուսանողական գիտական ընկերությունը: Միջոցառման ընթացքում ներկայացվել են Սոցիալական աշխատողի օրվան նվիրված զեկուցումներ՝ «Սոցաշխատողի գործառույթները», «Սոցիալական աշխատանքը մարդկության խիղճն է»: Զեկուցումներից հետո Սոցիալական աշխատողի գործունեության դերի, նպատակի, խնդիրների շուրջ ծավալվել է հետաքրքիր քննարկում:

2015թ. նոյեմբերի 21-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում տեղի է ունեցել Հոգեբանի օրվան նվիրված միջոցառում, որը կազմակերպվել է Ուսանողական գիտական ընկերության ու «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության ուսանողների համատեղ ջանքերով: «Ջանասիրաբար քայլիր առաջ՝ հաղթահարելով բոլոր դժվարությունները» կարգախոսը կրող միջոցառմանն ակտիվորեն մասնակցել են ոչ միայն ուսանողները:

Կազմակերպիչներն ուսանողներին բաժանել են թռուցիկ խոսքեր և բոլորին հյուրասիրել հոգեբանության խորհրդանիշ «ψ» (փսի) տառի տեսքով քաղցրավենիքներ:

Հոգեբանի օրվա կապակցությամբ կազմակերպվել էր նաև ֆլեշմոբ «Նկարիր ψ», որին ակտիվ մասնակցություն են ունեցել Կիրառական արվեստի ֆակուլտետի ՈՒԳԸ-ի անդամները և ուսանողները:

2015թ. նոյեմբերի 25-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ուսանողների տոնին նվիրված միջոցառումներն իրենց տրամաբանական ավարտին են հասել Ուսանողական գիտական ընկերության կողմից կազմակերպված ինտելեկտուալ խաղով: Խաղին մասնակցել են 4

թիմեր՝ Հումանիտար, Բնական գիտությունների և Տնտեսագիտության ֆակուլտետների, Հեռակա ուսուցման բաժնի («Նեմեսիս») թիմերը: Եզրափակիչում շուրջ 2 ժամ տևած պայքարից հետո 21:20 հաշվով հաղթել է Հումանիտար գիտությունների ֆակուլտետի թիմը: Անհատական խաղի փուլում հաղթել է Տնտեսագիտության ֆակուլտետի «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Գևորգ Գրիգորյանը: Հաղթողները պարգևատրվել են պատվոգրերով և հուշանվերներով:

2016թ. փետրվարի 15-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բակում գեղեցիկ միջոցառում է կազմակերպվել՝ Սիրահարների տոնի կապակցությամբ: «Կյանքի գեղեցկությունը տեսնելու համար պետք է ապրել սիրով ու սիրուն հատուկ քնքշանքով ու բարությամբ, այդ սիրով բաղադրել այն մթնոլորտը, որը տարածվում է մեր շուրջը». այս կարգախոսով են հանդես եկել Ուսանողական խորհրդի անդամները՝ մասնաճյուղի բակում ստեղծելով տոնական ու սիրառատ մթնոլորտ: Իրենց շուրջ հավաքված ուսանողությանը նրանք հաղորդել են օրվան առնչվող տեղեկատվություն, ներկայացրել դրա էությունը, պատմությունը, հղել իրենց շնորհավորանքներն ու բարեմաղթանքները, նվիրել սրտաձև փուչիկներ:

2016թ. փետրվարի 10-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կայացել է Ուսանողական խորհրդի համագումար նիստը, որի ընթացքում նախագահը ներկայացրել է խորհրդի տարեկան հաշվետվությունը, այն ծրագրային առաջնայնությունները, որոնք նախատեսվել են իրագործելու 2-րդ կիսամյակում: Պատվոգրեր են տրվել իրենց աշխատանքով աչքի ընկած Ուսանողական խորհրդի տասը անդամներին: Փութաջան աշխատանքի և իրենց ֆակուլտետի ուսանողական ինքնակառավարումն արդյունավետ իրականացնելու համար շնորհակալագրեր են տրվել ֆակուլտետային ՈՒԽ-ի նախագահներին:

2016թ. մարտի 9-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ տեղի է ունեցել Կանանց միջազգային օրվան

նվիրված միջոցառում: Շնորհանդեսի ուղեկցությամբ ներկայացվել է տեղեկատվություն տոնի նախապատմության վերաբերյալ: Ուսանողները հետաքրքիր կերպով ներկայացրել ու մեկնաբանել են, թե տարբեր երկրներում ինչպես է նշվում Կանանց միջազգային օրը, որն է

նրա խորհուրդը, ինչ է ցանկալի նվիրել այդ օրը: Վերջում միջոցառման կազմակերպիչները վարդեր են նվիրել բոլոր ներկաներին:

2016թ. մարտի 21-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում տեղի է ունեցել «WRITE ON! COMPETITION 2016» մրցույթում հաղթած մեր ուսանողների վկայականների հանձնման արարողությունը: Տասը տարուց ավելի է, ինչ ԱՄՆ Խաղաղության կորպուսի կամավորների ջանքերով գործում է «WRITE ON! COMPETITION» մրցույթը, որը նախատեսված է տարբեր երկրների 6-12-րդ դասարանների աշակերտների և բուհերի I-IV կուրսերի ուսանողների համար:

2016թ. մրցույթը կայացել է փետրվարի 29-ին, և ԵՊՀ ԻՄ-ից մասնակցել են «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության I-III կուրսերի մի խումբ ուսանողներ: Յուրաքանչյուր կուրսի համար նախատեսված էր երկու թեմա: Շարադրությունները ստուգվել ու գնահատվել են Խաղաղության կորպուսի կամավոր դասախոս Քոլման Հեսլերի, գործընկեր դասախոս Էմմա Թեմրազյանի կողմից, և յուրաքանչյուր կուրսի երեքական լավագույն աշխատանքներ ուղարկվել են Երևան՝ ազգային (հանրապետական) հանձնաժողովի գնահատմանը:

Արդյունքների համաձայն՝ «WRITE ON! COMPETITION 2016» մրցույթի հանրապետական փուլում հաղթել են «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության I կուրսի 3, II կուրսի 3, և III կուրսի 2 ուսանողներ: Նրանց հանձնվել են վկայականներ: Իսկ մասնաճյուղի 2 ուսանողուհիների աշխատանքները հանրապետական հանձնաժողովի կողմից ուղարկվել են միջազգային՝ երրորդ փուլ, ընդ որում՝ միջազգային փուլում ընդգրկված 18 երկրների ներկայացուցիչների՝ հազարից ավելի շարադրությունների մեջ (2-րդ կուրսեցիների անվանակարգում) «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության II կուրսի ուսանողուհի Անուշ Հակոբյանի աշխատանքը գրավել է երրորդ տեղը:

Մարտի 21-ին տնօրենը հանդիպել է «WRITE ON! COMPETITION 2016» մրցույթի տարբեր փուլերի հաղթողների հետ: «Ուսումնառության ընթացքում յուրաքանչյուր ուսանող պետք է անի մի այնպիսի քայլ, որով հետո կարողանա հպարտանալ, և որի շնորհիվ կհպարտանան իրենով: Իմ նման քայլը եղավ ԱՄՆ շարադրության միջազգային մրցույթին մասնակցելը և մրցանակային 3-րդ տեղը զբաղեցնելը,- հարցազրույցի ընթացքում նշել է հաղթանակած ուսանողուհին՝ Անուշը: – Ես ուրախ եմ, որ ընդունվել եմ հենց ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ: Այստեղ ես ունեմ լավ ընկերներ, հրաշալի դասախոսներ և ղեկավարություն, որ միշտ պատրաստ է խրախուսելու ուսանողի կատարած ամեն մի դրական քայլը: Բացառություն չէր և իմ ձեռքբերումը՝ «WRITE ON! COMPETITION 2016» միջազգային մրցույթում 18 երկրների մեջ մրցանակային տեղ զբաղեցնելը, որի համար շնորհակալ եմ բոլորին՝ թե՛ իմ դասախոսներին և թե՛ տնօրենությանը»:

2016թ. ապրիլի 5-11-ը ԵՊՀ ԻՄ-ի մի խումբ ուսանողներ՝ մասնաճյուղի ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ, պատանի երկրապահների ուղեկցությամբ, այցելել են մարզի սահմանամերձ համայնքներ՝ սահմանապահ մեր քաջ հայորդիներին աջակցելու

նպատակով: Այսօրվա պատերազմական իրավիճակում մեր հայրենիքի պաշտպանության սուրբ գործով առյուծացել են ահելն ու ջահելը, կինն ու տղամարդը, բոլոր-բոլորը, մի խոսքով՝ վտանգի պահին դարձյալ հառնել է հայության՝ որպես մեկ հավաքական ամբողջության աննկուն ոգին, դարձյալ համախմբել է մեզ, բոլորը զինվորագրվել ու սատար են կանգնել մեր զինվորին: Այդ համախմբման գործընթացին անմասն չեն մնացել նաև համալսարանականները: ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական կառույցներն էլ իրենց շուրջն են համախմբել ուսանողներին և իրենց լուման ներդրել ընդհանուր գործում:

2016թ. ապրիլի 15-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կայացել է «Հայաստանի անդամակցությունը ԵՏՄ-ին» խորագրով կոնֆերանս, որի ընթացքում Տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողները հանդես են եկել գիտական զեկուցումներով: Կոնֆերանսը կազմակերպել է ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերությունը՝ Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր Հ.Մարզպանյանի ղեկավարությամբ, որն էլ ընդհանուր գծերով ներկայացրել է գիտաժողովի անցկացման նպատակը, խնդիրները, կարևորելով նման գիտական միջոցառումների կազմակերպումը բուհի ուսումնական գործընթացում. «2014թ. աշնանը, երբ քաղաքական որոշում կայացվեց ինտեգրվել ԵՏՄ-ին, այս թեման դարձավ հրատապ: Ուրախ եմ, որ մեր ուսանողներն այնքան հասուն են, որ գիտակցելով փոքր երկրների համար որևէ տնտեսական միության ինտեգրման անհրաժեշտությունը՝ այս թեման իրենք են առաջարկել: «Հայաստանի անդամակցությունը ԵՏՄ-ին» թեմայով գիտագործնական կոնֆերանսի անցկացման նպատակն է ներկայացնել այն մարտահրավերները, որոնք սպասվում են Միության անդամակցության պայմաններում, դրա հնարավորությունները և հեռանկարները: Նման գիտաժողովների անցկացումը՝ որպես հետազոտական ոլորտի տարր, շատ կարևոր է. բուհի հետազոտական ներուժը միայն դասախոսներով չի սպառվում, անհրաժեշտ է հետազոտական ոլորտում օգտագործել և ուսանողների կարողությունները»: Ֆակուլտետի ուսանողների կողմից համապատասխան շնորհանդեսների ուղեկցությամբ ներկայացվել է 7 գիտական զեկուցում՝ «Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ ինտեգրման հեռանկարները», «Միջազգային կազմակերպությունները, ԵՏՄ-ն և ՀՀ-ի անվտանգությունը», «ՀՀ արժութային քաղաքականությունը ԵՏՄ ինտեգրման պայմաններում», «ՀՀ բանկային համակարգը», «Միգրացիան ՀՀ-ում», «Ներդրումային քաղաքականությունը Հայաստանում: Հեռանկարները ԵՏՄ-ին անդամակցության պայմաններում», «Մաքսային քաղաքականության հիմնախնդիրները ՀՀ-ում»:

Ներկաների կարծիքները զեկուցումների վերաբերյալ դրական էին ու ոգևորիչ, մասնավորապես նշվել է, որ ուսանողները ոչ միայն հավաքագրել, այլև համակարգել էին նյութը, զեկուցումները ներկայացվել են պատշաճ մակարդակով, սեփական եզրահանգումներով, գիտաժողովն անցել է ակտիվ քննարկումների մթնոլորտում: «Որպես արդյունք,- նշել է պարոն Մարզպանյանը,- ակնկալվում է պատրաստել մեկ համահեղինակային ծավալուն հոդված և այն տպագրության հանձնել ԲՈՀ-ի կողմից երաշխավորված որևէ ամսագրում»:

2016թ. ապրիլի 22-ին Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտում տեղի է ունեցել ուսանողական հանրապետական գիտաժողով՝ նվիրված ՀՀ անկախության 25-ամյակին: Գիտաժողովին մասնակցել են մասնաճյուղի շուրջ մեկ տասնյակ ուսանողներ՝ բանասիրության, հոգեբանության, բնագիտության ու աշխարհագրության բնագավառներին վերաբերող իրենց զեկուցումներով: Մեծ թիվ են կազմել բանասիրական ուղղվածության զեկուցումները: Այսպես՝ «Բանահյուսական ժանրային տեսականին մերօրյա Տավուշում» հոդվածը նվիրված էր Տավուշում դեռևս կենսունակ բանահյուսական ժանրերին, «Իջևանի խոսվածքի բառակազմական առանձնահատկությունները» հոդվածը նվիրված էր Իջևանի խոսվածքի քննությանը, «Մամիկոնյան տոհմի հերոսներն ըստ Խորենացու և Բուզանդի» հոդվածը քննության էր առնում Մամիկոնյան տոհմի ծագման, դերի և նշանակության մասին V դարի պատմագրության մեջ առկա տեսակետները: «Անեծքների և օրհնանքների չանհետացող ազդեցությունը» զեկուցման մեջ ընդգծվել է խոսքի ուժը, անեծքների և օրհնանքների ազդեցության նկատմամբ ժողովրդի ունեցած հավատն ու վերաբերմունքը: Զեկուցողը հավաքել է նաև մեր տարածաշրջանի անեծքներ ու օրհնանքներ, որոշ սկզբունքերով խմբավորել և տվել մեկնաբանություններ:

Զեկուցում է կարդացվել «Ամբողջ ֆունկցիաներ» թեմայով, որտեղ քննության էր առնվել ամբողջ ֆունկցիան, նրա զրոները, մի շարք հատկություններ, բերվել են օրինակներ ինչպես իրական հարթության վրա, այնպես էլ կոմպլեքս հարթությունում, ինչպես նաև ապացուցվել է Պիկառի՝ կոմպլեքս հարթության վրա գործող թեորեմը: Զեկուցում է կարդացվել կադաստրային գործի առանձնահատկությունների վերաբերյալ, իսկ հոգեբանության ենթաբաժնում ներկայացվել են «Հակասոցիալական վարքի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները սահմանամերձ գոտու դպրոցականների մոտ», «Ամուսնաընտանեկան ճգնաժամերի հոգեբանական վերլուծությունը» թեմաներով զեկուցումներ: Գիտաժողովի մասնակիցներին տրվել են վկայագրեր:

2016թ. ապրիլի 25-29-ը ԵՊՀ ՈՒԳԸ-ի կողմից կազմակերպված տարեկան գիտական նստաշրջանում ԵՊՀ ԻՄ-ից բնական գիտությունների ֆակուլտետի «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Ալվինա Գևորգյանը հանդես է եկել զեկուցումով, որի գիտական ղեկավարն էր ֆակուլտետի դեկան, ֆ.մ.գ.թ., դոցենտ Մ.Զաքարյանը: Զեկուցման թեման էր «Էյլերի Բետա և Գամա

ֆունկցիաները»: Իր զեկուցման մեջ ուսանողուհին սահմանել է, թե որոնք են Էյլերի Բետա և Գամա ֆունկցիաները (Էյլերի առաջին և երկրորդ սեռի ինտեգրալները), ցույց է տվել Բետա և Գամա ֆունկցիաների միջև եղած կապը, համապատասխան օրինակների հիման վրա քննության է առել որոշ հատկություններ: Շեշտը հատկապես դրվել է n-րդ աստիճանի հանրահաշվական հավասարումների լուծման մեջ Էյլերի Բետա և Գամա ֆունկցիաների կիրառությունների վրա:

Ալվինա Գևորգյանին զեկուցման համար տրվել է գիտական նստաշրջանի մասնակցության հավաստագիր: Ներկայացված զեկուցումը համապատասխան ֆակուլտետի գիտական խորհրդի երաշխավորությանն արժանանալու դեպքում կտպագրվի «ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու» գիտական պարբերականում:

«Զեկուցումը կտպագրվի, թե ոչ, երկրորդական խնդիր է՝ այն ամենի համեմատությամբ, ինչ տվեց ինձ մասնակցությունը նստաշրջանին, – նշել է Ալվինա Գևորգյանը և հավելել, – այն, որ շուրջ մեկ շաբաթ շփվում ես նույն մասնագիտությամբ Մայր բուհում սովորող ուսանողների հետ, ծանոթանում ես նրանց կատարած հետազոտություններին, հասկանում քո առավելություններն ու թերությունները, ձեռք ես բերում վստահություն ինքդ քո ուժերի նկատմամբ: – Շնորհակալ եմ մեր բոլոր դասախոսներին և հատկապես պարոն Զաքարյանին՝ իմ աշխատանքը ղեկավարելու և ինքնադրսևորվելու այս հնարավորության համար»:

2016թ. ապրիլի 25-ին ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական խորհրդի անդամները հանդիպել են Իջևանի ավագ դպրոցի աշակերտների հետ և նրանց հետ իրականացրել «Քառօրյա պատերազմը» թեմայով դաս-քննարկում: Հանդիպման ընթացքում քննարկվել են տարբեր հարցեր՝ քառօրյա պարտերազմը՝ որպես պատմության մի էջ, մերօրյա հերոսները, հայ ժողովրդի հավաքականությունն ու հայուհիների դերը պատերազմական գործընթացներում, ապագա զինվորի հոգեկերտվածքի ձևավորումը ազգային գաղափարախոսության համատեքստում:

Քննարկվող հարցերը համեմվել են մեր հերոսացած զինվորների մասին հուզառատ մեջբերումներով, նրանց մարդկային, բարի ու հայեցի բնավորության գծերը բացահայտող պատմություններով, որ ներկայացրել են նրանց հարազատներն ու ծանոթները: Ներկայացվել է նաև հայուհիների դերը զինվորի դաստիարակման ու հայրենիքի պաշտպանության գործում:



2016թ. մայիսի 21-ին «Արմենիա» հեռուստա-ընկերությամբ կայացած **«Ամենախելացին» ինտելեկտուալ խաղի** երրորդ եթերաշրջանի **երկրորդ կիսաեզրափակիչ փուլի հաղթող է ճանաչվել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի** բնական գիտությունների ֆակուլտետի «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտության առաջին կուրսի ուսանողուհի Անգին Ծատուրյանը:

բ) «Տավուշ» ռազմահայրենասիրական ակումբ

Ուսանողական «Տավուշ» ռազմահայրենասիրական ակումբն իր գործունեությունն սկսել է 2014թ. փետրվար ամսից, սակայն այս կարճ ժամանակահատվածում անգամ ակումբն իր ակտիվության շնորհիվ հասցրել է բավականին լուրջ աշխատանքներ կատարել: Նշված աշխատանքների կարիքն իրոք զգացվում է սահմանամերձ մարզում: «Տավուշ» ակումբը կոչված է բարձրացնելու ուսանողների, երիտասարդների ռազմահայրենասիրական ոգին, նպաստելու նրանց հասարակական գործունեության ակտիվացմանը: Այն համագործակցում է ԵԿՄ վարչության, ՀՀ ԶՈՒ ՊՆ տարբեր զորամասերի, ԵՊՀ-ի «Վարդանանք» ակումբի, մարզում առկա հասարակական կազմակերպությունների, դպրոցների, ՀԵՀ-ի Տավուշի մարզային կենտրոնի հետ: Իր գոյության երկու տարիների ընթացքում «Տավուշ» ռազմահայրենասիրական ակումբը կազմակերպել է բուհի, քաղաքի և մարզի մասշտաբով տարբեր միջոցառումներ, այցելություններ զորամասեր, ուխտագնացություններ տարբեր պատմամշակութային վայրեր, ակցիաներ, թրեյնինգներ, սեմինարներ, էքսկուրսիաներ և այլն:

2015թ. սեպտեմբերի 6-ին «Տավուշ» ռազմահայրենասիրական ակումբի տաղանդավոր և շնորհաշատ երիտասարդները այցելել են Տավուշի մարզի Սևքար գյուղի մոտակայքում գտնվող դիրքեր, հանդիպել մեր հերոս սպաներին և զինվորներին, ոգևորությամբ անցկացրել հայրենասիրական միջոցառում՝ նպատակ ունենալով բարձրացնելու զինծառայողների տրամադրությունը, ոգևորելու և գոտեպնդելու նրանց: Նրանք կատարել են հայրենասիրական երգեր, ժողովրդական պարեր, ներկայացրել պատմության հերոսական դրվագներ՝ զորավարների փառաբանումներով: Հարկ է նշել, որ միջոցառումը տեղի ունեցել հենց այն վայրում, որտեղ պայթել էր թշնամու արկը: Ուսանողների այն հարցին, թե ինչպիսին է մեր զինվորների տրամադրությունը, բոլորի շուրթերից միահամուռ լսվել է «ՄԱՐՏԱԿԱՆ» պատասխանը:

2015թ. հոկտեմբերի 23-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում տեղի է ունեցել հանդիպում Արցախյան ազատամարտի մասնակից, ռազմական գործիչ, ԼՂՀ Ազգային հերոս, ՀՀ «Մարտական խաչ» առաջին շքանշանի դափնեկիր, Երևանի պատվավոր քաղաքացի, **գեներալ-մայոր Արկադի Հովհաննեսի Տեր-Թադևոսյանի** (Կոմանդոսի) հետ: Հանդիպման ընթացքում գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադևոսյանը ներկայացրել է իր կյանքից հետաքրքիր դրվագներ, անցյալից դասեր քաղելու նպատակով աղերսներ անցկացրել պատմության և ժամանակակից կյանքի իրադարձությունների միջև, մատաղ սերնդի առջև մեկնել «Մահ ոչ

իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն» պատգամն ավանդող կենաց և մահու կռվի՝ Վարդանանց պատերազմի խորհուրդը: Հանդիպման ժամանակ մեծարանքի և երախտիքի խոսքով հանդես է եկել Իջևանի զորամասի հրամանատարի տեղակալ, փոխգնդապետ Սահակյանը՝ ընդգծելով, որ մեծ պատիվ է գտնվել այդպիսի մեծության կողքին, ականջալուր լինել և հետևել նրա խորհուրդ-խրատներին, ընդհանոր գծերով ներկայացրել է Կոմանդոսի սխրանքը, Շուշիի ազատագրման պլանի կազմումը բնորոշել է որպես «ժամանակակից մարտարվեստի գլուխգործոց»:

Ելույթ է ունեցել նաև Արցախյան ազատամարտի մասնակից, «Սոսե Մայրիկ» բարեգործական հիմնադրամի նախագահ Մարիամ (Դերվիշ) Ստեփանյանը՝ գծագրելով Արկադի Տեր-Թադևոսյանի մարդկային և հերոսական բարձր կերպարը, շեշտելով, որ այսօր էլ նա մեծ ներդրում ունի զինվորական պատրաստվածություն անցնելու գործում:

2015թ. նոյեմբերի 13-ին ԵՊՀ Վարդանանք Ռազմահայրենասիրական Դաստիարակության Ակումբի անդամներին՝ նախագահ Սաթենիկ Աբրահամյանի և փոխնախագահ Ռուզաննա Կրպեյանի գլխավորությամբ, հյուրընկալել է մասնաճյուղի «Տավուշ» ռազմահայրենասիրական ակումբը: Այցելության նպատակն էր մոտիկից ծանոթանալ ակումբի և ընդհանրապես մասնաճյուղի գործունեությանը, երկու ակումբների միջև ծավալել և խորացնել համագործակցությունը, համատեղ իրականացնել տարբեր ծրագրեր: ԵՊՀ ԻՄ-ի տնօրենը ողջունել է համագործակության առաջին քայլը, ներկայացրել մասնաճյուղի «Տավուշ» ռազմահայրենասիրական ակումբի գործունեության նպատակը, գլխավոր խնդիրները, որպեսզի ավելի տեսանելի լինեն երկու ակումբների համագործակցության եզրերը:



Հանդիպման վերջում ԵՊՀ Վարդանանք Ռազմահայրենասիրական Դաստիարակության Ակումբի նախագահ **Սաթենիկ Աբրահամյանը** նշել է, որ հետայսու այսպիսի հանդիպումները շարունակական են լինելու և, իհարկե, կլինեն ծրագրեր, որոնք ակումբները համատեղ ջանքերով կիրականացնեն: Փոխնախագահ Ռուզաննա Կրպեյանը (Թաթուլ Կրպեյանի քույրը) տնօրենին նվիրել է ՀՀ ազգային հերոս Թաթուլ Կրպեյանի 50-ամյակին նվիրված գիրքն ու Վարդանանք պարբերաթերթի հատուկ թողարկումը, որտեղ անդրադարձ էր կատարվել Թաթուլին, նրա կյանքին ու գործունեությանը, հերոսի հոբելյանին նվիրված գրեթե բոլոր միջոցառումներին, Թաթուլ բանաստեղծին ու արվեստագետին:

2015թ. նոյեմբերի 26-ին «Տավուշ» ռազմահայրենասիրական ակումբը ճանաչողական այց է կատարել ԵՊՀ, ուր «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբը տավուշցիներին ներկայացրել է ԵՊՀ-ն իր ֆակուլտետներով: Ակումբականները եղել են ԵՊՀ-ի պատմության թանգարանում, մոտիկից ծանոթացել Մայր բուհի պատմությանը: Ապա «Տավուշ» ռազմահայրենասիրական ակումբի անդամները մասնակցել են «Վարդանանք» ՌՀԴ-ի կողմից կազմակերպված միջոցառմանը՝ ներկայանալով ասմունքով, երգով: «Վարդանանք» ակումբի նախաձեռնությամբ տարիներ շարունակ անցկացվում է «Անմահները հրամայում են…» խորագրով միջոցառումների շարքը, որի նպատակն է հուշ-ցերեկույթների միջոցով փառաբանել այն ուսանող-ազատամարտիկներին, դասախոսներին, ովքեր Արցախյան ազատամարտում նշանակալի դերակատարություն են ունեցել: Ամենամյա միջոցառումները յուրաքանչյուր անգամ Արցախյան ազատամարտի մասնակիցների սխրանքներն ու նրանց հայրենանվեր գործունեությունը համալսարանականներին ներկայացնելու առիթ են: ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետն այն եզակի ֆակուլտետներից է, որն ունեցավ անհամեմատ մեծ թվով կամավորներ: Ուսանողական լսարանները փոխարինելով մարտի դաշտով՝ նրանք նախընտրեցին որպես կամավոր մասնակցել հայրենիքը պաշտպանելու կարևոր ու նպատակային գործին: «Իմ կենացը մի՛ խմեք, իմ գործը շարունակեք». իրենց գործունեությամբ ակումբականները մոնթեական այս պատգամի կրողներն են:

2015թ. նոյեմբերի 20-ին ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետում տեղի է ունեցել «Տավուշ» ռազմահայրենասիրական ակումբի հումանիտար հոսքի նախաձեռնությամբ ինտելեկտուալ խաղ: Այն նպատակ ուներ է՛լ ավելի հագեցնելու ակումբականների առօրյան, զարգացնելու նրանց միտքն ու հարստացնելու գիտելիքները:
Խաղին մասնակցել են «Հայոց լեզու և գրականություն», «Պատմություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտությունների ուսանողներից կազմված երկու թիմեր: Ինտելեկտուալ խաղի ընթացքում հնչել են տարբեր բնագավառների առնչվող շուրջ հիսուն հետաքրքրաշարժ և ուսուցողական հարցեր՝ պատմական, գրական, լեզվաբանական, տրամաբանական և այլն:

«Տավուշ» ռազմահայրենասիրական ակումբի կողմից նման միջոցառումների կազմակերպումը դարձել է ավանդույթ և կրում է շարունակական բնույթ: Դրա վառ ապացույցն է 2016թ. ապրիլի 28-ին կայացած հերթական ինտելեկտուալ խաղը:

2015թ. դեկտեմբերի 27-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի «Տավուշ» ռազմահայրենասիրական ակումբը Հայաստանի երիտասարդական հիմնադրամի Տավուշի մարզային

կենտրոնի հետ համատեղ այցելել է մարզի դիրքեր՝ առաջնագիծ՝ այնտեղ, որտեղից հիրավի սկսվում է հայրենիքը: Այցելության նպատակն էր ոգևորելու, ամանորյա տրամադրություն հաղորդելու մեր զինվորներին՝ գիշեր-ցերեկ մեր սահմանը զգոն հսկող, հայրենի հողը սրբորեն պաշտպանող մեր քաջ տղաներին: Առաջնագծում ակումբականներն ու ՀԵՀ-ի ներկայացուցիչները նախ մանրամասն ծանոթացել են զինվորների առօրյային, նրանց հետ ունեցել հայրենասիրության թեմայով ոգեշունչ զրույց, ապա երգել ու նվագել նրանց համար: Երիտասարդները զինվորներին այցելել են նվերներով, գրքերով և, որ ուշագրավ է, իրենց հետ տարել են մարզի սահմանամերձ գյուղերի աշակերտների՝ զինվորներին ուղղված սրտաբ ուխ ու հուզիչ նամակները, որ սիրո, հավատի, քաջալերանքի ուժեղ, անմիջական, պարզ ու զգացմունքային խոստովանություններ էին:

«Սահմանին ապրող երեխան,- հատկանշում է ՀԵՀ-ի Տավուշի մարզային կենտրոնի համակարգող Կ.Իսկանդարյանը,- տարբեր է մյուս երեխաներից (թո՛ղ ինձ ներեն սահմանից հեռու ապրողները)… Այստե՛ղ խաղաղություն են ուզում Ձմեռ պապիկից, այստե՛ղ զինվորին ուրիշ ձև են սիրում, այստե՛ղ երեխաները զենքերը տարբերում են կրակոցների ձայներով, այստե՛ղ հողը ապրելով են ամրացնում, այստե՛ղ հայրենիքը պահողներ են մեծանում…»: «Տավուշ» ռազմահայրենասիրական ակումբը, ինչպես տարին սկսել է զինվորի կողքին, այդպես էլ ավարտել է՝զինվորի համար հնարավորինս թիկունք դառնալով և նրան աջակցելով:



2016թ. փետրվարի 19-ին «Տավուշ» ռազմահայրենասիրական ակումբը տոնել է իր հիմնադրման երկու տարին: Ակումբի հիմնադրման երկրորդ տարեդարձի կապակցությամբ

տավուշցիները կազմակերպել են խորհրդանշական միջոցառում, որի ընթացքում համալսարանականներին ներկայացրել են իրենց գործունեության վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն, անդրադարձել երկու տարվա ընթացքում իրենց նախաձեռնած հիշարժան միջոցառումներին, կայացած նշանակալի իրադարձություններին: Նրանք համալսարանականներին նվիրել են փուչիկներ, ստացել ջերմ շնորհավորանքներ ու երկարատև գործունեության մաղթանքներ: Ակուբականներից յուրաքանչյուրը ՀՀ դրոշի գույներով իր «հետք»-ն է թողել թղթի վրա, որը կհամալրեն գալիք ակումբականները:

2016թ. ապրիլի 30-ին ամփոփվել են ԵՊՀ ԻՄ-ի «Տավուշ» ռազմահայրենասիրական ակումբի՝ Կիրառական արվեստի ֆակուլտետի ակումբականների կողմից մեկ շաբաթվա ընթացքում Իջևան քաղաքի բնակիչների և մասնաճյուղի ուսանողության շրջանում իրականացրած **«Արդյոք ովքեր են»** թեմայով հարցման արդյունքները: Հարցման նպատակն է եղել պարզել, թե ինչքանով են տեղեկացված և ճանաչում մեր ուսանողներն ու Իջևանի քաղաքացիները (100 հոգի) հայտնի նկարիչներին (Հովհաննես Այվազովսկի, Լեոնարդո դա Վինչի, Մարտիրոս Սարյան, Միքելանջելո, Արշիլ Գորկի և այլն) ու նրանց նկարները: Միաժամանակ նկարիչների և նրանց աշխատանքների վերաբերյալ հետաքրքրական տեղեկություններ են հաղորդել մասնակիցներին:

2016թ. մայիսի 12-ին՝ մայիսյան հաղթանակների առիթով, ԵՊՀ ԻՄ-ի «Տավուշ» ռազմահայրենասիրական ակումբի անդամները, ավանդույթի համաձայն, կազմակերպել են հանդիպում Իջևանի N զորամասի զինվորների հետ: Նախ տեղի է ունեցել հայրենասիրական թեմայով զրույց-քննարկում: Այնուհետև ակումբականները զինվորների համար ներկայացրել են փոքրիկ, բայց ոգեշունչ միջոցառում՝ հանդես գալով ազգային-հայրենասիրական երգ ու պարով, ասմունքով: Ուսանողներին են միացել նաև շնորհալի զինվորները՝ ստեղծելով ջերմ ու անմիջական մթնոլորտ: Զինվորներին հանձնվել են Երկրապահ կամավորականների միության կողմից մեր քաջարի զինվորների համար նախատեսված հուշանվերներ:

գ) Ուսանողական կյանք

2015թ. սեպտեմբերի 13-16-ը ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության նախաձեռնությամբ ու Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության աջակցությամբ Իջևանում անց է կացվել **մարզական փառատոն**, որին իրենց ակտիվ մասնակցությունն են ունեցել մասնաճյուղի ուսանողները: Բազկամարտ մարզաձևից առաջին և երկրորդ տեղերը գրավել են «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողներ Վահե Վարշամյանը և Նարեկ Մխիթարյանը:

2015թ. հոկտեմբերի 2-ին ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետում տեղի է ունեցել Շահամիրյանների գործունեությանը, «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ», «Որոգայթ փառաց» գրքերին նվիրված միջոցառում, որը կազմակերպել էր Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բան. գիտ. թեկնածու, դոցենտ Վաչագան Ավագյանը, նրան աջակցել էր ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական խորհուրդը:

Միջոցառման մասնակիցները արժևորել են Շահամիրյանների գործունեությունը, «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ»-ը (1772)՝ որպես հայ իրականության մեջ առաջին հրապարակախոսական տպագիր աշխատություն, «Որոգայթ փառաց» (1773) երկը՝ որպես 18-րդ դարի 2-րդ կեսի հայ լուսավորական մտքի և առաջադիմական գաղափարների արտահայտություն: Ներկայացվել է 16-17-րդ դդ. Հնդկաստանում հաստատված հայերի կյանքը, ընդգծվել է Մադրասի հայրենասիրական խմբակի և հայկական տպարանի նշանակությունը հնդկահայ հասարակական-քաղաքական-մշակութային կյանքում: Միջոցառումն ունեցել է կրթագիտական մեծ նշանակություն ուսանողների համար:

2015թ. հոկտեմբերի 5-8-ը Երևան քաղաքում կայացած բադմինթոնի՝ **Հայաստանի Հանրապետության մեծահասակների առաջնությունում**, որին մասնակցում էին Գյումրիի, Վանաձորի, Իջևանի և Երևանի տարբեր մարզադպրոցների մարզիկներ, Իջևան քաղաքը ներկայացրել են երեք մարզիկ, որոնցից երկուսը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից: ԵՊՀ ԻՄ-ից հաջող հանդես եկած «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության առաջին կուրսի ուսանողուհի Էմիլիա Փայտյանը զուգախաղերում գրավել է երկրորդ տեղը: Նա արժանացել է շքանշանի, պատվոգրի և դրամական պարգևի:

2015թ. հոկտեմբերի 10-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում տեղի է ունեցել Հոգեկան առողջության համաշխարհային օրվան նվիրված միջոցառում, որը նախաձեռնել ու կազմակերպել են մասնաճյուղի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, մանկ. գիտ. թեկն., դոցենտ Վաչիկ Բրուտյանը և ամբիոնի դասախոս Վիկտորյա Մելիքսեթյանը: Միջոցառմանը մասնակցել և զեկուցումներով հանդես են եկել բժշկ. գիտ. թեկնածու, ասիստենտ Վաչագան Սարգսյանը, Իջևանի բժշկական կենտրոնի հոգեբույժ Համլետ Հարությունյանը, ուսանողներ: ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ավանդույթ է դարձել մասնաճյուղում նշել Հոգեբանի միջազգային օրը, Սոցիալական մանկավարժի օրը, բացառություն չէ և Հոգեկան առողջության համաշխարհային օրը: Մասնակիցները ներկայացրել են զեկուցումներ՝ «Հոգեկան առողջությունը և նրա խանգարումները», «Հոգեմարմնական հիվանդություններ, հոգեմարմնական բժշկություն», «Հոգեկան հիվանդություններ» թեմաներով: Տեղի է ունեցել «10 ամենատարօրինակ հոգեկան խանգարումները» ֆիլմի ցուցադրությունը:

2015թ. հոկտեմբերի 20-29-ը Իջևան քաղաքի մարզադահլիճում կայացել է Իջևանի ուսումնական հաստատությունների՝ «Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյանի գավաթ» անունը կրող **ֆուտբոլային առաջնություն**, որը կազմակերպվել էր «ՆԻԿԱՐՄ» ակումբի կողմից: ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ֆուտբոլի հավաքականը կիսաեզրափակիչում հանդիպել է Իջևանի վարժարանի թիմի հետ և հաղթել, իսկ եզրափակիչում՝ Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջի հետ և դարձյալ հաղթանակ տարել: ԵՊՀ ԻՄ-ի հավաքականի տղաներն առաջին տեղը գրավելու կապակցությամբ պարգևատրվել են գավաթով, պատվոգրով և մեդալներով: Առաջնության լավագույն ռմբարկու և լավագույն պաշտպան են ճանաչվել մասնաճյուղի ուսանողները: Հուշանվերների է արժանացել թիմի մարզիչը, իսկ մասնաճյուղի տնօրենը ստացել է շնորհակալագիր:

2015թ. դեկտեմբերի 4-ին ԵՊՀ ԻՄ-ի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի կողմից կազմակերպվել է միջոցառում՝ նվիրված Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվան (դեկտեմբերի 3-ը 1992թ. ՄԱԿ-ի կողմից հռչակվել է որպես Հաշմանդամների միջազգային օր): Միջոցառման ընթացքում ներկայացվել է «Հաշմանդամության սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրները» թեմայով զեկուցում՝ անդրադառնալով «Հաշմանդամություն» հասկացությանը, նրա տեսակներին ու խնդիրներին, 2010թ. ՀՀ-ում ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի (2006թ.) վավերացմանը, ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց կրթության՝ ՀՀ Սահմանադրության 35-րդ հոդվածով ամրագրված իրավունքին և այլն: Ելույթ են ունեցել ուսանողներ, որոնք իրենց անունից ներկայացրել են հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրները, լիարժեք կերպով հասարակություն ինտեգրվելու պահանջը, բացահայտել իրենց մարդկային ազնիվ ձգտումներն ու գեղեցիկ երազանքները: Ապա ցուցադրվել է ներառական կրթությանը վերաբերող տեսանյութ: Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ Վ.Բրուտյանը ամփոփելով նշել է, որ մանակավարժի մասնագիտության համար առաջնային հատկանիշ հումանիզմն է՝ մարդասիրությունը, ներկաներին կոչ է արել սիրել մարդուն, իսկ ապագա մանկավարժներին՝ անսահման սիրել երեխաներին՝ անկախ նրանց մաշկի գույնից, բնավորությունից, ֆիզիկական և մտավոր կարողություններից, բարձրաձայնել է անձի՝ որպես բարձրագույն արժեքի գիտակցման գաղափարը:

2015թ. դեկտեմբերի 25-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում անգլերեն լեզվով կայացել է «Սուրբ Ծնունդ և Ամանոր (Christmas and New year)» թեմայով գրական-երաժշտական միջոցառում, որը կազմակերպել են Հումանիտար գիտությունների ֆակուլտետի օտար լեզուների ամբիոնի դասախոսներ Աստղիկ Սիմոնյանը, Շուշանիկ Գրիգորյանը, Իննեսա

Քոչարյանը: Ամանորյա միջոցառմանը մասնակցել են ուսանողներ, փոքրիկներ, հյուրեր:

Միջոցառման մասնակիցները ներկայացրել են Սուրբ Ծննդի և Ամանորի ավանդույթները աշխարհում, հանդես եկել Նոր տարվան և Սուրբ ծննդին նվիրված անհատական և խմբակային երգերով, բանաստեղծություններով, ներկայացրել են իրենց դասախոսի հետ համատեղ երգ, սոցիալական գովազդ և այլն:

2016թ. մարտի 9-ին համալսարանական աղջիկների ու կանանց տոնը շնորհավորելու

են եկել Իջևանում տեղակայված զորամասի մի խումբ զինվորներ՝ իրենց վերադասի գլխավորությամբ: Զորամասի նվագախմբի տղաները ուսանողուհիների ու աշխատակցուհիների տոնը շնորհավորել են ոգեշնչող ռազմահայրենասիրական երաժշտական հատվածներ կատարելով: Զորամասի զինվորները ծաղիկներ են նվիրել մասնաճյուղի ուսանողուհիներին՝ խոստանալով ամուր ու անսասան պահել հայրենի սահմանները: Հերթական անգամ Կանանց տոնին Իջևանի զորամասի զինվորների մատուցած անակնկալը բավականին գեղեցիկ էր:

2016թ. մարտի 19-ին Իջևանի թիվ 1 հիմնական դպրոցում Տավուշի մարզի միջազգային հայրենակցական միավորման կազմակերպմամբ անց է կացվել շախմատի **մարզային մրցաշար**: Տավուշի մարզում առաջին անգամ անցկացվող շախմատի՝ հիմնարկ-ձեռնարկությունների թիմային մրցաշարին մասնակցել են նաև մասնաճյուղի 4 ուսանողներ: ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի շախմատիստները, մրցաշարի կազմակերպիչների հավաստմամբ, ցուցադրել են բավականին հետաքրքիր ու դիտարժան խաղ՝ զբաղեցնելով 4-րդ հորիզոնականը:

Հայաստանում ֆրանկոֆոնիայի երկամյակի շրջանակում **2016թ. մարտի 26-ին** ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում տեղի է ունեցել միջոցառում՝ նվիրված ֆրանկոֆոն

ժողովուրդներին: Միջոցառմանը մասնակցել է ֆրանսիացի կամավոր Ժուլիեն Լըկուտուլիեն:

Ուսանողները ներկայացրել են, որ Իջևանը երկար տարիներ համարվում է ֆրանսախոս քաղաք, Իջևանը և Վալանսը քույր քաղաքներ են, պարբերաբար կազմակերպվող միջոցառումները և ուսանողների փոխանակման ծրագիրը նպաստում են ֆրանսերեն լեզվի ուսումնասիրմանն ու տարածմանը, երախտագիտությամբ հիշվել է բարերարների անունները, որոնց շնորհիվ կահավորվել է ֆրանսերենի լսարա նը: Ժուլիեն Լըկուտուլիեն ուշագրավ փաստերով ներկայացրել է ֆրանկոֆոնիանան ամբողջ աշխարհում, ֆրանսերեն լեզվի պատմությունը, նրա դերն ու կարևորությունը մեր օրերում: Խոսվել է «Հայ-ֆրանսիական բարեկամություն» կազմակերպության մասին, որը 2012 թվականից մասնաճյուղի ուսանողների կողքին է՝ կրթության ոլորտին վերաբերող իր ծրագրով: Այն ներառում է մի շարք դրույթներ՝ ուսանողների վերապատրաստում, վճարների փոխանցում, դպրոց-համալսարան կապի ամրապնդում, դասընթացների ու դասալսումների կազմակերպում, համապատասխան գրականության տրամադրում և այլն:

2016թ. ապրիլի 16-ին ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետում տեղի է ունեցել «Բարի գալուստ Իջևան» ֆիլմի դիտումը: Ֆիլմը ստեղծվել է «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի «Քաղաքացիական երկխոսություն և գործնական քայլեր փոփոխության համար» դրամաշնորհային ծրագրի իրականացման շրջանակներում, **<u>ուսանողական նախաձեռնող թիմի կողմից</u>**: «Նպատակ ենք ունեցել նկարահանել տեսանյութ, որտեղ կներկայացվի Իջևանն իր մարդկային ռեսուրսով, պատմամշակութային արժեքներով և բնությամբ, ինչի շնորհիվ կկարողանանք նաև նպաստել Իջևանում զբոսաշրջության զարգացմանը»,- նշել է ծրագրի պատասխանատու, մասնաճյուղի ուսանողուհի Սյուզաննա Պետրոսյանը:

2016թ. ապրիլի 18-ին «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի «Քաղաքացիական երկխոսություն և գործնական քայլեր փոփոխության համար» դրամաշնորհային ծրագրի իրականացման շրջանակներում ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետում **<u>ուսանողական նախաձեռնող թիմի կողմից</u>** կազմակերպվել է «Դպրոցում ձեռք բերած գիտելիքները բավարա՞ր են արդյոք բուհ ընդունվելու համար» թեմայով բանավեճ: Ծրագրի իրականացմանն աջակցել են մասնաճյուղի դասախոսներ, Հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Ա.Հասանյանը, Օտար լեզուների ամբիոնի դասախոս Շ.Գրիգորյանը, World Vision ՀԿ-ի ծրագրերի համակարգող Արարատ Ալիխանյանը: Անց են կացվել փոքրիկ սեմինար-քննարկումներ՝ բանավեճի արվեստին տիրապետելու, ճիշտ ձևով բանավիճելու հմտությունների ձևավորման վերաբերյալ: Ապա բանավեճ-մրցույթ է

անցկացվել ֆակուլտետների թիմերի միջև: Եզրափակիչ փուլ անցած թիմերը պարգևատրվել են պատվոգրերով, իսկ հաղթող թիմին տրվել է նաև նվեր:

2016թ. ապրիլի 22-ին ՀՀ ՊՆ Իջևանի զորամասի հրամանատարը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղին նվիրել է օդամղիչ համակարգով աշխատող ուսումնական զենք՝ մասնաճյուղի ուսանողների համար ուսումնավարժական պարապմունքներ կազմակերպելու, նրանց մարտական պատրաստվածությունը բարձրացնելու նպատակով: Մասնաճյուղի ուսանողները զորամասի աջակցությամբ անցնելու են կրակային պատրաստության դասընթացներ: Այդ դասընթացների արդյունքում լավ ցուցանիշներ հանդես բերած ուսանողները մասնակցելու են մարզի մասշտաբով անցկացվելիք համապատասխան մրցումներին: Բուհ-բանակ կապն առավել սերտացնելու, ուսանողների ռազմահայրենասիրական պատրաստականությունը բարձրացնելու նպատակով Իջևանի զորամասի և մասնաճյուղի կողմից պարբերաբար իրականացվում են համատեղ միջոցառումներ:

2016թ. ապրիլի 23-ին՝ Հայոց ցեղասպանության 101-րդ տարելիցին ընդառաջ, Իջևանում տեղի է ունեցել մոմավառություն ու ջահերով երթ՝ Իջևանի քաղաքային շատրվանների հրապարակից դեպի Ցեղասպանության զոհերի հուշահամալիր, որին մասնակցել են նաև ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողական կառույցների անդամներ, ուսանողներ, աշխատակիցներ: Իսկ նույն թվականի **ապրիլի 24-ին** մասնաճյուղի վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամները, ուսանողները շարժվել են դեպի Իջևանում տեղադրված՝ Հայոց ցեղասպության զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիր, ծաղիկներ ու ծաղկեպսակներ դրել հուշարձանին, հարգանքի տուրք մատուցել անմեղ զոհերի հիշատակին:

2016թ. ապրիլի 26-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կայացել է Հայոց ցեղասպանության 101-րդ տարելիցին նվիրված վոլեյբոլի **մարզային առաջնություն**: Առաջնությունը լայնամասշտաբ էր իր ընդգրկումով. Մասնակցել են Տավուշի մարզի ութ թիմեր: Այն նպատակ ուներ Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին նվիրված սպորտային միջոցառումով համախմբել ամբողջ մարզին, սպորտը մասսայականացնել շրջանում: Նման միջոցառումները միայն հիշելու խորհուրդ չունեն, այլ իրենց մեջ կրում են պայքարի և վերածնության գաղափարները, մեր համախմբման, հավաքական ուժի արտահայտությունն են: Խաղերն ընթացել են օլիմպիական ձևով: Աշխույժ ու գեղեցիկ խաղերի արդյունքում մրցաշարի հաղթող է դարձել մասնաճյուղի հավաքականը, հաղթող թիմերը պարգևատրվել են մեդալներով ու պատվոգրերով: Իսկ առաջին տեղը գրաված ԵՊՀ ԻՄ-ի թիմին հանձնվել է նաև փոխանցիկ գավաթը:

2016թ. մայիսի 8-ին՝ Շուշիի ազատագրման 24-րդ տարեդարձի և Երկրապահի օրվա առթիվ, համալսարանականներն այցելել են Իջևանի Ազատության հրապարակում գտնվող հուշարձան՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու զոհված ազատամարտիկներին, հարգելու նրանց հիշատակը: Իսկ **2016թ. մայիսի 9-ին**՝ Հայրենական մեծ պատերազմի

հաղթանակի 71-րդ տարեդարձին, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչները, ուսանողներն այցելել են Հայրենական մեծ պատերազմի հուշահամալիր՝ ծաղիկներ դրել հուշարձանին, 1 րոպե լռությամբ հարգել Հայրենական մեծ պատերազմի զոհերի հիշատակը:

2016թ. մայիսի 13-ին Նոյեմբերյանում տեղի է ունեցել զոհված ոստիկաններին նվիրված վոլեյբոլի հուշամրցաշար, որին մասնակցել են մարզի տարբեր կազմակերպությունների յոթ թիմեր, այդ թվում նաև ԵՊՀ ԻՄ-ի թիմը: Մասնաճյուղի հավաքականը գրավել է երրորդ տեղը և պարգևատրվել մեդալով, պատվոգրով և հուշանվերով:

2016թ. մայիսի 28-ին Իջևանում տեղի է ունեցել Հայաստանի առաջին հանրապետության օրվան նվիրված տոնական միջոցառում, որին ակտիվ մասնակցել են նաև մասնաճյուղի ուսանողները:

2016թ. հունիսի 4-ին ԵՊՀ ԻՄ-ի մի խումբ ուսանողներ, որոնք **<u>ՀԵՀ Տավուշի մարզային կենտրոնի կամավորներ են</u>**, կազմակերպել են հանրային ընթերցանություն: Ուսանողները երիտասարդական կենտրոնից իրենց սիրելի գրքերով շարժվել են դեպի Իջևանի բուսաբանական այգի: Ընթերցանության մասնակիցներից յուրաքանչյուրը ներկայացրել է իր նախասիրած գիրքը, հեղինակին և ստեղծագործությունը, այնուհետև հատվածներ կամ աֆորիզմներ ընթերցել և միասին քննարկել են դրանք: Երիտասարդները մի քանի ժամ կտրվել են վիրտուալ կյանքից, իրենց սիրելի ստեղծագործություններով կիսվել միմյանց հետ: Սա խթան է, որ նրանք ավելի շատ զբաղվեն ընթերցանությամբ և ուրիշներին էլ ներգրավեն դրա մեջ:

8. Գիտական խորհուրդ

2015-16 ուստարվա ընթացքում մասնաճյուղում սահմանված կարգով հրավիրվել են Գիտական խորհրդի նիստեր, որոնցում քննարկվել և կայացվել են մասնաճյուղի գործունեության համար կարևոր որոշումներ, որոնք վերաբերել են մասնաճյուղի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում փոփոխություններ կատարելուն: Ընթացիկ նիստերում հաստատվել են ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նոր կանոնակարգը և մասնաճյուղի ֆակուլտետների նոր կանոնադրությունները, կազմվել են ԵՊՀ ԻՄ-ի գերբի, դրոշի, օրհներգի և ոսկե մեդալի նախագծերն ու էսքիզները նախապատրաստող հանձնաժողովներ, որոնց աշխատանքներն ամփոփել են մասնաճյուղի գիտխորհրդի տարեվերջյան նիստում:

Մասնավորապես՝

- 2015թ. հոկտեմբերի 31-ի գիտական խորհրդի նիստում քննարկվել է ԵՊՀ ԻՄ-ի զարգացման 2016-2020թթ. ռազմավարական ծրագրի նախագիծը:

- 2015թ. դեկտեմբերի 17-ի՝ ԵՊՀ տարեվերջյան գիտխորհրդի նիստի օրակարգային ինը հարցերից վերջինը վերաբերել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղին, և տնօրեն Ս.Առաքելյանը ներկայացրել է մասնաճյուղի տարեկան գործունեության վերաբերյալ հաշվետվություն:
- 2015թ. դեկտեմբերի 26-ի Գիտական խորհրդի տարեվերջյան ընդլայնված նիստում հաշվետվություններ են ներկայացվել ԵՊՀ ԻՄ-ի՝ 2011-2015թթ. զարգացման ռազմավարական ծրագրի կատարման մասին, մասնաճյուղի՝ 2015թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) հունվար-դեկտեմբեր կատարողականի մասին, Մասնաճյուղի՝ 2014-15թթ. ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ:
- ԵՊՀ ԻՄ-ի՝ 2016թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվը (բյուջեն) ներկայացվել է հաստատման:
- Քննարկվել է ԵՊՀ ԻՄ-ի՝ 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը:
- Լսվել է մի քանի հանձնաժողովների հաշվետվությունները կատարած աշխատանքների վերաբերյալ.
    - ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում փոփոխություն կատարելու,
    - Մասնաճյուղում կառուցվածքային փոփոխություններ կատարելու,
    - ԵՊՀ ԻՄ-ի զինանշանի, դրոշի, օրհներգի և հուշամեդալի էսքիզների պատրաստման,
    - Մասնաճյուղի տնօրենության կանոնակարգում փոփոխություններ կատարելու:

Տարեվերջյան նիստում տարածաշրջանի հասարակության մտավոր, կրթագիտական, մշակութային առաջընթացին աջակցելու, ռազմահայրենասիրական ոգին բարձրացնելու գործում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հետ սերտ համագործակցելու համար **<u>շնորհակալագրերի են արժանացել</u>** ՀՀ ՊՆ № զորամասի հրամանատարի տեղակալ Հենրիկ Սահակյանը, Հայ Առաքելական եկեղեցու Տավուշի թեմի փոխառաջնորդ Հայր Սամվել Մխիթարյանը, Իջևանի ավագ դպրոցի տնօրեն Արմեն Խոջոյանը, ՀՀ ԱԱԾ Տավուշի մարզային վարչության պետի տեղակալ Հովսեփ Մովսեսյանը, «Առաջին լրատվական» ծառայության Տավուշի մարզի թղթակից Գայանե Թամամյանը: **<u>Շնորհակալագրեր են</u>** տրվել Իջևանի ավագ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտներ, մասնաճյուղի աշխատակիցների երեխաներ Արման Բայրամյանին և Անի Մարգարյանին՝ «Արմենիա» հեռուստաընկերության **«Ամենախելացի» հեռուստախաղում հաղթելու կապակցությամբ:**

2015-2016 ուստարում ԵՊՀ գիտական խորհրդում **<u>դոցենտի գիտական կոչում ստանալու</u>** համար երաշխավորելու և միջնորդելու մասին մասնաճյուղի գիտական խորհրդում երաշխավորվել են **2 դասախոսներ**.

1. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Հայոց պատմության և հասարակագիտության» ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Վարդան Արամայիսի Ալեքսանյանին (10.09.2016թ),
2. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Հայոց լեզվի և գրականության» ամբիոնի ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Գարիկ Մկրտչյանին (31.10.2015թ.):

2015-2016 ուստարում գիտական խորհրդում **հրատարակության են երաշխավորվել** ԵՊՀ ԻՄ-ի դասախոսների **7 աշխատություններ**.

Տնտեսագիտության ֆակուլտետի ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տնտեսագիտական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հարություն Ալեքսանի Մարզպանյանի, Ռ. Մարկոսյանի, Ն. Խաչատրյանի ‹‹Միգրացիայի ռիսկերը և մարդկային կապիտալի վերարտադրությունը›› համահեղինակային աշխատությունը (09.07.2016թ.),

1. Տնտեսագիտության ֆակուլտետի տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Վահագն Վարազդատի Գրիգորյանի և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրարային քաղաքականության և խորհրդատվության ամբիոնի վարիչ, տնտեսագիտական գիտությունների թեկնածու, դոցենտ Աշոտ Երջանիկի Ոսկանյանի ‹‹ՀՀ տնտեսական աշխարհագրություն›› ուսումնական ձեռնակը (09.07.2016թ.),
2. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ. Վարդան Արամայիսի Ալեքսանյանի ‹‹Հին Հունաստանի պատմություն›› ուսումնամեթոդական ձեռնարկը (27.05.2016թ),
3. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի օտար լեզուների ամբիոնի ասիստենտ Աիդա Մարդանյանի և ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ֆրանսիական բանասիրության ամբիոնի ասիստենտ բ.գ.թ. Զարուհի Առաքելյանի ‹‹Ֆրանսերենի դասավանդման մեթոդիկա›› մեթոդական ձեռնարկը (02.04.2016թ.),
4. Բնական գիտությունների ֆակուլտետի դեկան, ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.թ. Մանվել Զաքարյանի ‹‹Կոմպլեքս անալիզի խնդրագիրք›› ուսումնական ձեռնարկը (02.04.2016թ.),
5. Տնտեսագիտության ֆակուլտետի տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի դոցենտ Ակսել Հարությունի Պոտոսյանի ‹‹Զբոսաշրջության հիմունքներ›› ուսումնական ձեռնակը (19.02.2016թ),
6. Տնտեսագիտության ֆակուլտետի տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ Վահագն Գրիգորյանի ‹‹Տուրիզմի աշխարագրություն›› մեթոդական ցուցումների ժողովածուն (10.09.2015թ.):

2015-2016 ուստարում գիտական խորհրդում **քննարկվել են 13 իրավական ակտեր**.

1. ԵՊՀ ԻՄ ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգը (նոր խմբագրությամբ) հաստատելու մասին (27.05.2016թ.),
2. ԵՊՀ ԻՄ ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգը (նոր խմբագրությամբ) հաստատելու մասին (27.05.2016թ.),

3. ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը հաստատելու մասին (02.04.2016թ.),
4. ԵՊՀ ԻՄ-ի տնօրենության կանոնակարգում փոփոխություններ կատարելու մասին (26.12.2015թ.),
5. ԵՊՀ ԻՄ-ի ակադեմիական ազնվության կանոնակարգը հաստատելու մասին (26.12.2015թ.),
6. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2005թ.-ի մարտի 18-ին հաստատված «ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի կանոնակարգ»-ի ուժը կորցրած ճանաչելու և նոր կանոնակարգը հաստատելու մասին (31.10.2015թ.),
7. 2012թ.-ի փետրվարի 28-ի գիտխորհրդի նիստում հաստատված ԵՊՀ ԻՄ-ի ֆակուլտետների կանոնադրությունների ուժը կորցրած ճանաչելու և նոր կանոնադրությունները հաստատելու մասին (31.10.2015թ.),
8. ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին կից որակի կառավարման հանձնաժողովի կանոնակարգում փոփոխություններ կատարելու մասին (31.10.2015թ.),
9. ԵՊՀ ԻՄ-ի կառուցվածքային ստորաբաժանումներում գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի լիազոր-ներկայացուցչի գործառույթան կանոնակարգը հաստատելու մասին (31.10.2015թ.),
10. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ուսանողների գնահատման գործընթացի վերաբերյալ հարցման կանոնակարգը հաստատելու մասին (31.10.2015թ.),
11. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի աշխատողների անձնական տվյալների մշակման և պահպանման կարգ հաստատելու մասին (31.10.2015թ.),
12. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ընդունելության կազմակերպման վերաբերյալ կանոնակարգը հաստատելու մասին (31.10.2015թ.),
13. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի քաղաքացիական պաշտպանության շտաբի կանոնադրությունը հաստատելու մասին (31.10.2015թ.):

2016թ. հունվարի 21-25-ը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կայացել են ֆակուլտետների (Բնական, Հումանիտար գիտությունների, Տնտեսագիտության, Կիրառական արվեստի) գիտական խորհուրդների ընդլայնված նիստեր, որոնցում քննարկվել են ԵՊՀ ԻՄ-ի՝ 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի և նրա իրականացման ժամանակացույց-պլանի նախագծին վերաբերող հարցեր: Տնօրենը նշել է, որ նոր ռազմավարական ծրագրի համար հիմք է ընդունվել ԵՊՀ-ի ռազմավարական ծրագիրը, հաշվի են առնվել նախորդ ծրագրի բացթողումները և տարածաշրջանի ժողովրդագրական պատկերը: Մասնաճյուղն իր նոր ռազմավարությամբ պլանավորել է իր ուսումնագիտական նոր գործունեությունը՝ նպատակ ունենալով տրամադրել աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ, կառուցվածքային և բովանդակային վերափոխված կրթական ծրագրեր, ընդլայնել դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածությունը հետազոտական

աշխատանքներում, խթանել հասարակայնության հետ կապերն ու բարձրացնել սոցիալական պատասխանատվությունը, զարգացնել ու արդիականացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ լսարանային, լաբորատոր և գրադարանային պայմանները և այլն:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի՝ **2016թ. հուլիսի 9-ի** գիտական խորհրդի նիստին մասնակցել են ԵՊՀ-ի ռեկտոր Ա.Հ.Սիմոնյանը, ուսումնամեթոդական վարչության պետ

Հ.Ժամհարյանը, ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ռ.Մարկոսյանը, ռեկտորի աշխատակազմի ղեկավար Ա.Ղարիբյանը:

Նիստը վարել է Մայր բուհի ռեկտոր Ա.Սիմոնյանը:

Գիտխորհրդի նիստում քննարկվել են օրակարգով նախատեսված հետևյալ հարցերը.

1. Տեղեկատվություն 2016թ. ԵՊՀ ԻՄ-ի առկա ուսուցմամբ բակալավրիատի ընդունելության վիճակի մասին:
2. Հաշվետվություն ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման՝ 2016թ. հարցման արդյունքների մասին:
3. 2015-16 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների քննարկում:
4. ԵՊՀ ԻՄ-ի՝ 2017թ. ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկում (առաջարկություն ԵՊՀ-ի գիտական խորհրդին):

Օրակարգային հարցերի շուրջ զեկուցել է ԵՊՀ ԻՄ-ի գիտխորհրդի նախագահ, տնօրեն Ս. Ա. Առաքելյանը:

Ամփոփելով նիստը՝ ԵՊՀ-ի ռեկտոր պարոն Արամ Սիմոնյանն իր գոհունակությունն է արտահայտել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի զարգացման տեմպերից, ուղուց, ղեկավարությունից, կոլեկտիվից՝ բարեխղճորեն ու բարձր պատասխանատվությամբ իրականացվող աշխատանքի համար, հավաստել, որ Մայր բուհն այսուհետև էլ կշարունակի աջակցել մասնաճյուղին՝ իր մրցունակությունը պահելու, շարունակական առաջընթացի գործում:

2016-2017 ուստարում Հումանիտար գիտությունների ֆակուլտետի կառուցվածքում ներդրվող «Սոցիալական աշխատանք» և «Տարրական մանկավարժություն» կրթական ծրագրերի վերաբերյալ նշվել է, որ այդ երկու նոր մասնագիտությունները ԵՊՀ ԻՄ-ում ներդնելիս հաշվի են առնվել մասնագետների, արտաքին շահակիցների, մարզի կրթության ոլորտի պատասխանատուների կարծիքները ՀՀ-ի և հատկապես տարածաշրջանի աշխատաշուկայում դրանց ունեցած մեծ պահանջարկի վերաբերյալ: «Տարրական մանկավարժություն» մասնագիտության հետ կապված՝ մասնավորապես նշվել է, որ մարզի

տարրական դասարաններում առկա է դասավանդողների խիստ պակաս: «Սոցիալական աշխատանք» մասնագիտության կապակցությամբ ԵՊՀ ԻՄ-ի արտաքին շահակից, «ՍՕՍ» մանկական գյուղ «Իջևան» ծրագրի տնօրեն Սպարտակ Սարգսյանը նշել է, որ այսօր նկատելի է սոցիալական աշխատողի դերի բարձրացում: Իջևանում և հարակից գյուղերում ներկայումս կա 388 երեխա, 151 ընտանիք, որոնց հետ կատարվում է սոցիալական աշխատանք: Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարզին անհրաժեշտ են բազային կրթություն ունեցող որակյալ կադրեր սոցիալական աշխատանքի ոլորտում:

Վերջաբան

Մասնաճյուղը ԵՊՀ-ի անմիջական աջակցությամբ և իր գործունեությամբ նպաստում է տարածաշրջանի երիտասարդության կրթական կարիքների բավարարմանը և ձգտում իր ուրույն տեղն ապահովել բարձրագույն կրթություն իրականացնող կազմակերպությունների շարքում: Յուրաքանչյուր նոր ձեռքբերում ոգևորում ու հիմք է ծառայում հետագա գործունեության բարելավման և առավել արդյունավետ կազմակերպման համար:

Մենք հպարտանում ենք Մայր բուհի մասնաճյուղը լինելու համար, ուրախանում նրա ձեռքբերումներով՝ դրանք համարելով նաև մերը: Ուրախանում ենք Մայր բուհի հերթական հաղթանակով՝ բուհերի ազգային վարկանիշավորմամբ առաջինը լինելու համար:

Վարկանիշավորման նպատակն է բարձրացնել բուհերի միջև մրցակցությունը և դրանց հաշվետվողականությունը, ընդլայնել բուհերի մասին օբյեկտիվ տեղեկատվություն ստանալու հնարավորությունները, իրազեկել հասարակությանը կրթության որակի և կրթական գործընթացի արդյունավետության վերաբերյալ, ինչպես նաև բարձրացնել բարձրագույն կրթության ոլորտում քաղաքականության մշակման և որոշումների ընդունման արդյունավետությունը՝ նպաստելով բարձրագույն կրթության որակի բարձրացմանը:

Հայաստանյան բուհերը խմբավորված են երեք հիմնական չափանիշների հիման վրա: Դրանք են՝

1. Բուհում առկա կրթական ծրագրերը՝ բակալավրի, մագիստրոսի, հետբուհական:
2. Բուհում առկա մասնագիտական ոլորտների թիվը՝ մինչև երեք մասնագիտական ոլորտում կրթություն իրականացնող բուհեր և երեք ու ավելի մասնագիտական ոլորտներում կրթություն իրականացնող բուհեր:
3. Բուհում ուսանողների թիվը՝ փոքր՝ մինչև 4000 ուսանող, միջին՝ 4001-ից 10000 ուսանող, և մեծ՝ 10001 և ավելի:

Ըստ վերոնշյալ չափանիշների՝ բուհերի խմբավորման արդյունքում հայաստանյան բուհերը ներկայացվում են 6 տարբեր խմբերով: **«Երևանի պետական համալսարան» հիմնադրամն ընդգրկված է առաջին խմբում** (Երեք կրթական աստիճաններում և երեք ու ավելի մասնագիտական ոլորտներում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր), որում ընդգրկված են նաև Հայ-ռուսական սլավոնական համալսարանը, «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամը, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը և այլն:

7.43 վարկանիշային միավորով ԵՊՀ-ն գլխավորում է Հայաստանի առաջատար բուհերի աղյուսակը:



ԵՊՀ-ն առաջատար է դարձել տրված չափորոշիչներում ամենաբարձր վարկանիշային միավոր հավաքելու շնորհիվ, մասնավորապես՝ ըստ ուսումնառության արդյունքների (8.81), գիտահետազոտական աշխատանքի **(7.25)**, դասավանդման գործընթացի **(6.47)**, հաստատության կարողությունների **(9.30)** և հանրային կապերի **(7.51)**:

Հավելենք նաև, որ ԵՊՀ-ն Հայաստանի առաջատար բուհ է նաև ըստ միջազգային վարկանիշավորման կայքերի: Մասնավորապես, ըստ բուհերի ազգային վարկանիշավորման ռուսական համակարգի արդյունքների (որում ներառված են նաև ԱՊՀ երկրների, Վրաստանի և Բալթյան երկրների ավելի քան 400 համալսարաններ), ԵՊՀ-ն 11-րդ տեղն է զբաղեցնում և Հայաստանի առաջատար բուհն է:

«Վեբոմետրիքս» միջազգային վարկանիշային համակարգում ևս ԵՊՀ-ն Հայաստանի առաջատար բուհն է:

Համացանցում ներկայացվածությամբ բուհական վարկանիշավորում իրականացնող «Վեբոմետրիքսի» (www.webometrics.info)՝ վերջերս հրապարակած տվյալների համաձայն՝ ՀՀ-ում ամենաբարձր վարկանիշ ունեցող բուհը ևս ԵՊՀ-ն է: Ավելին՝ 2015 թ.-ի համեմատ՝ ԵՊՀ-ն իր դիրքերը բարելավել է շուրջ 200 հորիզոնականով՝ ավելի քան 23.000 համալսարանների մեջ 2510-ից հայտնվելով 2314-րդ տեղում:

Ընդհանուր առմամբ՝ ՀՀ-ից ցուցակում հայտնվել են 37 բուհ կամ կրթական ծառայություններ իրականացնող գիտական հիմնարկ:

Ստորև ներկայացնում ենք «Վեբոմետրիքսում» ընդգրկված հայաստանյան բուհերի առաջին տասնյակը՝

1. **Երևանի պետական համալսարան՝ 2314 (Եվրոպայում՝ 810-րդ՝ նախորդ տարվա 879-ի փոխարեն)**
2. Հայաստանի ամերիկյան համալարան՝ 3887
3. Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարան՝ 5355
4. Երևանի պետական բժշկական համալսարան՝ 9233
5. Հայկական պետական մանկավարժական համալսարան՝ 9864

6. Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարան՝ 10104
7. Հայաստանի ազգային ագրարային համալսարան՝ 10606
8. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան՝ 11199
9. Երևանի գեղարվեստի ակադեմիա՝ 11608
10. Հայաստանում ֆրանսիական համալսարան՝ 13327:

Armenia

ranking	World Rank	University	Det.	Presence Rank*	Impact Rank*	Openness Rank*	Excellence Rank*
1	2314	Yerevan State University		664	6196	1665	2213
2	3887	American University of Armenia		5603	6644	4197	3811
3	5355	Russian Armenian State University / Российско-Армянский Славянский университет		4909	9246	1981	4533
4	9233	Yerevan State Medical University		9481	10874	20724	3935
5	9864	Armenian State Pedagogical University		20926	6214	14565	5439
6	10104	Yerevan State Linguistic University		3587	11889	8290	5439
7	10606	Armenian National Agricultural University		897	15707	6371	4853
8	11199	Armenian State University of Economics		4411	13843	5255	5439
9	11608	Yerevan State Academy of Fine Arts		11613	10201	16501	5439
10	13327	Université Française en Arménie		13401	13509	11532	5439
11	13337	National Polytechnic University of Armenia		15535	13393	10042	5439
	14071	Eurasia International University		7069	15754	11630	5439

Բուհերի վարկանիշը ձևավորվում է տարբեր չափորոշիչներով, այդ թվում՝ կայքի ծավալների, գիտակրթական նյութերով հագեցվածության, արտաքին հղումների և միջազգային հեղինակավոր ամսագրերում հրատարակված աշխատությունների քանակի ցուցանիշների համադրմամբ: Նշված բոլոր չափորոշիչներով էլ ԵՊՀ-ն, նախորդ տարվա համեմատ, առաջընթաց է գրանցել:

Հավելված 1. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի՝ 2011-2015թթ. զարգացման ռազմավարական ծրագրի կատարողականը

Նպատակ / Խնդիր	Առաջնահերթություններ						Աջակցող նպատակներ						Ընթացիկ գերակայություններ				Ամփոփում	
	Նպատակ I		Նպատակ II		Նպատակ III		Նպատակ IV		Նպատակ V		Նպատակ VI		Նպատակ VII		Նպատակ VIII			
Խնդիր ա	1 2 3 4		1 2 3 4 5 6 7 8 9 10		1 2 3 4 5 6 7		1 2 3 4 5 6		1 2 3 4 5 6 7		1 2 3 4 5 6 7 8		1 2 3 4 5 7		1 2 3 4			
Խնդիր բ	1 2 3 4 5 6 7 8				1 2 3 4 5 6		1 2 3 4 5		1 2 3 4 5 6		1 2 3		1 2		1 2 3 4			
Խնդիր գ	1 2 3 4 5 6 7 8														1 2 3 4 5			
Խնդիր դ	1 2 3 4 5														1 2 3 4			
Խնդիր ե	1 2 3 4 5 6																	
Ընդամենը	5	31	1	10	2	12	2	11	2	13	2	11	2	9	4	17	20	114
լրիվ	23	74%	2	20%	6	50%	8	73%	10	77%	11	100%	7	78%	9	53%	76	67%
մասնակի	4	13%	4	40%			1	9%	2	8%	0		1	11%	3	18%	15	13%
չիրականացված	4	13%	4	40%	6	50%	2	18%	1	15%	0		1	11%	5	29%	23	20%

Հավելված 2. ԵՊՀ ԻՄ-ում նոր մասնագիտության և/կամ մասնագիտացման անհրաժեշտություն

/ըստ արտաքին շահակիցների շրջանում անցկացրած հարցումների առաջարկությունների/ 27.06.2015թ. դրությամբ

Թիվ	2011	2013	2014	2015
1	• սոցիալական աշխատանք, • հատուկ մանկավարժություն, • լոգոպեդիա • Սոցիոլոգիա	• մանկավարժություն և տարրական ուսուցման մեթոդիկա	սոցիալական աշխատող	• սոցիալական աշխատանք • հատուկ մանկավարժություն • լոգոպեդիա, • սուրդոմանկավարժություն • ներառական կրթության նեղ մասնագետներ, • սոցիալական մանկավարժություն • հոգեբան (ռազմական)
2	տարրական դասարանների ուսուցիչ	տարրական դասարանների ուսուցիչ		տարրական դասարանների ուսուցիչ
3	ռ.լեզու և գրականություն	ռ.լեզու և գրականություն	ռ.լեզու և գրականություն	ռ.լեզու և գրականություն
4		աշխարհագրություն	աշխարհագրություն	աշխարհագրություն
5		• Իրավաբանություն • իրավագիտություն • օրենք և իրավունք • միջազգային հարաբերություններ	• Իրավաբանություն, • իրավագիտություն	• իրավաբանություն • տնտեսագետ-իրավագետ • միջազգային հարաբերություններ,
6		• հաշվապահ-տնտեսագետ		• հանրային կառավարում, • մենեջմենթ • տնտեսագետ-մենեջմենթ
7		• քիմիա	• կենսաքիմիա, • քիմիա, • կենսաբանություն	դեղագիտություն
8		ծրագրավորում	Տեխնիկական կրթությամբ մասնագետներ	• ծրագրավորում • բժշկական կիբերնետիկա
9			շինարարական բաժին/ ընդերքօգտագործման ուղղություն	
10				ռազմական ամբիոնի ստեղծում
11				ոսկերչություն և արծաթագործություն
12				մատենագիտության բաժին/ գրադարանային գործ մասնագիտությամբ
13		• էկոլոգիա	• բնապահպանություն, • գյուղատնտեսական մասնագիտություններ	
14		թարգմանիչ		ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչ
		էթիկա և էսթետիկա		
		հնէաբանություն		
		երաժշտություն		